ԿՐՕՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

Ի.

# ՓՈՔՐԻԿՆԵՐԱՅ ԺԱՄԱԳԻՐՔԸ

(Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ)

[illegible]
[illegible]

ԿՐՕՆԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀՐԱՏ. ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

Դ.

# ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ԺԱՄԱԳԻՐՔԸ

(Զ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ)

1953

ՏՊԱՐԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆԹԻԼԻԱՍ-ԼԻԲԱՆԱՆ

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Զ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

*ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ ԺԱՄԱԳԻՐՔԸ վերջին անգամ տպագրուած էր 1946-ին (Ե. Տպագրութիւն) 5000 տպաքանակով:*

*Զ. Տպագրութեան կը ձեռնարկենք դա՛րձեալ 3000 տպաքանակով՝ ամէն կողմէ եղած պահանջքներու վրայ:*

*Ե. Տպագրութեամբ եղած փոփոխութիւնները կը պահենք նոյնութեամբ, անոնց գտած ընդունելութենէն քաջալերուած: Զ. Տպագրութեամբ կ'աւելցնենք հինգ Տաղաւարներու յատուկ մի քանի շարականներ միայն: Իսկ մանուկներու ընթերցանութիւնն ու երգեցողութիւնը դիւրացնելու համար սուղ վանկերը կը վերածենք լրիւ վանկերու՝ հո՛ն, ուր Ը-երը լրիւ կը հնչուին:*

ՏԵՍՈՒՉ ՏՊԱՐԱՆԻ

**ԳՆԷԼ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ**

# ՅՈՐԴՈՐ

Սիրելի՛ փոքրիկներ,

Դուք Եկեղեցի կու գաք, շապիկ կը հագնիք, ձեր հրեշտակային երգերով կ'ոգեւորէք ժամն ու պատարագը։

Օրհնեա՛լ ըլլաք դուք։

Սիրեցէ՛ք ձեր Մայրենի Եկեղեցին, լաւ ծառայելով Անոր, ձեր անսխալ և անսայթաք երգեցողութեամբ։

Ձեզի համար պատրաստուած է այս գրքոյկը, որպէս զի բառերը անսխալ արտասանէք և չսայթաքիք՝ մոռնալով բառերը կամ ցատկումներ ընելով։

Նայեցէ՛ք, ո՛րչափ սիրուն է այս ժամագիրքը. — ընտիր թուղթ, յստակ գիր, մաքուր տպագրութիւն, վայելուչ կազմ, գործածումը դիւրին. այնպէս որ միշտ կրնաք պահել զայն ձեր գրպանին կամ պայուսակին մէջ, և ատեն ատեն սերտել կտորները և անսխալ արտասանել բառերը և երգել։

## Քանի մը խրատներ ձեզի։

Ա.— Եկեղեցի եկէք ժամանակին, ձեր ձեռքերն ու երեսները լուացուած, մազերը սանտրուած, կօշիկները մաքուր։

Բ.— Դասի կամ ատեանի մէջ կենալ ուղիղ գծի վրայ. հաստատ կարգով։

Գ.— Չխօսիլ իրարու հետ, չծիծաղիլ, գլուխը և մարմինը չծամածռել, այդին անդին չնայիլ, բերնի մէջ ծամոց և ձեռքի մէջ ոեւէ խաղալիք չունենալ։

Դ.— Ուշադիր ըլլալ Դպրապետի շարժումներուն և պատկառանքով կատարել ձեր պարտականութիւնը։

Երբ պահէք այս խրատները եկեղեցւոյ մէջ, շատ կանոնաւոր և շատ ազդեցիկ կ՚ըլլայ ձեր երգեցողութիւնը։

Բարի՛ եղէք. սիրեցէ՛ք զիրար, և սիրով և ուրախութեամբ ծառայեցէք ձեր Մայրենի Եկեղեցւոյն։

Լեցուիք շնորհքով, փայլիք իմաստութեամբ ձեր անմեղ հասակին մէջ, աստուածային օրհնութեամբ։

Ձեր հայրիկը՝

**ԲԱԲԳԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ**

# ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. Ամէն:

*ՀԱՅՐ մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր:*

*Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց:*

*Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն:*

*Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. Ամէն:*

## ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈՅ

### Նախակատարումք

### Սաղմոս ՁԵ.

*Խոնարհեցո, Տէր, զունկն քո և լուր ինձ, զի աղքատ և տնանկ եմ ես։*

*Պահեա զանձն իմ սուրբ, Տէր, և փրկեա ըզծառայս քո, Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ։*

*Ողորմեա ինձ, Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ, ուրախ արա զանձն ծառայի քո, զի առ քեզ, Տէր, համբարձի զանձն իմ։*

*Զի դու, Տէր, քաղցր և ուղիղ ես, բազումողորմ առ ամենեսեան՝ որք կարդան առ քեզ։*

*Ունկն դիր, Տէր, աղօթից իմոց, և նայեա ի ձայն խնդրուածոց իմոց։*

*Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ քեզ, և լուար ինձ։*

*Ոչ ոք է նման քեզ յաստուածս, Տէր, և ոչ ոք է որպէս ըզգործս քո։*

*Զամենայն ազգս զոր արարեր՝ ե-*

կեսցեն և երկիր պագցեն առաջի քո, և փառաւոր արասցեն զանուն քո յաւիտեան։

Մեծ ես դու, Տէր, և առնես ըսքանչելիս, և դու միայն ես Աստուած։

Առաջնորդեա ինձ ի ճանապարհի քում, և գնացից ի ճշմարտութեան քում, և ուրախ եղիցի սիրտ իմ՝ երկնչել յանուանէ քումմէ։

Խոստովան եղէց առ քեզ, տէր Աստուած իմ, բոլորով սրտիւ իմով, փառաւոր արարից զանուն քո յաւիտեան։

Մեծ եղեւ ի վերայ իմ ողորմութիւն քո, Տէր, և փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ներքնոց։

Աստուած, անօրէնք յարեան ի վերայ իմ, և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ, և ոչ համարեցան ընդ քեզ Աստուած առաջի իւրեանց։

Այլ դու, տէր Աստուած իմ, գթած ես և ողորմած, երկայնամիտ՝ բազումողորմ և ճշմարիտ, նայեա առ իս և

ողորմեա ինձ։

Տուր զօրութիւն ծառայի քո, կեցո զորդի աղախնոյ քո, և արա առ իս նշան բարութեան։

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն, զի դու, Տէր, օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս։

Փառք Հօր և. Այժմ և միշտ և.

Մ—ղթ—ն+

Փառք քեզ Աստուած։

Ս—ղմ—ս ՃԼԹ.

Ապրեցո զիս, Տէր, ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փրկեա զիս։

Խորհեցան զանօրէնութիւն ի սիրտս իւրեանց, զօր ամենայն պատրաստեցան ի պատերազմ։

Սրեցին ըզլեզուս իւրեանց որպէս զօձի, և թոյնք իժից ի ներքոյ շրթանց նոցա։

Պահեա զիս, Տէր, ի ձեռաց մեղաւորի, և ի մարդոյ չարէ փրկեա զիս։

Խորհեցան խափանել ըզգնացս իմ,

Թաքուցին ամբարտաւանք որոգայթ ինձ։

Լարըս ձգեցին որոգայթ ոտից իմոց, շուրջ ըզշաւղօք իմովք եդին ինձ գայթակղութիւն։

Ասացի, թէ Աստուած իմ ես դու, ունկըն դիր, Տէր, ձայնի աղօթից իմոց։

Տէր, Տէր, զօրութիւն փրկութեան իմոյ, հովանի գլխոյ իմոյ յաւուր պատերազմի։

Մի՛ մատներ զիս, Տէր, ի ցանկութիւն մեղաւորաց, այլ խորհեցան վասն իմ՝ մի՛ ընդ վայր հարկաներ զիս։

Ձի մի՛ երբեք բարձրասցին, և խորհուրդք նոցա մի՛ կատարեսցին, վախճան կատարածի նոցա վաստակ շրթանց իւրեանց ծածկեսցէ զնոսա։

Արկցես ի վերայ նոցա ըզկայծակունըս հրոյ, և կործանեսցես զնոսա, ի տառապանաց մի՛ կարասցեն կեալ։

Մարդոյ լեզուանւոյ մի՛ յաջողեսցի ի վերայ երկրի․ զայր մեղաւոր չարիք իւր որսասցեն ի կորուստ։

Ծանեա զի առնես, Տէր, դատաս-տան աղքատի, և իրաւունս տնանկի։

Արդարք գոհասցին զանուանէ քում-մէ, և բնակեսցին ուղիղք առաջի երե-սաց քոց՝

Տէր, կարդացի առ քեզ և լուր ինձ, նայեա ի ձայն աղօթից իմոց ի կարդալ իմում առ քեզ։

Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո, Տէր, համբարձումըն ձեռաց իմոց պատարագ երեկոյի։

Դիր, Տէր, պահապան բերանոյ ի-մոյ, և դուռն ամուր շրթանց իմոց, զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարու-թեան։

Ի պատճառել ըզպատճառըս մեղաց ընդ մարդըս՝ որք գործեն զանօրէնու-թիւն, և ոչ եղէց կցորդ ընտրելոց նոցա։

Խրատեսցէ զիս արդարն ողորմու-թեամբ՝ և յանդիմանն արասցէ, իւղ մե-ղաւորի մի՛ օծցէ ըզգլուխ իմ, այլ ա-ղօթք իմ ի կամըս նոցա։

Արգելան մերձ առ վիմին դատա-

ւորք նոցա. լուիցեն բանից իմոց և քաղցրասցին։

Որպէս թանձրութիւն հողոյ զի սփռեալ է ի վերայ երկրի՝ ցրուեսցին ոսկերք նոցա մերձ ի դժոխս։

Առ քեզ, Տէր, Տէր, են աչք իմ, ի քեզ յուսացայ, մի՛ հաներ զհոգի յիմէնէ։

Պահեա զիս յորոգայթէ որ թաքուցին ինձ, ի գայթակղութենէ գործողին զանօրէնութիւն։

Անկցին ի ցանցս նոցա մեղաւորք, միայն եմ ես մինչև անցից։

Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի, ձայնիւ իմով զՏէր աղաչեցի։

Սփռեցից առաջի Տեառն զաղօթս իմ, և զնեղութիւնս իմ առաջի Նորա պատմեցից։

Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ, դու, Տէր, ծանեար զշաւիղս իմ, ի ճանապարհ յոր և գնայի՝ թաքուցին ինձ որոգայթ։

Հայէի յաջմէ և տեսանէի, և ոչ ոք

ճանաչէր զիս· կորեաւ յինէն փախուստ իմ, և ոչ գոյր խնդրող անձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ, Տէր, և ասացի, դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց։

Նայեա, Տէր, յաղօթս իմ, զի ես խոնարհ եղէ յոյժ, ապրեցո զիս ի հալածչաց իմոց՝ զի հզօրք եղեն քան զիս։

Տէր, հան ի բանտէ զանձն իմ, գոհանալ զանուանէ քումմէ։

Եւ քեզ սպասեն արդարք՝ մինչև հատուսցես։

Փառք Հօր և․ Այժմ և միշտ։

## Երգ

Ալէլուիա· Ալէլուիա։

Լոյս զուարթ սուրբ փառաց անմահի, Հօր երկնաւորի սրբոյ կենարարի Յիսուս Քրիստոս։

Եկեալքս ի մըտանել արեգականն, տեսաք զլոյս երեկոյին։ Օրհնեմք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին Աստուծոյ, և ամենեքեան ասեմք ամէն։ Արժա-

նաւորեա ըզմեզ յամենայն ժամ, օրհնել ձայնիւ երգով զանուն փառաց ամենասուրբ Երրորդութեանդ։ Որ տայ զկենդանութիւն վասն որոյ և աշխարհս ըզքեզ փառաւորէ։

Համբարձման Շարական, ԱԶ.

Սուրբ ես Տէր զօրութեանց, որ բնակեալդ ես ի յերկինս. և բարերանիս ի սրբոց քոց։

Երկնային զօրութիւնք, Սերովբէք և Քերովբէք, անդադար օրհնեն սուրբ զանուանդ քո։

Բազմաւորք, ընդ նոսին պաշտօնեայք և ժողովուրդք, երկրպագեսցուք Տէրութեանդ քո։

Լոյսդ որ յառաջ քան զյաւիտեանս ի Հօրէ առաքեցար, և լուսով իմանալեաւ լցեր զարարածս. օրհնեալ ես թագաւոր յաւիտենից։

Որ ըզլոյսն ի սկզբանէ հաստատեցեր վերստին, և զխաւարն անգիտութեան յարութեամբըդ քո հալածեցեր. օրհ.

Ուստի և մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն զուարթնոցն, երգեսցուք ցնծութեամբ ի յարութեան երեկոյին. օրհնեալ ես Թագա.

Երկնաքաղաքացին Յովհաննէս մեծն ի ծնունդըս կանանց, քարոզէր յանապատի ազդ արարող բարբառովն ըզծագումըն լուսոյ արեգականն արդարութեան։

Ճշմարիտ մարգարէ և ձեռնադրող Որդւոյն Աստուծոյ, յառաջընթաց կարապետ և պատմող աստուածային օրինացն, հորդէր ճանապարհս Թագաւորին յաւիտենից։

Յանօրէն գինարբուսըն մոլեգնեալ Հերովդիադայ, ի պարգեւի մասին խնդրէր ըզգլուխ մարգարէին. շիջուցանել զարուսեակն և զանաղօտ լապտերն։

Փառք Հօր և Որդւոյ և.

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ պարգեւեա երկրպագուացս ամենասուրբ Երրորդութեանդ՝ զյարութիւն լուսոյ կենացըն յաւիտենից։

Այժմ և միշտ և յաւի.

Զհաւատացեալ ժողովուրդըս սուրբ Երրորդութեանդ, և զապաւինեալս ի խորան փառաց քոց պահեա անխըռով ի խաղաղութեան։

Կամ Հայրապետաց տօնին. Որ ըզխորհուրդըս փրկականս աստուածգիտութեան՝ շնորհեցեր մեզ ի ձեռըն քահանայապետաց քոց և վկայից, սոցին աղաչանօք խընայեա ի մեզ։

Առաւօտեան տօնին Երկոտասանառաքելոցն և
[illegible]

Ի քէն հայցեմք բազումողորմ ի ձեռըն սրբոց քոց առաքելոցն. խընայեա, Տէր, ի յանձինըս մեր։

Զորս ընտրեցեր յառաջգիտութեամբ զարժանացելոցն անձինս, ըղպաւորեալ ի նոսա զՀոգի շնորհաց քոց, որով վառեալ հերքեցին զապստամբ զթշնամին. բարեխօսութեամբ սոցա խընայեա.

Որք ըզխաւարն անգիտութեան մերկացին յամենայն ազանց, զլուսաւորեալ զհեթանոսս, առաքելական կոչ-

մամբ ի յոյս կենացըն յաւիտենից· բար·

Վասն որոյ և մեք հաւատացեալքս կատարեսցուք ըզյիշատակ սրբոց առաքելոց· աղաչեմք ըզքեզ որ միայն գըթածդ ես, առատաձեռնեա ի մեզ ըզմեծ քո ողորմութիւնդ· Տէր, որ կեցուցանես զամենայն արարածս:

Փառք Հօր և Որդւոյ և·

Արդ աղաչեա մայր Աստուծոյ զծընեալն ի քէն վասըն մեր, զի ընդ նըմին պահելով, սուրբ յարութեամբ նորա նորոգեսցուք· առ նա միշտ բարեխօսեա կեցուցանել ըզմեզ:

Այժմ և միշտ և յաւի·

Այսօր ցնծան Առաքեալքն, զարդարեալք ի շնորհաց Հոգւոյն Սրբոյ· մեծացուցանելով զելողն ի Հօրէ:

Կամ. Եւ համբարձեալ ըզձայնըն Յուդայի խնդրելով ի Տեառնէ ըզտեսչալին ամենեցուն սուրբ ըզխաչն· և հաւատով գոչէր, եկայք երկրպագեսցուք աստուածային սուրբ նշանիս, մեծացուցանելով ըզծնեալն ի կուսէն:

## ԿԻՐԱԿԻ ԱՌԱՒՏՈՒ

Ներսէս Շնորհալի Հայրապետին Երգերը

Յիշեսցուք ի գիշերի զանուն քո Տէր։

Բղխեսցեն սիրտք մեր զբան բարի․ և լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր Թագաւորին։

Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք ըզքեզ Տէր։

Զաղօթս մեր տացուք քեզ, Տէր, ի գաւիթըս քո ի մէջ նոր Երուսաղէմի։

Ի գիշերի համբարձուք ըզձեռըս մեր սրբութեամբ առ քեզ, Տէր։

Ի ձայն գոհութեան ամենայն հոգիք օրհնեցէք ըզՏէր։

Փ. Զարթիք փառք իմ, զարթիք, և ես զարթեայց առաւօտուց․ ալէլուիա։

Զարթիք ընդ զըւարթունս, մանկունք վերինըն Սիոնի․ ալէ․

Զարթիք որդիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրըն լուսոյ․ ալէ․

Զարթիք փրկեալք արեամբ․ և

տուք ըզփառըս փրկողին. ալէ.

Զարթիք նոր ժողովուրդք, նոր երգս տալով նո՛րոգողին. ալէ.

Զարթիք հարսունք հոգւով, սպասեալք գալոյ սուրբ փեսային. ալէ.

Զարթիք վառեալք լուսով ըստ իմաստուն սուրբ կուսանացն. ալէ.

Զարթիք պատրաստեցէք ձեզ լապտերաց զջերմ արտասուս. ալէ.

Զարթիք և մի՛ ննջէք, ըզման յիմար կուսից նիրհէք. ալէ.

Զարթիք երկիր պագցուք և արտասուօք զայս ասասցուք. ալէլուիա։

Փ. Զարթիր, ընդէ՞ր ննջես, Տէր, մի՛ մերժեր ըզմեզ իսպառ։

Արի, Տէր, օգնեա մեզ. տացուք անուանըդ քում ըզփառս։

Այժմ և յաւէտ. Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն. ամէն։

Փ. Զարթուցեալքս ի զբաղմանէ գիշերային հանգստենէ։

Շնորհեսցէ մեզ մարդասէր Տէր մխի-

Թարութիւն և ի սփոփանս եկեղեցւոյ։

Ահիւ և թալութեամբ կացցուք ի յաղօթս։

Եկեալ խոստովանեսցուք ըզյանցանս։

Եւ գտցուք ի Քրիստոսէ ըզքաւութիւն և ըզմեծ զողորմութիւն։

Յաւիտեանս յաւիտենից

Ամէն․ ալէլուիա․ ալէ․ ալէ․

Ամէն․ ալէլուիա․ ալէ․ ալէ․

---

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա։
Բղխումն ի Հօրէ,
Բղխեա ի հոգւոյս
Բան քեզ ի հաճոյս։

Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գըտող զիս արա։
Դուռն ողորմութեան,
Դաւանողիս բաց,
Դասեցո վերնոց։

Երրեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա։
  Զարթիր, Տէր, յօգնել,
  Զարթօ ըզթըմրեալս,
  Զուարթնոց նմանիլ։

Էդ Հայր անըսկիզբն,
Էակից Որդի,
Է միշտ Սուրբ Հոգի։
  Ընկալ զիս գըթած,
  Ընկալ ողորմած,
  Ընկալ մարդասէր։

Թագաւոր փառաց,
Թողութեանց տըւող,
Թող ինձ ըզյանցանս։
  Ժողովող բարեաց,
  Ժողովեա և զիս
  Ժողովս անդրանկաց։

Ի քէն Տէր հայցեմ
Ի մարդասիրէդ
Ինձ բըժըշկութիւն։

*Լեր կեանք մեռելոյս,*
*Լոյս խաւարելոյս*
*Լուծանող ցաւոյս։*

*Խորհրդոց գիտող,*
*Խաւարիս շնորհեա*
*Խորհուրդ լուսաւոր։*
*Ծընունդ Հօր ծոցոյ,*
*Ծածկելոյս ստուերաւ*
*Ծագեա զլոյս փառաց։*

*Կենարար Փրկիչ,*
*Կեցո ըզմեռեալս,*
*Կանգնեա զգըլորեալս։*
*Հաստեա հաւատով,*
*Հաստատեա յուսով,*
*Հիմնեցո սիրով։*

*Ձայնիւս աղաչեմ,*
*Ձեռօքս պաղատիմ,*
*Ձիր բարեաց շնորհեա։*
*Ղամբարամբ լուսոյ,*
*Ղեկավար ճարտար,*
*Ղօղեալս ամբարցո։*

Ճառագայթ փառաց,
Ճանապարհ ինձ ցոյց
Ճեպել ի յերկինս։
Միածինըդ Հօր,
Մոյծ զիս յառագաստ
Մաքուր հարսանեացդ։

Յորժամ գաս փառօք,
Յահագին աւուրն,
Յիշեա զիս Քրիստոս։
Նորոգող հնութեանց,
Նորոգեա և զիս,
Նորոգ զարդարեա։

Շնորհատու բարեաց,
Շնորհեա զքաւութիւն,
Շնորհեա զթողութիւն։
Ուրախացո Տէր,
Ողւոյս փրկութեամբ,
Որ վասն իմ ի սուգ։

Զոր մըշակողին
Զոր սերմանց նորին
Զորացո զպըտուղն։

Պարգեւիչ բարեաց,
Պարգեւեա ինձ
Պարտեացս թողութիւն։

Ջուր շնորհեա աչացս,
Ջերմ հեղուլ զարտօսր,
Ջընջել ըզյանցանս։
Ռետինըդ քաղցու,
Ռամ հոգւոյս արբո,
Ռահ ցոյց ինձ լուսոյ։

Սէր անուն Յիսուս,
Սիրով քով ճըմլեա
Սիրտ իմ քարեղէն։
Վասըն գըթութեան,
Վասն ողորմութեան,
Վերըստին կեցո։

Տենչալւոյդ տեսլեամբ
Տուր ինձ յագենալ
Տէր Յիսուս Քրիստոս։
Րաբունդ երկնաւոր,
Րաբեա զաշակերտս
Րամից երկնայնոց։

Ցօղ արեան քո, Տէր,
Ցօղեա ի հոգիս,
Ցընծասցէ անձն իմ։
Հիւծեալս մեղօք
Հիւծեալ աղաչեմ
Հիւսել ինձ բարիս։

Փրկիչ բոլորից,
Փութա գիս փրկել
Փորձութեանց մեղաց։
Քաւիչ յանցանաց,
Քաւեա զօրհնաբանս
Քեզ երգել ըզփառս։

Սրբուհւոյ Աստուածածնին բարե-
խօսութեամբ,
Յիշեա Տէր և ողորմեա։

Աշխարհ ամենայն,
Առ քո նայեցեալ
Ախտակից լերուք։
Յանամ ըզշրթունս,
Յարբատիմ լեզուաւս,
Յողոքեմ զանձնէս։
Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ.
Գող եղէ մեղաց,
Գըտող կորստեան,
Գուբ ինձ փորեցի։
Գուեցի զանձն իմ,
Գուածանեցի,
Գարան գործեցի։ Տէր ողորմ.

Երբեմն էի լոյս,
Եւ այժմ եմ խաւար
Եւ ըստուեր մահու։
Զիա՛րդ պատմեցից
Զթիւ մեղաց իմոց,
Զի բազում են յոյժ։ Տէր ողորմ.

Երկինք և երկիր,
Էկայք ողբացէք,
Էղկելի զանձն իմ։

Ընտրեցի ըղձարն,
Ընկալայ կամաւ,
Ըղձոյլըս մեղաց։ Տէր ողորմ.

Թաթաւեիմ տղմով,
Թաւալիմ ի մեղս,
Թօթափիլ չկարեմ։
Ժանտ ախտիւ լըցեալ,
Ժահահոտ եղէ,
Ժամանակս բազումս։ Տէր ողորմ.

Ի բաց մեկնեցայ,
Ի սուրբ խորհրդոց,
Ի բարեաց գործոց։
Լաւ վարկաւ անձն իմ,
Լուսոյն հեռանալ,
Լինել ընդ խաւար։ Տէր ողորմ.

Խորհուրդըք չարին,
Խաբեն ըղձողիս,
Խորասոյզ առնեն։
Ծածկեն անդնդօք,
Ծիծաղին զկորմամբս,
Ծանակ զիս առնեն։ Տէր ողորմ.

Կամաւ կարացայ,
Կարկամեալ անձամբս,
Կանգնիլ ոչ կարեմ։
Հուր մեղաց կիզող,
Հրդեհեաց որ յիս,
Հոգեւոր բարիս։ Տէր ողորմ.

Ձաղկեցայ մեղօք,
Ձաղեցին տեսողք,
Ձանձրացաւ հոգիս։
Ղեղի դառնութեան,
Ղօղեալ ի սիրտ իմ,
Ղամբար իմ շիջաւ։ Տէր ողորմ.

Ճաշակմամբ մեղաց
Ճաշեցի ըզմահ,
Ճոխս աղքատացայ։
Մեռեալ եմ հոգւովս,
Մոլորեալ մըտօքս,
Միայն կամ մարմնովս։ Տէր ողորմ.

Յորդայթ մահու
Յարաողին անկայ,
Յաղթեցայ յախտից։

Նետից թշնամւոյն
Նըշաւակ եղէ,
Նոր մինչ խոցոտիմ։ Տէր ողորմ.

Շուրջ պատեալ զինեւ
Շունք բազումք եղեն,
Շաղախին արեամբս։
Որս եղէ չարին,
Ուռկանաւ մեղաց
Որսացաւ զանձն իմ։ Տէր ողորմ.

Չարաչար վըշտօք
Չարչարի անձն իմ,
Չունիմ դադարումն։
Պարտական գըտայ,
Պարտուց յանցանաց,
Պարտեալս ի մեղաց։ Տէր ողորմ.

Ջանամ զղջանալ,
Ջեռանիմ դարձեալ,
Ջեռնում հրով մեղաց։
Ռաբբի կոչեցայ,
Ռակայ անուանիմ,
Ռամկական վարուքս։ Տէր ողորմ.

Սիրով ցանկութեան,
Սաստիկ բարկութեան,
Սիրտ իմ խոցեալ է։
Վիրօք յանցանաց
Վըշտանայ հոգիս,
Վարանեալ շըրջիմ։ Տէր ողորմ.

Տիրեցին ինձ չարք,
Տարագիր հանին
Տիրական գըրկայն։
Բաբունեայն բարուայ
Բաղձական ձայնին
Բանին ոչ լուայ։ Տէր ողորմ.

Ցանկութիւն չարեաց
Ցանկալի դիմօք
Ցուեցոյց զաչս իմ։
Իւրաքանչիւրոց
Իւսմամբ խուան ախտից
Իւծեալ է հոգիս։ Տէր ողորմ.

Փութացիր անձն իմ,
Փախչիլ ի չարեաց,
Փափաքիլ բարեաց։

Քեզ միշտ մերձ ծանիր
Քուն մահու եկեալ,
Քննող պատուոր։ Տէր ողորմ.
Սրբուհւոյ Աստուածածնին բարե-
խօսութեամբ,
Յիշեա Տէր և ողորմեա։

---

## ՔԱՐՈԶ

Եր–ձէ–ւ եւ Իբրէ– կանոնացն:

ԲԿ. ԳԿ.

Սրկ. *Եւ եւս խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք։*

Դպ. Տէր ողորմեա:

Սրկ. *Վասն ի վերուստ խաղաղութեան՝ և փրկութեան անձանց մերոց, ըզՏէր աղաչեսցուք։*

Դպ. Տէր ողորմեա:

Սրկ. *Վասըն լըսելի լինելոյ տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց, ըզՏէր աղաչեսցուք։*

*Վասըն քաւիչ և ներող լինելոյ Աս–*

տուծոյ ի վերայ մեղաց մերոց, ըզՏէր աղա։

Վասըն թողլոյ մեզ զամենայն յանցանըս մեր, ըզկամայ և զակամայ, ըզՏէր աղա։

Վասըն զի մի՛ ընդ խոտանելըն գտանիցիմք յաւուրըն պատասխանատուութեան, ըզՏէր աղա։

Վասն հոգւոցըն հանգուցելոց՝ որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին, ըզՏէր աղա։

Դպ. Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա:

Եւ եւս միաբան վասըն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, ըզՏէր աղա։

Դպ. Տէր ողորմեա:

Զանձինըս մեր և ըզմիմեանըս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։

Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Դպ. Տէր ողորմ, Տէր ողորմ. Տէր ողորմ:

## ՔԱՐՈԶ

Երկինք գոչեն եւ Տէր ողորմեա կանոնաց:

ԱՁ. ԳՁ.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Վասն ի գիշերի և ի տուընջեան, և յամենայն ժամու խօսիլ մեզ զբան Տեառն, զՏէր աղաչեսցուք:

Վասըն չանկանելոյ մեզ ի փորձութիւն, որում ոչ կարեմք հանդուրժել, զՏէր աղօ:

Վասն անբիծ և անդատապարտ կալոյ մեզ առաջի ահեղ ատենին Քրիստոսի, զՏէր աղօ:

Վասն առաջնորդելոյ մեզ ի նաւահանգիստըն կենաց անվախճանից, զՏէր աղօ:

Վասն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն և երկնից արքայութեան, զՏէր աղօ:

*Վասն հոգւոցըն...* (Տե՛ս էջ 35)։
*Եւ երբ միաբան...*
*Զանձինս մեր...*
*Ողորմեաց մեզ....։*

**ՔԱՐՈԶ**

Մէ՛ նախանձէր, եւ Խոստովան կանոնացն:

Ա.Կ. Գ.Կ.

*Եւ երբ խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք։*

*Վասն ուղղելոյ ըզգնացըս մեր ի ճանապարհս խաղաղութեան, ըզՏէր աղաչեսցուք։*

*Վասըն ցըրելոյ ի մէնջ զամենայն խորհուրդըս չարին, ըզՏէր աղա։*

*Վասըն պարգեւելոյ մեզ առողջ խորհուրդս և առաքինի վարս, ըզՏէր աղա։*

*Վասըն պահելոյ ըզմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ, ըզՏէր աղա։*

*Վասն խորտակելոյ զհակառակորդըն վաղվաղակի ընդ ոտիւք մերովք, ըզՏէր աղա:*

*Վասն հոգւոցըն...* (Տե՛ս էջ 35):
*Եւ ևս միաբան...*
*Զանձինս մեր...*
*Ողորմեաց մեզ...:*

## ՔԱՐՈԶ

Ողորմեա, եւ Ի նեղութեան կանոնացն:

ԲՁ. ԴՁ.

*Եւ ևս խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք:*

*Վասն գըտանելոյ մեզ ըզշնորհս և զողորմութիւն ի բարերար Տեառնէ մերմէ, ըզՏէր աղաչեսցուք:*

*Վասն փրկելոյ ըզմեզ ի դըժուարութենէ մարդկան և յորոգայթից սատանայի, ըզՏէր աղա:*

*Վասն ամենայն անձանց քրիստո-*

նէից և տանց հաւատացելոց, ըզՏէր աղա։

Վասն որք ի լերինս, յայրս և ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր, ըզՏէր աղա։

Վասն որք սաղմոսիւք և օրհնութեամբ կատարեն զամենայն ժամանակս կենաց իւրեանց, ըզՏէր աղա։

Վասն հոգւոցն... (Տե՛ս էջ 35)։

Եւ եւս միաբան...

Զանձինս մեր...

Ողորմեաց մեզ...։

## ԱԼԷԼՈՒՔ

### Յարութեանն Քրիստոսի

ԱՁ.

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։

Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր. և բանիւ Տեառն երկինք հաստատեցան։ Եւ հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։

*Ալէ։ Յարեաւ Աստուած և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա։ Փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա։*

*Փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։*

Տէրունական տօներուն երբ ձայնը աձ է, ինչպէս նաեւ Հայրապետներուն իր օրերուն, ի՛նչ ալ ըլլայ ձայնը՝ Ըսէ Դասքը

*Դասք հրեշտակաց օրհնեն ըզքեզ Քրիստոս, ալէլուիա. մարդկան ազգ սաղմոսեն քեզ. ալէլուիա, ալէլուիա։*

ԱԿ.

*Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։*

*Ծափս հարէք ամենայն հեթանոսք. աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան։ Տէր բարձրեալ և ահարկու. թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի։*

*Ալէ։ Հաճեցար Տէր ընդ երկիր քո. և դարձուցեր ըզգերութիւն Յակոբայ։ Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո. և ծածկեցեր զամենայն մեղս նոցա։*

փառք և երկրպագութիւն... (Տէ՛ս էջ 39)։ (Առ՝ ց Դասմէ՝ չէլ)։

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։

ԲՁ.

Յարեաւ Աստուած և ցրուեցան ամենայն թշնամիք նորա։ փախեան ատելիք նորա յերեսաց նորա։

Ալէ։ Տէր թագաւորեաց, զվայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած։

ԲԿ.

Հաճեցար Տէր ընդ երկիր քո. և դարձուցեր զգերութիւն Յակոբայ։ Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան քո. և ծածկեցեր զամենայն մեղս նոցա։

Ալէ։ Օրհնեցէք մանկունք զՏէր. և օրհնեցէք զանունըն Տեառն։ Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչև յաւիտեան։

Գ.Ձ.

Տէր թագաւորեաց, զվայելչութիւն ըզգեցաւ․ զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած։

Այլ։ Գովեա Երուսաղէմ ըզՏէր․ և օրհնեա զԱստուած քո Սիոն։ Զի զօրացոյց ըզնիգս դրանց քոց․ և օրհնեաց զորդիս քո ի քեզ։

Գ.Կ.

Օրհնեցէք մանկունք ըզՏէր․ և օրհնեցէք զանունըն Տեառն։ Եղիցի անուն Տեառն օրհնեալ․ յայսմհետէ մինչև յաւիտեան։

Այլ։ Կենդանի է Տէր, և օրհնեալ է Աստուած․ և բարձր եղիցի Աստուած փրկութեան իմոյ։ Աստուած է որ խընդրէ զվրէժ իմ․ և հնազանդ առնէ զժողովուրդս ընդ ինև։

Գ.Ձ.

Գովեա Երուսաղէմ ըզՏէր․ և օրհ-

նեա զԱստուած քո Սիոն: Զի զօրացոյց
ըզնիգս դրանց քոց· և օրհնեաց զորդիս
քո ի քեզ:

Ալէ: Ողորմութեամբ Տեառն լի ե-
ղեւ երկիր. և բանիւ Տեառն երկինք
հաստատեցան: Եւ հոգւով բերանոյ նո-
րա ամենայն զօրութիւնք նոցա:

ԳԿ.

Կենդանի է Տէր և օրհնեալ է Աս-
տուած. և բարձր եղիցի Աստուած փըր-
կութեան իմոյ: Աստուած է որ խնդրէ
զվրէժ իմ· և հնազանդ առնէ զժողո-
վուրդս ընդ ինեւ:

Ալէ: Ծափս հարէք ամենայն հեթա-
նոսք· աղաղակեցէք առ Աստուած ի
ձայն ցնծութեան: Տէր բարձրեալ և
ահարկու թագաւոր մեծ ի վերայ ամե-
նայն երկրի:

Փառք և երկրպագութիւն Հօր և
Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ· այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից· ամէն:

Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

## ԿԱՐԳ ԽԻՂՃԱՀԱՐԻՑ

Քարոզ

Սրկ. *Եւ եւս խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք:*

Դպ. Տէր ողորմեա:

*Վասն սուրբ տեղւոյս շինութեան, և բարեկարգութեան, ըզՏէր աղա:*

Դպ. Տէր ողորմեա:

*Վասն ժողովրդեանս, որք մըտանեն ընդ դրունս սրբոյ Եկեղեցւոյ, ըզՏէր աղաչեսցուք:*

Դպ. Տէր ողորմեա:

*Վասն ընդունելոյ զպատարագս սոցա ըստ մեծի ողորմութեան իւրում, ըզՏէր աղաչեսցուք:*

Դպ. Տէր ողորմեա:

*Եւ եւս միաբան վասն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, ըզՏէր աղա:*

Դպ. Տէր ողորմեա:

*Զանձինս մեր և ըզմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:*

Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

*Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում, ասացուք ամենեքեան միաբանութեամբ:*

Դպ. Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Աղօթք

*Դու ես Թագաւոր յաւիտեանս.*

Երգ Աւետարանին ձայն

*Եղիցի անուն Տեառն օրհնեալ, ի յայսմհետէ մինչեւ ի յաւիտեան:*

*Օրհնեցէք մանկունք զՏէր, և օրհնեցէք զանուն Տեառն: Եղիցի անուն Տեառն օրհնեալ. յայսմհետէ մինչեւ ի յաւիտեան: Յարեւելից մինչ ի մուտս արեւու օրհնեալ է անուն Տեառն. ի յայսմհետէ մինչեւ՝ ի յաւիտեան:*

*Փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն. և այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն. ի յայսմհետէ մինչեւ ի յաւիտեան:*

*Արի, Տէ՛ր, օգնեա՛ մեզ․ և փրկեա՛ ըզմեզ․ վասն անուան քո։*

*Արի և մի՛ մերժեր ըզմեզ իսպառ․ վասն անուան քո։*

*Թագաւորեսցէ Տէր յաւիտեան՝ Աստուած քո, Սիոն, յազգէ յազգ։*

*Օրհնեա անձն իմ ըզՏէր․ օրհնեցից ըզՏէր ի կենդանութեան իմոյ։*

Սրկ. *Օրթի։*

Քհնյ. *Խաղաղութիւն ամենեցուն։*

Դպ. *Եւ ընդ հոգւոյդ քում։*

Սրկ. *Երկիւղածութեամբ լուարուք։*

Քհնյ. *Սրբոյ Աւետարանիս․*

Դպ. *Փառք քեզ Տէր Աստուած մեր։*

Սրկ. *Պռօսխումէ։*

Դպ. *Ասէ Աստուած։*

Քահանան կը կարդայ օրուան պատշաճ Աւետարանը։

Ետք Աւետարանէն երգ

*Փա՛ռք յարութեան քո Տէր․ ոչ դադարեցայց Քրիստոս օրհնել ըզքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ։*

Փա՛ռք յարութեան քո Տէր. ոչ դադարեցայց Յիսուս գովել ըզքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ։

Եւ ոչ դադարեցայց Փրկիչ, փառաւորել ըզքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ։

### Զատիկ և Յարութեան Կիրակիներուն

Լուսապայծառ հրեշտակըն նստեալ ի կենդանատու գերեզմանին։ Եւ աւետէր կանանցն, յարեաւ Աստուած։

Դպրապետներ ամէն տօնի յատուկ երգեր կը գտնեն Լուսապայծառի տեղ կ'երգեն, որոնք են.—

### Ծաղկազարդ

Դասք լուսեղէն զուարթնոցն ապաշէին մեծի գալըստեանն Տեառն։

Եւ երգէին երգ նոր. օրհնեալ է քո սուրբ գալուստդ։

### Համբարձման

Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր։ Եւ գայ մտանէ փառօք ի փառս։

### Հոգւոյ գալստեան

Իջեալ Հոգին յառաքեալսն, և հրագինեաց զընտրեալսն անկէզ ի սուրբ վերնատունն։ Եւ հանդեաւ նորօք յազգս մարդկան զանազան լեզուաց բաժանմամբ։

### Վարդավառ

Ցնծայ Թաբոր Հերմոնիւ. և առաքեալքն ի հայրական ձայնէն թմբրեալք։ Եւ կենդանեաց և մեռելոց Տէր ծանուցին զքեզ Մովսէս և Եղիաս։

### Խաչ

Այսօր ելեալ կամաւ Տէրն ի խաչ։
Եւ տարածեաց զբազուկս իւր ի նմա։

### Ծննդեան

Հայրք հոգեկիրք ընդ հովիւսն քարոզէին ի յանբանից մսուր զԲանն բազմեալ։

Եւ մոգքն աստեղբն գուշակեալ՝ մատուցին զընծայս խորհրդոյ։

### Տեառնընդառաջ

Քառասնօրեայ այսօր և Տէրն օրի- նադիր անօրինաբար եկն ի տաճարն։ Եւ Սիմէոն գգուէր գրկօքն. և յօրինաց կապից լուծումն հայցէր ի կեանս Աւե- տարանի։

**Երգ ԱՆԾ Փոխէի Կիրակինեռուն**

[illegible]

[illegible]

Զամենայն աւուրըս կենաց իմոց, ես ոչ դադարեցայց օրհնել ըզքեզ Քրիստոս, փրկիչդ աշխարհի։

Թէ— առէք ի գիշերի համբարձէք ըզձեռս ձեր ի սրբութիւն, և օրհնեցէք ըզՏէր։

Աստ օրհնեցէք ամենայն ծառայք Տեառն ըզՏէր ի սրբութիւն. և օրհնե- ցէք ըզՏէր։

Քարոզ

Զուարճացեալքըն մեծաւ ուրախու- թեամբ աւետեօք յարութեան Տեառն

մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Որ եղեւ պտուղ և անդրանիկ ամենայն ննջեցելոց, խորտակեաց ըզդրունս դըժոխոց, և էլոյծ ըզլունութիւն մահու, և ետ յոյս. հաստատութեան վերստին նորոգման կենդանութեան ամենայն մարդկան։

Խնդրեսցուք հաւատով ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, զի ըզմեզ արժանի արասցէ յարութեան իւրոյ, կերպարանակից առնել ըզմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց։ Վասըն զի զայս խոստացաւ, ըզմեծ և զանճառելի շնորհըս պարգեւել սիրելեաց իւրոց՝ Ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս տէր մեր. կեցո և ողորմեա։

Օրհնութիւն Աստուծոյ

Կ'ըսուի Տէր Ողորմեայէն ետք

Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն։ Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս.

օրհնեալ ես՝ Տէ՛ր Աստուած մեր. օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ։ Խոստովանիմք Տէր զքեզ և երկիրպագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ. գոհանամք Տէր զքէն վասն մեծի փառացդ քոց։ Տէր Թագաւոր, սուրբդ երկնային, Աստուած և Հայր ամենակալ։

Տէր և Որդի Հօր Միածին, Յիսուս Քրիստոս՝ և Սուրբ Որդի։ Տէր Աստըւած, Գառն Աստուծոյ և Որդի Հօր, որ առեր զմերս ի կուսէն։ Ողորմեցար, բարձեր զմեղս աշխարհի. և արդ՝ ընկա՛լ զաղաչանս մեր։ Սուրբըդ որ նստիս ընդ աջմէ Հօր, ողորմեաց մեզ։ Զի դո՛ւ միայն սուրբ, դո՛ւ միայն բարձրեալ ես, դո՛ւ միայն՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս։

Տէր և Հոգիդ Սուրբ, որ ի փառս Աստըւած ընդ Հօր. Ամէն։

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ, Տէր, և գովեմըք զանուն սուրբ քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից։ Արժանի արա Տէր, զօրըս զայս խաղա-

զուարթեամբ եւ առանց մեղաց պահել ըզմեզ։ Օրհնեա՛լ ես Տէր Աստուած հարցըն մերոց. գովեալ եւ փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս. Ամէն։

Օրհնեալ Տէր, ուսո՛ ինձ զարդարութիւնս քո (Երիցս կրկնեա)։ Տէր, ապաւէն եղեր մեզ յազգէ յազգ։ Ես ասացի Տէր, ողորմեա ինձ եւ բժշկեա զանձն իմ, ես մեղայ քեզ։ Ցոյց մեզ Տէր զողորմութիւնս քո, եւ ըզփրկութիւնս քո տուր մեզ։ Տէր, ողորմութիւն քո յաւիտեան, ըզգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։ Տէր իմ, ըզքեզ ապաւէն ինձ արարի, ուսո՛ ինձ առնել ըզկամս քո՝ զի դու ես Աստուած իմ։ Ի քէն է, Տէր, աղբիւր կենդանութեան, եւ լուսով երեսաց քոց տեսանեմք ըզլոյս։

Ծագեա զողորմութիւնս քո՝ որք ճանաչեն ըզքեզ Տէր։

Մաղթանք

Փա՛ռք պատիւ եւ երկրպագութիւն ի բարձանս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ.

Յ—ր——Բէ—Ն՝ Երգեր Փառք ի բարձունսն Եւ+

ԱՁ. ԱԿ.

Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք. զՓրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն:

Յարեաւ Աստուած և ցրուեցան ամենայն թշնամիք նորա:

ԲՁ. ԲԿ.

Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք. զՓրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն:

Զյարուցեալն ըզՔրիստոս օրհնեսցուք, և զյարութիւն նորա փառաւորեսցուք:

ԳՁ. ԳԿ.

Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք. զՓրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն:

Որ եկն ի բարձունս և գերեաց ըզգերութիւն, էառ տուր բաշխեաց պարգևս և ետ որդւոց մարդկան:

Գ.Ձ. Գ.Կ.

Զյարութիւն զփրկչին օրհնեսցուք. զփրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն։

Որ համբերեաց խաչի, և եդաւ ի նորափոր վիմի, և աստուածային յարութեամբն ըզմահացեալըն վերաբերեաց ի կեանս։

Համբարձման

Զյարութիւն զփրկչին օրհնեսցուք. զփրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն։

-Համբարձաւ Աստուած օրհնութեամբ. և Տէր մեր ձայնիւ փողոյ։

Հոգեգալստեան

Զգալուստ Հոգւոյն օրհնեսցուք, զՀոգւոյն Սրբոյ օրհնեսցուք ըզգալուստ։

Ցեկեղեցիս բարեբանեցէք զԱստուած, և ըզՏէր յաղբերացն Իսրայէլի։

Աւագ Հինգշաբթի

Որսացին զանձն արդարոյ, և զարիւն անբիծ պարտաւոր առնէին։

Եղեւ Տէր ապաւէն իմ. Աստուած օգնական յուսոյ իմոյ։

Ա--÷ Ո--բ--ը

Մատնեցայ և ոչ ելանէի. աչք իմ տըկարացան յաղքատութենէ։

Աղաղակեցի առ Տէր զօրհանապազ. և համբարձի առ քեզ ըզձեռըս իմ։

Ա--+ե-ս

Ոչ են բանք և ոչ են խօսք, որոց ոչ լըսին ձայնք նոցա։

Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. և մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

Հ-յ-դ-է-ս

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Յիշեա՛ Տէր ըզԴաւիթ, և զամենայն հեզութիւն նորա։

Մ-ր-է-ս

Պարծեսցին սուրբքըն փառօք և ցընծասցեն ի հանգիստ իւրեանց։

Օրհնեցէք ըզՏէր յօրհնութիւն նոր. օրհնութիւն նըմա յեկեղեցիս սրբոց։

Եկեղեցւոյ

Տան քում վայելէ սրբութիւն, Տէր, ընդ երկայն աւուրս։

Տէր թագաւորեաց, վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած։

Տապանակին և Վերափոխման

Արի Տէր ի հանգիստ քո, դու և տապանակ կտակի սրբութեան քո։

Յիշեա Տէր զԴաւիթ, և զամենայն հեզութիւն նորա։

Վարդավառին

Քո են երկինք և քո է երկիր, զաշխարհս լրիւ իւրով դու հաստատեցեր։

Զհիւսիս և զհարաւ դու արարեր. Թաբոր և Հերմոն յանուն քո ցնծասցեն։

Ծննդեան և Աւետման

Իջցէ որպէս անձրեւ ի վերայ գեղման, որպէս ցօղ զի ցօղէ յերկիր։

Աստուած զիրաւունս քո արքայի տուր, և զարդարութիւնս քո որդւոյ թագաւորի։

### Խաչ

Ետուր երկիւղածոց քոց նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան։

Որպէս փրկեսցին սիրելիք քո· կեցո աջով քով և լուր մեզ։

### Յայտնութեան և Տեառնընդառաջի

Արեգակն արդարութեան այսօր յայտնեցար ազգի մարդկան. մարդ եղեալ սրբեցեր ըզջուրս՝ վերածննեալ զմեզ մկրտութեամբըն Սրբոյ Հոգւոյն։

Ի վայելչութիւն փառաց սրբութեան քո, յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծընայ ըզքեզ. մարդ եղեալ...

## ՔԱՐՈԶ

### Կիրակամտից, Կիւրակէից և Յինանց

Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ, Տէր ողորմեա։

Տէր ողորմեա:

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի՝ և հաստատութեան Սրբոյ Եկեղեցւոյ, ըզՏէր աղաչեսցուք։

Վասն Հայրապետին մերոյ Տեառն (այս անուն) կենաց՝ և փրկութեան հոգւոյ նորին, ըզՏէր աղաչեսցուք։

Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց, և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ, ըզՏէր աղաչեսցուք։

Վասն բարեպաշտ թագաւորաց և աստուածասէր իշխանաց, զօրավարաց և զօրաց նոցին, ըզՏէր աղաչեսցուք։

Վասն զի Տէրն ամենակալ հնազանդեցուսցէ առաջի նոցա զամենայն պատերազմունս թշնամեաց, ըզՏէր աղաչեսցուք։

Յաղագս հարց և եղբարց մերոց, որք ի գերութեան են և ի չար ծառայութեան, ըզՏէր աղաչեսցուք։

Յաղագս ճանապարհորդաց և նաւորդաց՝ խաղաղութեամբ հասանիլ ի նաւահանգիստ բարութեան, ըզՏէր աղաչեսցուք։

Յաղագս հիւանդաց և ամենայն վշտացելոց՝ փութապէս առողջութեան, ըզՏէր աղաչեսցուք։

Յաղագս բարեխառնութեան օդոց, անձրեւաց քաղցրութեան, և պտղոց առատութեան, ըզՏէր աղաչեսցուք:

Յաղագս ուխտաւորաց և պտղաբերից ի Սուրբ Եկեղեցի Աստուծոյ, ըզՏէր աղաչեսցուք:

Եւ յաղագս այնոցիկ, որք մտանելոց են ի ձեռս անօրինաց վասն անուանն Քրիստոսի, ըզՏէր աղաչեսցուք:

Ազատեա Տէր եւ ողորմեա:

Յաղագս հոգւոցն հանգուցելոց, որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին, ըզՏէր աղաչեսցուք:

Յիշեա Տէր եւ ողորմեա:

Յաղագս փրկելոյ ըզմեզ Տեառն Աստուծոյ՝ յերեւելի և յաներեւոյթ թշնամւոյն, ըզՏէր աղաչեսցուք:

Մաղթանք

Բարեխօս ունիմք:

Յիշեսջիք և զամենայն սուրբըս և նոքօք ըզՏէր աղաչեսցուք:

Յիշեա Տէր եւ ողորմեա:

Զաւուրըս լուսոյ և զառաջիկայ օրըս խաղաղութեամբ անցուցանել՝ հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք։

Շնորհեա՛ Տէր։

Ըզհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց, ի Տեառնէ խընդրեսցուք։

Շնորհեա՛ Տէր։

Ըզքաւութիւն և ըզթողութիւն յանցանաց մերոց, ի Տեառնէ խնդրեսցուք։

Շնորհեա՛ Տէր։

Ըզսրբոյ խաչին մեծ և կարող զօրութիւնն յօգնութիւն անձանց մերոց, ի Տեառնէ խնդրեսցուք։

Շնորհեա՛ Տէր։

Եւ եւըս միաբան վասըն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ, ըզՏէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա։

Զանձինըս մեր և ըզմիմեանըս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։

Քեզ Տեառնըդ յանձն եղիցուք։

*Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում. առասցուք ամենեքեան միաբանութեամբ։*

Տէր ողորմ. Տէր ողորմ. Տէր ողորմ.:

Քարոզ Ննջման և Վերափոխման

*Մայր սուրբ սքանչելի լուսոյն. որ զԱստուածն ամենայն յաւիտենից յորովայնի քում կրեցեր, և ցնծութիւն աշխարհի ծնար ըզբանն Աստուած. աղաչեմք։*

Մայր սուրբ բարեխօսեա:

*Աղաչեա վասն մեր զառ ի քէն ըզմարմնացեալն Աստուած, որ խոնարհեցաւ ի հայրական ծոցոյ. էառ մարմին ըստ մարդկային բնութեանս՝ առնել խաղաղութիւն յերկինս և յերկրի. աղաչեմք։*

*Աղաչեա վասն։ Ներել մեզ անտես առնել ըզյանցանս մեր. և տալ օգնականութիւն ընդդիմակաց լինել հակառակամարտիցն ի պատերազմի. աղաչեմք։*

*Աղա։ Զի լըռեսցին պատերազմունք.*

դատաւորացն յարձակմունք թշնամեաց. անկեսցի սէր և արդարութիւն ի յերկրի. աղաչեմք:

Աղօթ: Աճեցուցանել յերկրի մերում ըզքաղցր բղխումն աղբերաց. զառատ պտղաբերութիւն բուսոց՝ և անկոց. առ ի զուարճալի լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց. աղաչեմք:

Աղօթ: Զի մխիթարեսցէ զեկեղեցի իւր սուրբ. — շինել ի վերայ հիման առաքելոց և մարգարէից. պահել անարատ մինչև յօր երևելոյ գալստեան իւրոյ. աղաչեմք:

Աղաչեա վասն մեր սրբուհի ըզմիածին քո զորդին. և վասն հոգւոցըն հանգուցելոց՝ ընդունիլ յարքայութիւնն երկնից. և տալ մասն և բաժին ընդ սուրբս ամենայն. աղաչեմք:

Յիշեա Տէր եւ ողորմեա:

Եւ ևս առաւել զյորդորումըն մերոյ, և ըզգործըս բարեաց պարգևել մեզ խնդրեմք:

Տուր մեզ Տէր Աստուած:

*Զանձինս մեր և զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:*

Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

*Ողորմեա մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:*

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, լո՛ւր Տէր եւ ողորմեա:

### Սուրբ Աստուած

Լուր օրեր ի Խաչի տօներուն

*Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր. ողորմեա մեզ:*

Որուն վերջը կը փոխուի տօնին համեմատ:

Աւետման և Ծննդեան՝ *որ յայտնեցար.*

Տեառնընդառաջին և Ծաղկազարդին՝ *որ եկիր և գալոց ես.*

Աւագ Ուրբաթի Երեկոյին՝ *որ թաղեցար.*

Յարութեան՝ *որ յարեար.*

Համբարձման՝ *որ համբարձար փառօք առ Հայր.*

Հոգեգալստեան՝ որ եկիր և հանգեար յառաքեալսն.

Վարդավառին՝ որ յայտնեցար ի Թաբոր լերինն.

Վերափոխման Աստուածածնին՝ որ եկիր ի փոխումըն մօր քո և կուսի։

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի, մատո՛ զաղաչանս մեր՝ որդւոյ քոյ և Աստուծոյ մերոյ։

### Սաղմոս ՃԺԲ.

Ներքէ Առաւօտեան Աւետարանին ասել

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչև յաւիտեան։

Օրհնեցէք մանկունք զՏէր, և օրհնեցէք զանուն Տեառն։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչև յաւիտեան։

Յարևելից մինչև ի մուտս արևու՝ օրհնեալ է անուն Տեառն։

Բարձր է ի վերայ ամենայն ազգաց Տէր, և յերկինս են փառք նորա։

*Ո՞վ է որպէս Տէր Աստուած մեր ի բարձունըս բնակեալ, և ըզխոնարհըս տեսանէ յերկինս և յերկրի։*

*Յարուցանէ զաղքատս յերկրէ, և բարձր առնէ զտառապեալս յաղբեւաց։*

*Նստուցանէ զնոսա իշխանս ընդ իշխանս ժողովըրդեան իւրոյ։*

*Բնակեցուցանէ զամուլն ի տան ուրախամիտ, / որպէս մայր որդւովք բերկրեալ։*

*Ալէլուիա, օրթի։*

**Սաղմոս ՁԴ, Ցինանց**

Եղիցին տեղ՝ Աւետարանէն առաջ

*Յո՛յց մեզ, Տէր, զողորմութիւնս քո, և ըզփրկութիւնս քո տո՛ւր մեզ։*

*Հաճեցար, Տէ՛ր, ընդ երկիր քո, և դարձուցեր ըզգերութիւն Յակոբայ։*

*Թողեր զանիրաւութիւն ժողովըրդեան քո, և ծածկեցեր զամենայն մեղըս նոցա։*

*Լռեցուցեր զամենայն սրտմըտութիւնս քո, և դարձար ի բարկութենէ սրտմըտութեան քո։*

Դա՛րձ առ մեզ, Աստուած փրկիչ մեր, և դարձո՛ ըզսրտմտութիւնս քո ի մէնջ։

Մի՛ յաւիտեան բարկանար մեզ, Տէր, և մի՛ ձգեր ըզբարկութիւն քո ազգէ մինչեւ յազգ։

Աստուա՛ծ, դու դարձեալ կեցուսցես ըզմեզ, և ժողովուրդ քո ուրախ եղիցի ի քեզ։

Ցո՛յց մեզ, Տէր, զողորմութիւնս քո, և ըզփրկութիւնս քո տո՛ւր մեզ։

Լուայց զի՛նչ խօսի Տէր Աստուած մեր. խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ առ սուրբս իւր, և առ այնոսիկ՝ որ դարձեալ են առ նա սրտիւք։

Սակայն մերձ է առ երկիւղածըս իւր փրկութիւն նորա, բընակել փառաց նորա յերկրի մերում։

Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին։

Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ, արդարութիւն յերկնից երեւեցաւ։

*Տէր տացէ ըզքաղցրութիւն եւ երկիր մեր տացէ ըզպտուղ իւր. արդարութիւն առաջի նորա գնասցէ. / դիցէ ի ճանապարհի ըզգնացս իւր:*

*Ալէլուիա, օրթի:*

## ԱՒԵՏԱՐԱՆ

Դէպի արեւելք

Սրկ. *Եւ եւս խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք:*

Քհնյ. Տէր ողորմեա:

Սրկ. *Վասն ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան անձանց մերոց, ըզՏէր աղաչեսցուք:*

Քհնյ. Տէր ողորմեա:

Սրկ. *Ողորմեա մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում, ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:*

Քհնյ. Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Քհնյ. *Օրհնութիւն եւ փառք Հօր:*

Դպ. Ամէն. Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

Քհնյ. *Օրհնեսցի եւ պահպանեսցի.*

**Դէպի արեւմուտք**

Դպ. ԱմԷՆ. Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

ԺՈՂ. *Օրհնեսցի եւ պահպանեսցի·*

**Դէպի հարաւ**

Դպ. ԱմԷՆ. Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

**Դէպի հիւսիս**

Դպ. ԱմԷՆ. Ալէլուիա, Ալէլուիա, ալէլուիա:

ԺՈՂ. *Օրհնեսցի եւ պահպանեսցի·*

**Դէպի արեւելք**

ԺՈՂ. *Օրհնութիւն եւ փառք Հօր·*

Սրկ. *Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա։*

ԺՈՂ. *Պահպանիչ։*

Աւետարան կը կարդացուի և յետոյ

ԵՐԳ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ

Յարութեան Կիրակէ օրերուն լման, եւ

Մեծ Պահոց Կիրակիներուն մէջ'ը երկու տուն

*Նորաստեղծեալ բանին յանէից,*
*Ի սկզբանէ զերկինս երկնից.*
*Եւ զերկնային զօրս անմարմնոց,*
*Իմանալեացըն զըւարթնոց.*
*Եւ ըզզալի տարերց քառից*
*Հակառակաց միաբանից.*
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնն անճառելի:
*Երեքսրբեան մի տէրութիւն,*
*Միով բնութեամբ աստուածութիւն.*
*Լոյսն որ անեղ արարչական՝*
*Ասաց լինել լոյս եղական.*
*Զոր և ծագեաց յօրն առաջին*
*Միաշաբաթ կիւրակէին.*
Որով յաւէտ.
*Բաբունորէն բացատրեցաւ*
*Զծածկեալ խորհուրդըն ծանիցաւ.*
*Զի լոյսն անեղ իմանալի,*
*Մաքուր հոգւոց տեսանելի.*

Ի սոյն՞ ծագեաց մխաչարաթ
Մեզ յարութեան սուրբ ճառագայթ·
Եկայք փրկեալք ընդ զուարթնոյն
Տուք օրհնութիւն յարուցելոյն:

Սէրըդ սիրով խոնարհեցար,
Ի փրկութիւն մեր մարմնացար·
Նովին մարմնովըն խաչեցար,
Ի գերեզման մահու եդար.
Այսօր յարեար աստուածաբար,
Ի հրեշտակաց քարոզեցար·
Եկայք.

Երեւեցար խընկաբերիցն
Յողջոյն կանանցն ուրախալից·
Եւ ի լերինըն Գալիլիա
Առաքելոց մետասանից·
Արժանացո՛ զմեզ ընդ նոսին՝
Զքեզ տեսանել յօրըն վերջին·
Եկայք.

Սիոնի որդիք զարթի՛ք,
Հարսին լուսոյ տուք աւետիք·
Եթէ փեսայն քո յարուցեալ
Յաղթեաց մահու իշխանութեամբ·

Գայ պըսակէ ըղձից փառօք,
Ե՛լ ընդ առաջ պճնեալ զարդուք.
Երգեա՛ երգ նոր յարուցելոյն,
Նընջեցելոց կենաց պըտղոյն։

Քարոզ

Խնդրեսցուք հաւատով միաբանու-թեամբ ի Տեառնէ՝ զի զողորմութեան ըզշնորհս իւր առաքեսցէ ի վերայ մեր։ Տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի։

Կեցո Տէր:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Աղօթք

Քում ամենազօր։

Տէրունական աղօթք

Հայր մեր.

Մաղթանք

Զսաղմոսերգութիւնս և զաղաչանս.

# ՊԱՏԱՐԱԳ

## Երգ զգեստաւորման

Դ.Ձ.

Խորհուրդ խորին, անհաս անսկիզբն, որ զարդարեցեր զվերին պետութիւնդ, ի յառագաստ անմատոյց լուսոյն. գերապանծ փառօք զդասս հրեղինաց։

Անճառահրաշ զօրութեամբ ստեղծեր զԱդամ, պատկեր տիրական, և նովին փառօք զգեստաւորեցեր ի դրախտն Եդենի, տեղի բերկրանաց։

Չարչարանօք քո սուրբ Միածնիդ նորոգեցան արարածք ամենայն, և վերստին մարդն անմահացաւ, զարդարեալ ի զգեստ անկողոպտելի։

Անձրևածին բաժակ հրահոսան, որ հեղար առաքելոցն ի սուրբ վերնատանն. հե՛ղ և ի մեզ Հոգիդ Սուրբ Աստուած, ընդ պատմուճանին զքո զիմաստութիւն։

Տուն քում վայելէ սրբութիւն, որ ըզգեցար ըզվայելչութիւն. սրբութեան փառաց ընդ մէջ քո ածեալ. պահեա՛ ըզմէջս մեր ճշմարտութեամբ։

*Որ զարարչագործ բազուկըդ քո տարածեցեր ընդդէմ տանջողաց. հաստատեա՛ զբազուկըս մեր կարողութեամբ, համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդիլ:*

*Իւսմամբ թագ. ի գլուխ, պատուեցես ըզմիտս և ըզգայարանս. խաչանիշ ուրարմամբ ըստ Ահարոնի, ծածկեալ յանհնթէ ի գործ խորանին:*

*Բամից բոլորից ահիրագէս պատուած-պետական. Նափորատող ոհրով ըզմեզ զգեստաւորեցեր, քամ սուրբ խորհըրդոյդ լինել սպասաւոր:*

Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա. եւ զերկրպագուս անուանդ քում պահեա՛ ի խաղաղութեան:

Քհնյ. *Եւ փառք Սրբուհւոյ Աստ.*

Սրկ. *Սուրբ զԱստուածածինըն և զամենայն սուրբըս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինըս, զի կամեսցի ողորմեսցի՝ և գըթասցի կեցուսցէ զարարածըս իւր: Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո և ողորմեա:*

Քհնյ. *Ընկալ Տէր զաղաչանս մեր յա· Ե— տղս տես· Խոստովանիմ առաջի։*

(*) Ողորմեսցի ձեզ մարդասէրն Աստուած. եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց ձոց, անցելոյն եւ այժմուս եւ յառաջակայեն փրկեսցէ զձեզ, հաստատեսցէ զձեզ ի գործս բարիս, եւ հանգուսցէ զձեզ ի հանդերձեալ կեանս. ամէն։

Կարգ մը ընելէ, երկրորդ քահանայ մը բացակայութեան, ըսելու «Ողորմեսցի»ն տեղ Ի՛րեն

Արդ՝ եկայք ամենեքեան, խոնարհեալ անձամբք, բեկեալ սրտիւք, անկցուք եւ լացցուք առաջի Տեառն արարչին մերոյ, զի անցուսցէ ի մէնջ բզգասումբն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբն իւրով։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա։

Քհնյ. *Ազատեսցէ և զձեզ.*

Դպ. *Յիշեսջիր և զմեզ առաջի անմահ Գառին Աստուծոյ։*

---

(*) Երբ պատարագիչէն զատ ուրիշ եկեղեցական մը չկայ եկեղեցւոյ մէջ, այս Ողորմեսցին կրնայ ըսել Դպրապետը։

ԲՃԸ]. Յիշեալ լինիք առաջի·

Սաղմոս ՂԹ.

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր, ծառայեցէք Տեառն ուրախութեամբ։

Մտէք առաջի նորա ցնծութեամբ, ծանիրուք զի նա է Տէր Աստուած մեր։

Նա արար զմեզ և ո՛չ մեք էաք, մեք ժողովուրդք և խաշն արօտի նորա։

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, և օրհնութեամբ ի յարկըս նորա։

Խոստովան եղերուք Տեառն, և օրհնեցէք զանուն նորա։

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա· ազգէ մինչև յազգ է ճշմարտութիւն նորա։

Փառք Հօր և. Այժմ և միշտ և.

Սրկ. Սուրբ եկեղեցեաւըս աղաչեսցուք ըզՏէր՝ զի սովաւ փրկեսցէ ըզմեզ ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած

մեր՝ կեցո և ողորմեա։

ԲՃՃյ. ի մէջ տաճարիս, և․

Մըտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։

Արկ. Դատ արա ինձ, Աստուած, և իրաւ արա ինձ ի դատաստանի իմում։

Յազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս։

Դու, Աստուած, հզօրիչ իմ ես, ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ։

Առաքեա, Տէ՛ր, զլոյս քո, և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ, և հանցեն զիս ի լեառն սուրբ և ի յարկըս քո։

Մըտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, Աստուած Աստուած իմ։

Արդ, ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս․ յուսա՛ առ

Աստուած․ խոստովանեա՛ նմա փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

Փոխ. Փառք Հօր և․

Սրկ. Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն։ Եւ եւս խաղաղու-թեան զՏէր աղաչեսցուք։

Օրհնեսցուք զամենակալն Աստուած՝ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի․ որ արժանի արար զմեզ կալ ի տեղւոջս փառաբանութեան և երգել զերգս հոգեւորս։ Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո և ողորմեա։

Փոխ. Ի յարկի սրբութեան.

Վարագոյրը կը բացուի և դպիրք կ'երգեն սուրբ Պատարագի Մեղեդի: Երբ պատարագիչը եղանակած է, դպիրք կ'երգեն Ընտրեալդ, այս Մեղեդի․

Ընտրեալդ յԱստուծոյ,
Ո՛վ երջանիկ սուրբ հայրապետ,
Նմանեալ Ահարոնի,
Եւ Մովսէսի մարգարէին․
Այնմ որ զգեստուցն էր յօրինող,
Զոր Ահարոն միշտ զգենոյր։

Յօրինէր ըղպատմուճանն,
Զոր ի չորից կողմեալ նիւթոց.
Ի կարմըրոյ, ի կապուտոյ,
Ի բեհեզոյ, ի ծիրանւոյ.
Թել ըղթելըն յօրինէր.
Կարգն առաջինն էր կարկեհան.
Եւ ածումըն գըրապանին,
Շուրջանակի բոլորաչէն.

Տաղ Յարութեան

Ի գերեզման յարուցելոյն անմահին, այսօր գոչէր հրեշտակն երկնային, յարեաւ Քրիստոս զարթեաւ Քրիստոս ի կոյս գերեզմանէն ի լոյս գերեզմանէն.

Պահապանքըն զարհուրեցան ի յահէն, քանզի ի կոյս ի նորափոր տապանէն յարեաւ Քրիստոս զարթեաւ Քրիստոս ի կոյս գերեզմանէն ի լոյս գերեզմանէն.

Առ սուրբ վիմին նստեալ գոչէր հրաշալին, Իւղաբերքըն քարոզելով ծաղկէին, յարեաւ Քրիստոս զարթեաւ Քրիստոս ի կոյս գերեզմանէն ի լոյս գերեզմանէն.

### Տաղ Յարութեան

Վարանիմք ի մեղաց դու ազատիչ մեղուցելոյս, ո՛վ Տիրամայր. ո՛հ, ո՛վ Տիրամայր, ո՛հ ցօղեա՛ կաթիլ մի կուսական զօրեղ կենաց, ո՛հ զօրեղ կենաց։

Յիմ նախկին վայելմանց արժանապէս արտաքսեցայ, ո՛հ եղկելոյս, ո՛հ եղկելոյս. ո՛հ փուշ և տատասկ բուսոյց երկիր ողորմելոյս, ո՛հ ողորմելոյս։

## ԹԱՓՕՐԻ ՇԱՐԱԿԱՆՔ

### Ծննդեան

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի։ Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ։ Անբաւելին երկնի և երկրի ի խանձարուրս պատեցաւ. ոչ մեկնելով ի Հօրէ ի սուրբ այրին բազմեցաւ։

Ո–բօշէ–է

Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար և մարմնացար ի Սուրբ Կուսէն, զի վերստին նորոգեսցես զապականեալն Ադամ։ Դու Աստուած ի յերկինս երևեցար և ընդ մարդկան շրջեցար, և փրկեցեր ըզախտեալըս յանցանացն Ադամայ։ Քեզ ի յերկնից վկայեաց Հօր ձայն․ ասէ՝ դա է իմ որդի․ և Սուրբ Հոգին ըզքեզ յայտնեաց աղաւնակերպ երևմամբ։

Տէ––ն–ըն–դ––––ղէ

Մարմնացեալդ ի Կուսէն նախայաւիտեան բանդ, այսօր ի տաճարն եկիր կատարել զօրէնս վասն փրկութեան հեթանոսաց։ Որ յանարատ աթոռ նստիս բարեբանեալդ ի հրեշտակաց․ այսօր ի Սիմէոնի բառնալով ի գիրկս․ որ ընծայեցես ըզմեզ ի կեանսդ յաւիտենից։ Որ արձակիչդ ես կապելոց պարգևատու ամենեցուն․ այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա և զիս ըզ-

բազմամեղս ի կողմանց մահու ի կեան-սըդ. յաւիտենից։

Մ–ղ–ղ–ըդէ

Որ վերօրհնիս յաթոռըս քերովբէից, ի վերայ Նըստիլ յաւանակի հաճեցար. բարեբանեալ որ եկիր ի կեցուցանել։ Ուստի և մեք զյաղթական օրհնութեանցն ըզձայն մատուցանեմք քեզ թագաւոր փառաց ընդ տղայոն օրհնաբանելով. բարե։ Ովսաննա ի բարձունս ալէլուիա. բարեբանեալ եկեալ անուամբ Տեառն ալէլուիա. և օրհնութիւն որ գալոց ես անուամբ Տեառն ալէլուիա։

Զ–ոկ։

Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ և երկնաւոր. քեզ աւետիք խնդութեան հարսն ի յերկրէ եկեղեցի. օրհնեա ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիոն։ Այսօր անձառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զմանկունըս քո, լուսաւորեա Երուսաղէմ, քանզի յարեաւ

եայս քո Քրիստոս. օրհնեա։ Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ լուսովն. և քեզ ծագեաց լոյս գիտութեան յարուցեալն ի մեռելոց Քրիստոս. օրհնեա.

## Համբարձման

Համբարձաւ Տէրըն մեր յերկինս, ասելով աշակերտացն, Նըստարուք ի քաղաքիդ Երուսաղէմ, մինչև զգենուցուք զօրութիւն ի բարձանց։ Միաբանեալ սուրբ առաքեալքըն միախորհ և միակրօն, միաբան նստէին ի սուրբ վերնատանն, և անդ ունէին զալըստեան Սուրբ Հոգւոյն։ Ցանկարծակի եհաս ի նմանութիւն լուսոյ փայլման. և եկեալ բնակեցաւ ի սուրբ առաքեալսն, մինչդեռ նըստէին ի սուրբ վերնատանն։

## Հոգեգալստեան

Առաքելոյ աղաւնոյ իջանելով մեծաձայն հընչմամբ ի բարձանց, ի նմանութիւն լուսոյ փայլման հրագինեաց անկիզելի զաշակերտսն, մինչդեռ նըս-

տէին ի սուրբ վերնատանն։ Աննւթա-կան աղբերի, անքննելի որ քննէ ըզ-խորս Աստուծոյ. զոր առեալ ի Հօրէ պատմէ զահաւոր և ըզմիաւանդամ զա-լուստն. զոր քարոզեցին համագայական։ Օրհնութիւն ի բարձունս, եկողին ի Հօրէ Հոգւոյն Սրբոյ. որով առաքեալքն ար-բեցան անմահական բաժակուն, և հրա-ւիրեցին զերկիրս ի յերկինս։

Վարդավառի

Որ ի լերինն այլակերպեալ ցուցեր զաստուածային քո զօրութիւնդ. զքեզ փառաւորեմք իմանալի լոյս։ Որ ըզճա-ռագայթ փառաց քոց ցուցեր արեգակ-նակերպ փայլմամբ զարարածըս լուսա-ւորեցեր. զքեզ։ Որ ահագին ամպովն զարհուրեցուցեր զքո զաշակերտսն, ի թըմբրութիւն հրաշիցն ի սէր աստուա-ծային փառաց քոց. զքեզ։

Վերափոխման

Այսօր ժողովեալ սըրբոցն ի միա-սին երանելի առաքեալքն և սուրբ կու-

սանդքն ջահազգեստաւք պայծառացեալք լուցանէին ըզլապտերս իւրեանց. և միաձայնեալ ասէին, օրհնեալ ես ամէնօրհնեալդ ի կանայս։ Այսօր գնելով ըզՍուրբ Կոյսն առ գրանըն գերեզմանին, սպասէին և ակն ունէին Տեառն իսկ ինքնին գալով, գեր ի վերոյ տեսեալ զարարիչն եկեալ բազում հրեշտակօք. և նոցա միա։ Այսօր տեսեալ ըզՍուրբ Կոյսըն Թաւցեալ յօդս, և ամպեղէն կառօքն ի վեր համբարձեալ յերկինս. մըտանելով յերկնային խորանսն ընդ իմաստուն կուսանսն. և նոցա միա։

Խաչվերացէ

Որ զանարատ բազուկըս քո ի խաչին տարածեցեր Քրիստոս Աստուած, և նըշան յաղթութեան եդուր մեզ. սովաւ ըզկեանըս մեր պահեա։ Որ զաշխարհակեցոյց բազկատարածութիւն խաչի քո Քրիստոս Աստուած զաւազան զօրութեան եդուր մեզ. սովաւ։ Որ ըզմե-

ռեալն ի ճաշակմանէ փայտին յանցանողց, կենաց փայտիւըն կենագործեցեր աւխաւ:

Վարագայ խաչէ

Նշանաւ ամենայաղթ խաչիւդ քո Քրիստոս պահպանեա զմեզ մարդասէր յաներեւոյթ թշնամւոյն. զի դու միայն ես Թագաւոր փառաց օրհնեալ յաւիտեան: Որ ի վերայ սորա տարածեցեր զանարատ բազուկս քո. և հեղեր զարիւնդ ի փրկութիւն տիեզերաց. զի դու: Ի միւսանգամ քո գալըստեանըն յերեւիլ սուրբ Նշանիս, արժանի արա ըղձաւորս քո վերըստին նորոգման. զի դու:

Գիւտ խաչէ

Հրաշակերտ և զօրեղ փայտ խաչի քո Քրիստոս գաւազան զօրութեան ի յերկրի երեւեալ. եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Զոր Հրէիցն ծածկեալ զանթաքչելի ըղձանձըն. փափագմամբ թագուհւոյն փայտ կենաց յայտ-

նեցաւ. եկայք ժո։ Սա է զէն յաղթութեան հաւատացելոց. ախոյեան և կնիք յաղթող ընդդէմ թշնամւոյն. եկայք ժողո։

Խնլ—րլ——բե—ն

Բարեխօսութեամբ մօր քո և կուսի, ընկա՛լ զաղաչանս քոց պաշտօնէից։

Որ գերագոյն քան զերկինս պայծառացուցեր Սուրբ զԵկեղեցի արեամբ քով Քրիստոս. և ըստ երկնայնոցըն կարգեցեր ի սմա զդասս առաքելոց և մարգարէից սուրբ վարդապետաց։ Այսօր ժողովեալ դասք քահանայից, սարկաւագաց, դպրաց և կղերիկոսաց. խունկ մատուցանեմք առաջի քո, Տէր, յօրինաց ըստ հընումըն Զաքարիայ. ընկա՛լ առ ի մէնջ ըզխնկանուէր մաղթանս, որպէս զպատարագն Աբելի, զՆոյի և զԱբրահամու։

Բարեխօսութեամբ վերին քո զօրացդ միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազեան։

Զանապական կոյսըն Մարիամ Աս-

տուածածին խոստովանի Ս. Եկեղեցի. ուստի արեաւ հոգին անմահութեան և բաժակ մեզ ուրախարար. տո՛ւք օրհնութիւն նըմա հոգևոր երգով։

Ց–ր––Բ–Ն

ԱՁ.

Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին կանայքն ի գերեզմանն, ի խընկել զանուշական մարմինն։ Եւ գտին զվէմըն բարձեալ ի դրանց գերեզմանին, և լըւեալ բարբառ ի հրեշտակէն. եթէ յարեաւ Քրիստոս և խափանեաց զմահ։ Եւ հանդիպեալ քո՝ Տէր առաքելոցն և տըւեալ ողջոյն կենդանարար, առաքեցեր զնոսա ի փրկութիւն տիեզերաց։

ԱԿ.

Առաքեցար ի Հօրէ բանդ Աստուած ի փրկութիւն ազգի մարդկան. օրհնեմք զքեզ Սուրբ Աստուած։ Ի գերեզման իջեր թագաւոր անմահ և ի Հօրէ ոչ մեկնեցար. օրհնեմք։ Ի յերրորդ աւո

յարեար· աստուածապէս և ի յերկինս համբարձար· փառք յարութեան քո Տէր՝ օրհնեմք։

ԲՁ.

Ի գերեզման քո կանխեցին կանայքն, զիւղս և զխունկս բերին ի պատիւ թաղման քո, զի զմիւռօք ըղձալա-ցեալըս վերածեր ի կենաց՝ Փառաւորել իւղոյն զհոտաւոր անբիծս և զաղաչանս մեր ընդ աւանդական կանանցն ընկալ, որք զողջոյն կենաց լուան Նշայի ուն-կամբն։ Նաև աւետիս առաքելոցն յա-րեաւ յարուցիչըն մեր աւերեալ ըզդը-ժոխս, և զԹշնամին կապեաց ի յանլոյծ կապանս։

ԲԿ.

Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Ընդ-արշալոյսն առաւօտուն կանխեալ կա-նանցն ի գերեզմանն ասելով, Քրիստոս յար։ Ու առ նոսա ասէր հրեշտակըն, զի՞ խնդրէք ըզկենդանին ընդ մեռեալս․ Քրիստոսի փառաւորութեան ալ առաքե-կա

նայք և պատմեցէք աշակերտացն նո-
րալ· Քրիստոս յարու։

Գ.Ձ.

Ի խաչանիշ փայլէն դըղրդեցան դըժոխք· զօրութեամբ Աստուծոյ Հոգւոյն նորոգեցաւ երկիր· ո՞վ է սա որ խափանեաց ըզմահ։ Հրեշտակըն աւետէր կուսին Մարիամու, սա է ի սկզբանէ բանն որ յառաջ քան զյաւիտեանս արդ էր· սա՛ է Թագաւորն որ խափանեաց ըզմահ։ Յարեաւ յաւուրն երրորդի. վէմըք պատառեցան, երկիր շարժեցաւ, տատանեցան դըժոխք· սա՛ է կենդանին յաւիտենից Քրիստոս։

Գ.Ե.

Տեսիլ փայլակնաձեւ զուարթնոյն ի վիմին նստեցեալ առ ի փոփոխմանց կանայն յաւարտեցայց զերկիւղալից ըղրամութիւնն։ Պահապանքն պակուցեալ ահաբեկ լինէին, և կանայքն աւետարանեալ, մահ մահու յաղթեաց և ծանուցանէր։ Քարոզս առաքելոց առ երջանիկ

առաքելոյն· փութացարուք ի Գալիլիա և տեսանիցէք զկենագործողն ըզՔրիստոս:

Դ.Ձ.

Փառաբանակից Հօր Որդի որ վասըն մեր խաչեցար, զդըժոխս աւերեալ յարեար յաւուր երրորդի· փառք յարութեան քո Տէր: Հրեշտակապետին իջումն որ ըզպահապանսն երկիւղիւ· զարհուրեցոյց առ դրանըն գերեզմանին· փառք· Եւ սքանչելի ասէր կանանցն աւետարանէր ասելով. յարեաւ Քրիստոս յարուցիչըն մեռելոց· փառք յարութեան քո Տէր:

Դ.Կ.

Յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն ահեղակերպ փայլմամբ, պատառեցան վէմք և երկիր սասանեցաւ ի յահեղ բարբառոյ մեծ կարապետին: Էջ հրեշտակն ի յերկնից ի գերեզմանըն Տեառն· հնչեցուցանէր զձայն ահեղ գոչման փառացն ի վերայ գերեզմանին: Իսկ եկեալ սուրբ կանանցն ի խնկել զմարմինըն

Տեառն. և լռեալ ի հրեշտակէն եթէ յարեաւ ի մեռելոց կենդանին յաւիտենից:

Սրկ. Օրհնեա Տէր:

Քհնյ. Օրհնեալ թագաւորու.

## ԺԱՄԱՄՈՒՏՔ

### Կիրակէ օրեր

Միածին Որդի և բանդ Աստուած և անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ ի Սրբուհւոյ Աստուածածնէն և ի միշտ կուսէն. անփոփոխելիդ մարդ եղեալ՝ խաչեցար Քրիստոս Աստուած մեր, մահուամբ զմահ կոխեցեր. մինդ ի Սրբոյ Երրորդութենէն, փառաւորակից ընդ Հօր և Սրբոյ Հոգւոյն, կեցո՛ զմեզ:

### Ծննդեան և Աստուածածնի

Աստուածածին անհարսնացեալ զբանն անսկիզբն յղացար և զԱստուածն անիմանալի ծնար. զանպարագրելին ի գիրկս քո բարձեր. նմա անդադար բարեխօսեա՛ վասն անձանց մերոց:

Ձ–յն

*Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ ըզմահ կոխեաց. և յարութեամբն իւրով մեզ ըզկեանս պարգևեաց. Նմա փա՜ռք յաւիտեանս. ամէն։*

Խ–չ

*Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով և խնդրեմք ըզթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր ըզդատապարտութիւն ազգի մարդկան։ Եւ այժըմ վասըն սրբոյ աստուածային քո նըշանի՝ շնորհեա՛ զերկնային ըզխաղաղութիւնդ ամենայն աշխարհի։*

Սրկ. *Եւ եւս խաղաղ. ըզՏէր աղաչ. Ընկալ, կեցո և ողորմեա։ Օրհնեա՛ Տէր։*

ԺՈՂՎ. *Օրհնութիւն և.*

Դպ. *Եւ ընդ հոգւոյդ քում։*

Սրկ. *Աստուծոյ երկրպագեսցուք։*

Դպ. *Առաջի քո Տէր։*

ԺՈՂՎ. *Տէր Աստուած մեր։*

## ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

### Ցինանց Տօնի եւ Կիրակէ օրեր

ԱՁ.

Գովեա Երուսաղէմ զՏէր։

Յարեաւ Քրիստոս ի մեռելոց, ալէլուիա։ Եկայք ժողովուրդք, երգեցէք Տեառն, ալէլուիա։ Յարուցելոյն ի մեռելոց ալէլուիա, որ զաշխարհս լուսաւորեաց, ալէլուիա։

### Յարութեան Կիրակէներուն

ԱՁ.

Զթագաւորդն փառաց Քրիստոս, որ վասն մեր մարմնացաւ ի Սրբոյ Կուսէն, և խաչի համբերելով. միաբանութեամբ երգով բարեբանեսցուք։ Որ ըզթաղումն երեքօրեայ յանձն էառ, յարուցեալ ի մեռելոց իշխանութեամբ. միաբանութեամբ երգով բարեբանեսցուք։ Կարողապէս ըզդրունս դժոխոց խորտակեաց, կենդանացոյց իւրում զգնդացայց զմեծ վայելչութիւն. միաբան.։

ԱԿ.

Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթանոսաց, և լուսազարդեալ պայծառացոյց սուրբ զեկեղեցի· ժողովուրդք ըզՔրիստոս բարեբանեցէք։ Զգեցաւ Տէր, զօրութիւն ընդ մէջ իւր էած, քանզի չիջոյց զխայթոց մահու խաչիւն իւրով սրբով· ժողովուրդք ըզՔրիստոս բարեբանեցէք։ Յարեաւ Աստուած, և ախեղերք ամենայն նորափեսաւր զարդարեցան, և մանկունքն հաղորդեցան մարմնոյ և արեան կենարարին· ժողովուրդք ըզՔրիստոս բարեբանեցէք։

ԲՁ.

Թագաւորին յաւիտենից մատուսցուք զօրհներգութիւն որ ի Կուսէն մարմնացաւ· հաստատեաց զաշխարհս ի հաւատս անսասանելի· փառք նմա այժմ և յաւիտեան։ Որ կամաւ համբեր մահու խաչի Աստուած բանն և եհեղ զարիւն իւր սուրբ ի փրկութիւն ախեղերաց· փառք։ Աստուածապէս յարու-

ցեալ ի նորափոր ի վիմէն լուսազար-դեաց զեկեղեցի իւր սուրբ, ի փառս և ի գովեստ անուան իւրոյ. փառք։

ԲԿ.

Օրհնութիւն ի բարձունս, անօրինե-ցելոյն ի կուսէն Թագաւորին մերոյ. ալէլուիա, ալէլուիա։ Օրհնութիւն ի բարձունս, անսասանելի և հաստատուն յուսոյն մերոյ. ալէլուիա, ալէլուիա։ Օրհնութիւն ի բարձունս, անբաժանելի և միասնական Ս. Երրորդութեանն, ա-լէլուիա, ալէլուիա։

ԳՁ.

Զթագաւորըն Քրիստոս, օրհնու-թեամբ երգով բարեբանեցէք ամենայն երկիր։ Արարողին երկնի և երկրի, մա-տուցուք երգով գոհաբանութիւն, ա-մենայն երկիր։ Երրորդութեան և մի աստուածութեանն մատուցուք պատիւ երկրպագութիւն, յաւիտեանս ամէն։

Գ.Ի.

Լուսով աստուածութեան քո Քրիստոս, լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի. պահեա' ըզնա անշարժ յաւիտեան։ Տօնէ այսօր Երուսաղէմ հաւատացելոց բազմութեամբ զնաւակատիս սուրբ եկեղեցւոյ. պահեա' ըզնա անշարժ յաւիտեան։ Բացան դրունք հաւատոյ Նոր Սիոնի, ընդունել զանմահ փեսայդ յառագաստ. բաշխէ զմարմին քո և զարիւն. պահեա' ըզնա անշարժ յաւիտեան։

Գ.Զ.

Թագաւոր Քրիստոս էակից Հօր և Հոգւոյն, որ վասն մեր մարմնացար ի Սուրբ Կուսէն. Թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք։ Որ կամաւոր մահուամբ ըզմահ մեռուցեր, և անապական յարութեամբըդ քո նորոգեցեր զաշխարհս. Թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք։ Որ կենդանատու արեամբըդ քո լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի. Երգեմք քեզ ընդ հրեշտակս ամենայն. Թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք։

Գ.Կ.

*Որ անպարտելի յաղթող զօրութեամբ Թագաւոր ես երկնի և երկրի, Քրիստոս Աստուած։ օրհնաբանեմք ըզքեզ։ Որ փառակցութեամբ ընդ Հօր վերօրհնիս յանմահից, և խոնարհեալ մարմին ըզգեցար, փառաց Թագաւոր. օրհնաբանեմք ըզքեզ։ Որ կարողապէս ըզմահ կոխեցեր, և յարուցեալ լուսաւորեցեր Ս. եկեղեցի անմահ էութիւն. օրհնաբանեմք ըզքեզ։*

Ծննդեան

Գ.Ձ.

*Սուրբ զԱստուածածինն օրհնութեամբ մեծացուցանեմք։ Աւետաւոր հրեշտակն աւետարանէր ըզծընեալ Փրկիչն ի Սրբոյ Կուսէն։ Ասէ. ուրախ լեր բերկրեալդ, քանզի Տէր ամենայնի է ընդ քեզ։*

Հոգեգալստեան

ԲՁ.

*Որ յանսկզբն և ի միշտ ի յէէն նոյնագոյ բնութեամբ անորոշ բաժանմամ ի յՈրդւոյ արարչակից Սուրբ Հո-*

գին, այսօր հրով բաժանեալ լեզուս քարոզիցն, ի լոյս ածեալ զազգըս մարդկան բաժանմամբ պէս պէս շընորհաց. ընդ նմա օրհնեսցուք երկրպագելով։

Որ ի վերայ Ջուրցըն գոլով գոյացոյց զարարածս, անանջրպետն ի Հօրէ և յՈրդւոյ իշխանակից Սուրբ Հոգին. այսօր վերածնեաց զազգս ամենայն, Ջրոյ կենդանւոյ բղխեալ յԵրուսաղէմ. ընդ նմա օրհնեսցուք երկրպագելով։

Վարդավառին

Դկ.

Ուրախացիր պըսակ կուսից Տիրամայր. այսօր Որդին քո զհայրենին փայլեաց ըզփառս. նըմա յաւէժ յանձըն արա զանձինըս մեր։ Նըմա Մովսէս և Հեղիաս սպասեն. յանուն նորա ցնծան Թաբոր և Հերմոն. նըմա յաւէժ։ Եսայիաս ըզքեզ Թեթեւ ամպ ետես. և Հայր ամպոյն զքո զՈրդին իւր դաւանեաց. նըմա յաւէժ.

Վերափոխման Աստուածածնէ

ԲՁ.

Անթառամ ծաղիկ անդաստանպարտ շառաւիղ· վերաբուսեալ յարմատոյն Յեսսեայ· զքեզ Եսայիաս կանխաւ վերակոչեաց հոթնարփեան շնորհաց Հոգւոյն ընդունարան գոլ· Աստուածածին և կոյս զքեզ մեծացուցանեմք։

Համեղաճաշակ պտղոյն բանաւոր բարունակ· յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անըսպառ յուրախութիւն տրտմեցելոց· ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան. Սրբուհի անարատ, ամենեքեան զքեզ մեծացուցանեմք։

Քաղաքավարեալ ի մարմնի անարատ վարուք· այսօր յառաքելոցն ամփոփեալ վերին ակնարկութեամբըն վերափոխեցար յարքայութիւն որդւոյ քո և Աստուծոյ մերոյ· բարեխօս խոստովանողացս· զքեզ մեծացուցանեմք։

Խաչէ

ԳԿ.

Յաղթող և զնոր օրհնութիւն միշտ

ի բարձունս երգեցուք, թագա՛ւորին Քրիստոսի, հաւատացեալ ժողովուրդք։

Ո՛ր եկն ի լուսաւորել զընտրեալ սուրբ զեկեղեցի, և պը՛սակեաց սուրբ խաչիւն, նըմա ըզփառս երգեցուք։

Այսօր և մեք տօնեսցուք զնաւա-կատիս սուրբ խաչին, և փը՛րկողին մա-տուսցուք փառք և պատիւ յաւիտեան։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Զի քո է կարողութիւն.

Սրկ. Պռօսխումէ։

Դպ. Սուրբ Աստուած, սուրբ և հը-զօր, սուրբ և անմահ. որ յարեար ի մեռելոց. ողորմեա մեզ։

Ա–––ր գ––տ–ն––ձէ ք–ք–է––ըէ–ննէ–ը տէ՛– էջ 59:

Սրկ. Եւ եւըս խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք։

Դպ. Տէր ողորմեա:

Սրկ. Վ՛ասըն խաղաղութեան ամե-նայն աշխարհի և հաստատութեան սըրբոյ Եկեղեցւոյ ըզՏէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա:

Վասն ամենայն սուրբ և ուղղափառ

*եպիսկոպոսաց, ընդՏէր աղաչեսցուք։*

Տէր ողորմեա։

*Վասն Հայրապետին մերոյ տեառն* (այս անուն) *կենաց, և փրկութեան հոգւոյ նորին, ընդՏէր աղաչեսցուք։*

Տէր ողորմեա։

Յիշեա Տէր եւ ողորմեա։

Տէր ողորմեա։

Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

Սրկ. *Օրհնեա Տէր։*

Քհնյ. *Զի ողորմած և մարդասէր.*

Կը կարդացուի Ճաշու Գիրք

**Ճաշու սաղմոս Ղ.Թ.**

Մեծ Պահոց Կիրակիներուն (ձայն բուն)

Դպ. *Ալէլուիա, ալէլուիա։*

*Աղաղակեցէք...* (Տե՛ս էջ 71)։

Վերջին տունը կ'երգուի դպրաց.—

*Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. / ազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն նորա։*

## Ճաշու սաղմոս ՃԽԷ.

Ցնծանց Կերակրական (ձայն բուն)

Դպ. Ալէլուիա, ալէլուիա։
Գովեա՛ Երուսաղէմ զՏէր։
Արկ. Եւ օրհնեա զԱստուած քո, Սիոն։

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհնեաց զորդիս քո ի քեզ։

Ո եդ զսահմանս քո ի խաղաղութիւն. պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ։

Առաքէ զբան իւր յերկիր, վաղվաղ ընթասցին պատգամք նորա։

Դընէ զձիւն որպէս զասր, և զմէգ որպէս փոշի ցանեաց։

Արկանէ զսառն որպէս պատառս, առաջի ցրտոյ նորա ո՞ կարէ կալ։

Առաքէ զբան իւր և հալէ զնոսա, շնչեսցեն հողմք և գնասցեն ջուրք։

Պատմէ զբան իւր Յակոբայ, զարդարութիւն և զիրաւունս Իսրայէլի։

Ոչ այսպէս արար ամենայն ազգաց Տէր, / և զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա։

Սրկ. Ալէլուիա. օրհնի։

Կց [illegible] ձայն Ալէլուիա, [illegible]

Դպ. Փառք քեզ, Տէր Աստուած մեր։

**ՀԱՒԱՏԱՄՔ**

Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից։

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր։

Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ եւ ո՛չ արարած։

Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք։

Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան, իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով։

Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր։

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանըն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ի Սուրբ Հոգին, յանեղն և ի կատարեալն. որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս։

Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն և բնակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և առաքելական Սուրբ Եկեղեցի։ Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց։

Ի յարութիւնըն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մար-

մոց, յարքայութենէն երկնից և ի կեանսն յաւիտենականս:

Իսկ որք ասեն...

Սրկ. Օրհնեա Տէր:

Քհնյ. Իսկ մեք փառաւորեսցուք.

Սրկ. Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Դպ. Տէր ողորմեա:

Սրկ. Եւ ևս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ և ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշտաման և աղօթից: / Զի արժանի ընդունելութեան արասցէ, լո-ւիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց: / Ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր: / Աղօթք մեր և խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի տէրութեան նորա: / Եւ նա տացէ մեզ միաբան, միով հաւատով և արդարութեամբ վաստակել ի գործս բարեաց: / զի զողորմութեան ընդհանուրս իւր արասցէ ի վերայ մեր: Տէրն ամենա-

կալ, կեցուսցէ և ողորմեսցի։

Դպ. Կեցո Տէր,

Շնորհեա Տէր (Երիցս),

Տէր ողորմեա,

Քեզ Տեառնդ յանձն եղիցուք,

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Որպէս զի արժանաւորք.

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպ. Առաջի քո Տէր։

Քհնյ. Խաղաղութեամբ քով.

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Տէր Աստուած օրհնեսցէ.

Դպ. Ամէն։

Սրկ. Մի՛ ոք յերախայից, մի՛ ոք ի թերահաւատից, և մի՛ ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս։

Դպ. Մարմին տէրունական և արիւն փրկչական կայ առաջի. երկնային զօրութիւնք յաներևոյթս երգեն և ասեն

անհանգիստ բարբառով. Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէ՛ր զօրութեանց։

Արկ. Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգըս հոգեւորս։

## ՍՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆՔ

Ծննդեան, Աւետման, Վերափոխման և Աստուածածնի

Բազմութիւնք հրեշտակաց և զօրաց երկնաւորաց, իջեալ ի յերկնից ընդ միածին թագաւորին։ Որք երգէին և ասէին. Սա է Որդին Աստուծոյ. ամենեքեան ասասցուք, ուրախ լերուք երկինք և ցնծասցեն հիմունք աշխարհի։ Զի Աստուածն յաւիտենական ի յերկրի երեւեցաւ, և ընդ մարդկան շրջեցաւ. զի կեցուսցէ զանձինըս մեր։

### Ցնծայ և Խաղէ

Ո՛վ է որպէս Տէր Աստուած մեր, խաչեցաւ վասն մեր, թաղեցաւ և յարեաւ, հաւատարիմ եղեւ աշխարհի և համբարձաւ փառօք։ Եկայք ժողո-

*փառք, զօրհնութիւն ընդ հրեշտակս երգեսցուք նմա, ասելով. Սուրբ, Սուրբ, Սուրբ ես, Տէր Աստուած մեր։*

Կիրակէի, Եկեղեցւոյ, Ծաղկազարդի, Հրեշտակաց և Հոգեգալստեան

*Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր, Աստուած, զքո Սուրբ զեկեղեցի։ Հազարք հազարաց հրեշտակապետաց կան առաջի քո, և բիւրք բիւրուց հրեշտակք պաշտեն զքեզ Տէր, և ի մարդկանէ հաճեցար ընդունիլ զօրհնութիւն, ձայնիւ խորհրդականաւ, Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց։*

Պատարագիչը կը խոնարհի, կ'ըսէ սկիզբը աղօթքին յետոյ ալ կը շարունակէ ձայնաւորապէս Հայր:

Սրկ. *Եւ ևս խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք։*

Դպ. Տէր ողորմեա:

Սրկ. *Եւ ևս հաւատով և սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ. մի՛ խղճիւ և գայթակղութեամբ, մի՛ նենգու-*

թեամբ, խորամանկութեամբ, մի՛ պատրանօք և խաբէութեամբ, / մի՛ երկմտութեամբ և մի՛ թերահաւատութեամբ. այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, / լցեալ սիրով, լի՛ և առաւելեալ ամենայն գործովք բարութեան կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ, և գտցուք զողորմութեան ընդ շնորհս, / յաւուր յայտնութեան և ի միւսանգամ գալստեան Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. կեցուսցէ և ողորմեսցի։

Դպ. Կեցո Տէր և ողորմեա։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Շնորհօք և մարդասիր.

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպ. Առաջի քո Տէր։

Սրկ. Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան, և որք ո՛չ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէք և աղօթեցէք։

Դպ. Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ, որ էնն Աստուած աստ բազմեցաւ, խաղաղութեան ձայն հնչեցաւ, սուրբ ողջունի հրաման տըւաւ. Եկեղեցիս մի անձն եղեւ. համբոյրըս յօդ լըման տըւաւ. թշնամութիւնըն հեռացաւ. սէրն յընդհանուրըս սփռեցաւ: Արդ պաշտօնեայք, բարձեալ ըզձայն, տուք օրհնութիւն ի մի բերան, միաստուածեան աստուածութեանն, որում սրովբէքն են սրբաբանք:

Հանդիսաւոր օրէն

Սրկ. Որք հաւատով, կայք յանդիման սուրբ սեղանոյս արքայական, տեսէք բազմեալ զՔրիստոս արքայն, և շուրջ պատեալ զօրք վերնականն:

Դպ. Վեր համբառնամք զաչս ունելով: Եւ պաղատիմք զայս ասելով: Ըզմեղըս մեր մի՛ յիշեսցես, այլ գըթութեամբ քո քաւեսցես: Ընդ հրեշտակացն օրհնեմք ըզքեզ, և ընդ սրբոց քոց, Տէր, փառք քեզ:

Սրկ. Ահիւ կացցուք, երկիւղիւ կաց-

ցուք, բարւոք կացցուք, և հայեցա-րուք ըզգուշութեամբ:

Դպ. Առ քեզ Աստուած:

Սրկ. Պատարագ Քրիստոս մատչի անարատ Գառն Աստուծոյ:

Դպ. Ողորմութիւն և խաղաղութիւն և պատարագ օրհնութեան:

Սրկ. Օրհնեա Տէր:

Քհնյ. Շնորհք, սէր և.

Դպ. Ամէն. և ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Ըզդըրանս, ըզդըրանս, ամե-նայն իմաստութեամբ և ըզգուշութեամբ: Ի վեր ընծայեցուցէք ըզմիտս ձեր աս-տուածային երկիւղիւ:

Դպ. Ունիմք առ քեզ Տէր ամենակալ:

Սրկ. Եւ գոհացարուք ըզՏեառնէ բո-լորով սրտիւ:

Դպ. Արժան և իրաւ:

Սրկ. Օրհնեա Տէր:

Քհնյ. Եւ ընդ սերովբէքն և.

Դպ. Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէ՛ր զօրութեանց, լի՛ են երկինք և երկիր փառօք քո, օրհնութիւն ի բարձունս.

օրհնեալ որ եկիր և գալոց ես անուամբ Տեառն։ Ովսաննա ի բարձունս։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Առէք կերէք...։

Դպ. Ամէն։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Արբէք ի սմանէ ամենեքեան։

Դպ. Ամէն։ Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քո ետուր ի մահ վասն մեր, պարտապան պարտեաց մերոց. հեղմամբ արեան նորա աղաչեմք զքեզ. ողորմեա քո բանաւոր հօտիս։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Եւ զքոյս ի քոյոց՝ քեզ.

Դպ. Ցամենայնի օրհնեալ ես Տէր. օրհնեմք զքեզ, գովեմք զքեզ, գոհանամք զքէն, աղաչեմք զքեզ, Տէ՛ր Աստուած մեր։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպ. Առաջի քո Տէր։ Որդի Աստու-

ծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտու-
թիւն, հաց կենաց բաշխիս ի մեզ. հեղ-
մամբ արեան քո սուրբ, աղաչեմք ըզ-
քեզ, ողորմեա արեամբ քով փրկեալ
հօտի.

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Որպէս զի եղիցի սա.

Դպ. Հոգի Աստուածոյ, որ զփառա-
կցի քո զխորհուրդ, իջեալ ի յերկնից,
կատարես ի ձեռըն մեր. հեղմամբ ա-
րեան սորա աղաչեմք ըզքեզ, հանգո՛
զհոգիս մեր ննջեցելոցն։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Ընդ որս և մեզ.

Դպ. Յիշեա Տէր, և ողորմեա։

Քհնյ. Աստուածածնին, Սրբոյ Կու-
սին Մարիամու։

Դպ. Յիշեա Տէր, և ողորմեա։

Սարկաւագն աջակողմն սեղանոյն՝ ասասցէ։

Սրկ. Առաքելոց սրբոց, / մարգա-
րէից, վարդապետաց, մարտիրոսաց և
ամենայն հայրապետաց սրբոց, / առա-

քեռլագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւագաց, և ամենայն որդւոց. յեղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք։

Դպ. Յիշեա Տէր, և ողորմեա։

Յարութեան Կիւրակէից ասա այս

Սրկ. Օրհնել, գովել և փառաւորել, հրաշալի և աստուածագործ յարութեանն (յայտնութեանն, ծննդեանն, գալստեանն, համբարձմանն, տէրութեանն,՝ ըստ պատշաճի) Քրիստոսի երկիր պագանեմք։

Դպ. Փա՛ռք յարութեան քո Տէ՛ր։

Ի տօնի սրբոց ասա այս

Սրկ. Սուրբ և աստուածահաճոյ մարգարէին, (հայրապետին, առաքելոյն, մարտիրոսին՝ անուանը հոլովուած), որոյ այսօր զյիշատակն կատարեցաք. յեղիցի յիշատակ ի սուրբ պատարագս. աղաչեմք։

Դպ. Յիշեա Տէր, և ողորմեա։

Սրկ. Առաջնորդացն մերոց և առաջին լուսաւորչացն՝ սրբոց Թադէոսի

և Բարթողիմէոսի առաքելոցն, / և Գրիգորի Լուսաւորչին, Արիստակիսի, Վըրթանիսի, Յուսիկանն, Գրիգորիսի, Ներսիսի, Սահակայ, Դանիէլի և Խադայ, / Մեսրոպայ վարդապետին և Գրիգորի Նարեկացւոյն, և Ներսիսի Կլայեցւոյն, / Յովհաննու Որոտնեցւոյն, և Գրիգորի և Մաղաքիայ Տաթեւացւոցն, / և այլոց Գրիգորիսեանց և Ներսիսեանց, հովուաց և հովուապետացն Հայաստանեայց. / եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս. աղաչեմք։

Դպ. Յիշեա Տէր, և ողորմեա։

Սրկ. Միանձնացելոց սրբոց, / առաքինասէր և աստուածազգեաց կրօնաւորացն, / Պօղոսի, Անտոնի, Պօղայ, Մակարայ, / Օնոփրիոսի, աբբայ Մարկոսի, Սրապիոնի, Նիլոսի, Արսէնի, Եւագրի, Բարսամայ, / Յովհաննիսեանց և Սիմէոնեանց, որոց Ոսկեանց և Սուքիասեանց, / և ամենայն սրբոց, հարց և աշակերտելոց նոցին ընդ տիեզերս. / եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս,

աղաչեմք։

Դպ. Յիշեա Տէր, և ողորմեա։

Սրկ. Թագաւորաց հաւատացելոց սըրբոց՝ / Աբգարու, Կոստանդիանոսի, Տըրդատայ և Թէոդոսից, / և ամենայն սուրբ և բարեպաշտ թագաւորաց և աստուածասէր իշխանաց. / եղիցի յիշատակ ի սուրբ պատարագիս, աղաչեմք։

Դպ. Յիշեա Տէր, և ողորմեա։

Սրկ. Ընդհանո՛ւր / ամենայն հաւատացելոց, / արանց և կանանց, / ծերոց և տղայոց, / և ամենայն չափու հասակի հաւատով և սրբութեամբ ի Քրիստոս ննջեցելոցն. / եղիցի յիշատակ ի սուրբ պատարագիս, աղաչեմք։

Դպ. Յիշեա Տէր, և ողորմեա։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Եւս առաւել...։

Սրկ. Գոհութիւն / և փառաբանութիւն մատուցանեմք քեզ, Տէր Աստուած մեր, / վասն սուրբ և անմահ պատարագիս, որ ի վերայ սրբոյ սեղանոյս. / զի զաս մեզ ի սրբութիւն կենդանութեան պար-

գնեսցես / Սովաւ շնորհեա ըզսէր, զհաստատութիւն և զղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, / սրբոյ եկեղեցւոյ և ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց․ / և հանգուցեալ եպիսկոպոսապետին մերոյ և պատուական հայրապետին ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, / Տեառն Տեառն Գարեգնի (կամ օրուան ողջ կաթողիկոսին անունը հոլովուած յետոյ՝ ատոնց ճանգուցեալ-է) Սրբազնագոյն Կաթողիկոսի / , և Սրբոյ Երուսաղիմայ հանգուցեալ պատրիարք՝ Տեառն Կիւրղի սրբազան Արքեպիսկոպոսի / (կամ օրուան ողջ պատրիարքին անունը հոլովուած յետոյ՝ ատոնց ճանգուցեալ-ի), և Կոստանդնուպօլսոյ պատրիարք՝ Տեառն Գարեգնի սրբազան Արքեպիսկոպոսի / (կամ օրուան պատրիարքին անունը հոլովուած յետոյ) և վիճակիս Առաջնորդ՝ (կամ կաթողիկոսական փոխանորդ) Տեառն (անունը հոլովուած յետոյ) սրբազան եպիսկոպոսի / (կամ արքեպիսկոպոսի), և քահանայիս, որ ըզպատարագըս մատուցանէ․ / Եւ վասըն զօրութեանց և յաղթու-

թեանց թագաւորաց քրիստոնէից և իշխանացն բարեպաշտից։ / Աղաչեսցուք և խնդրեսցուք և վասն հոգւոցն հանգուցելոց։ / Նմա տուեալ վասն հանգուցեալ րաբունապետացն մերոց, / և շինողաց սրբոյ եկեղեցւոյս, որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ։ / Ազատութի՛ւն / եղբարց մերոց գերելոց, / և շնորհ տաճարիս ժողովրդեանս։ / Հանգի՛ստ հաւատով և սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն. / եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք։

Դպ. Ըստ ամենայնի, և յաղագս ամենեցուն։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Եւ եղիցի ողորմութիւն.

Դպ. Ամէն. և ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Եւ եւս խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք։

Դպ. Տէր, ողորմեա։

Սրկ. Ամենայն սրբովք, զորս յիշատակեցաք, եւս առաւելապէս, ըզՏէր աղաչեսցուք։

Դպ. Տէր, ողորմեա։

Սրկ. Վասն մատուցեալ սուրբ և աստուածային անմահ պատարագիս, որ ի վերոյ սրբոյ սեղանոյս, զՏէր աղաչեսցուք։

Դպ. Տէր, ողորմեա։

Սրկ. Որպէս զի Տէր Աստուած մեր, որ ընկալաւ զսա՝ ի սուրբ, յերկնային և յիմանալի իւր մատուցարանն, զփոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս և զպարգևս Հոգւոյն Սրբոյ, զՏէր աղաչեսցուք։

Դպ. Տէր, ողորմեա։

Սրկ. Ընկալ, կեցո և ողորմեա. և պահեա զմեզ, Տէ՛ր, քոյին շնորհիւդ։

Դպ. Կեցո Տէր, և ողորմեա։

Սրկ. Զամենասուրբուհի զաստուածածինն, զմիշտ կոյսն Մարիամ, հանդերձ ամենայն սրբովք յիշելով. զՏէր աղաչեսցուք։

Դպ. Յիշեա Տէր, և ողորմեա։ Տէր ողորմեա։ Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։ Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

Սրկ. Օրհնեա Տէր։

ԺՈՂ. Եւ տուր մեզ համարձակ.

Դպ. Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո՛ որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ, տո՛ւր մեզ այսօր, թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա ի չարէն։

Սրկ. Օրհնեա Տէր։

ԺՈՂ. Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։ Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպ. Առաջի քո, Տէր։

Սրկ. Օրհնեա Տէր։

ԺՈՂ. Քրիստոսի, Յիսուսի...

Սրկ. Պռօսխումէ։

ԺՈՂ. Ի սրբութիւն սրբոց։

Դպ. Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս, ի փառս Աստուծո

Հօր. ամէն։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Օրհնեալ, Հայր Սուրբ.

Դպ. Ամէն։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Օրհնեալ, Որդիդ Սուրբ.

Դպ. Ամէն։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Օրհնեալ, Հոգիդ Սուրբ։

Դպ. Ամէն։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Օրհնութիւն և փառք Հօր.

Դպ. Ամէն։ Հայր Սուրբ, Որդիդ Սուրբ, Հոգիդ Սուրբ։ Օրհնութիւն Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Ի սուրբ, ի սուրբ...։

Դպ. Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

Սրկ. Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա։

[illegible]ասուրբ Երրորդութիւն,

տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն։

Սրկ. Եւ հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն։

Կամ

Դպ. Սրբ Աստուած հարցըն մերոց՝ որ ապաւէնդ ես ննջեցելոց։

Սրկ. Հաս յօգնութիւն ծառայից քոց՝ լեր օգնական ազգիս Հայոց։

Դպ. Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա։

Սրկ. Միջնորդութեամբ սուրբ և անմահ պատարագիս։

Դպ. Ընկա՛լ, Տէր, և ողորմեա։

Սրկ. Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգըս հոգեւորս։ Զի սըմա վայել են սաղմոսք և օրհնութիւնք, ալէլուք և երգըք հոգեւորք։ Պաշտօնեայք, հանդերձ երգովք սաղմոս ասացէք, և ըզՏէր յերկինս օրհնեցէք։

Դպ. Օրհնեալ է Աստուած. Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում ալէլուիա։

աս Աստուծ

Զմարմին իւր տայ մեզ կերակուր և սուրբ զարիւն իւր ցօղէ ի մեզ. ալէ.։

Մատիք առ Տէր և առէք ըզլոյս, ալէ.։

Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է Տէր. ալէլուիա։

Օրհնեցէք ըզՏէր յերկինս. ալէլուիա։

Օրհնեցէք ըզնա ի բարձունս. ալէ.։

Օրհնեցէք ըզնա ամենայն հրեշտակք նորա. ալէլուիա։

Օրհնեցէք ըզնա ամենայն զօրութիւնք նորա. ալէլուիա։

Սրկ. Երկիւղիւ և հաւատով. յառաջ մատիք և սրբութեամբ հաղորդեցարուք։

Դպ. Աստուած մեր և Տէր մեր երևեցաւ մեզ. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։

Քհնյ. Կեցո Տէր զժողովուրդս.

Դպ. Լցաք ի բարութեանց քոց Տէր, ճաշակելով ըզմարմին քո և զարիւն. փա՜ռք ի բարձունս կերակրողին ըզմեզ, որ և հանապազ կերակրես ըզմեզ. առաքեա՛ ի մեզ ըզհոգևոր քո

զօրհնութիւն. փա՛ռք ի բարձունս կերակրողիդ ըզմեզ։

Սրկ. Եւ եւս խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք։

Դպ. Տէր ողորմեա։

Սրկ. Եւ եւս հաւատով ընկալեալք աստուածային, սուրբ, երկնային, անմահ, անարատ և անապական խորհըրդոյս, ըզՏեառնէ գոհասցուք։

Դպ. Գոհանամք ըզքէն, Տէր, որ կերակրեցեր ըզմեզ յանմահական սեղանոյ քո։ Բաշխելով ըզմարմին քո և ըզարիւն ի փրկութիւն աշխարհի, և կեանք անձանց մերոց։

Սրկ. Օրհնեա Տէր։

Քհնյ. Որ օրհնես զայնոսիկ։

Դպ. Օրհնեալ է Աստուած։

Քհնյ. Կեցո՛ զժողովուրդս քո.

Դպ. Ամէն։

Քհնյ. Սրբեա՛ զսոսա.

Դպ. Ամէն։

Քհնյ. Զխաղաղութիւն պարգեւեա՛։

Դպ. Ամէն։

ՔՀՆյ. Զի ամենայն տուրք բարիք·

Դպ. Ամէն: Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչեւ յաւիտեան. եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչեւ յաւիտեան. և եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

ՔՀՆյ. Կատարումն օրինաց և.

Սրկ. Օրթի:

ՔՀՆյ. Խաղաղութիւն ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Երկիւղածութեամբ լուարուք:

ՔՀՆյ. Սրբոյ Աւետարանիս . . . :

Դպ. Փա՛ռք քեզ, Տէր Աստուած մեր:

Սրկ. Պռօսխումէ:

Դպ. Ասէ Աստուած:

Քարոզն յետ Սրբոյ Աւետարանին

Սրկ. Փա՛ռք քեզ՝ Տէր Աստուած մեր: Սուրբ խաչիւս աղաչեսցուք ըզՏէր, զի սովաւ փրկեսցէ ըզմեզ ի մեղաց, և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Աստուած Տէր մեր. կեցո՛ և ողորմեա:

Քհնյ. Պահպանիչ։

Սրկ. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ։

Քհնյ. Օրհնեալ եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն. երթայք խաղաղութեամբ, և Տէր եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեան. ամէն։



## ԺԱՄ ԱՐԵՒԱԳԱԼԻ

(Մեծ Պահքի առաւօտները)

Քհնյ. Օրհնեալ Տէր մեր Յիսուս.

Հայր մեր:

Քհնյ. Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան, զի յառաջ քան զարեւ է անուն նորա։

Սրկ. Ի նա օրհնեսցին ամենայն ազգք երկրի, և ամենայն ազինք երանիցեն նըմա։

Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, որ առնէ սքանչելիս միայն, և օրհնեալ է անուն սուրբ փառաց նորա յաւիտեան. լցցի՛ փառօք նորա ամենայն երկիր։ Եղիցի՛. եղիցի՛։

Քհնյ. Փառք Հօր և.

Սրկ. Այժմ և միշտ... Եւ ելս խաղաղութեան ըզՏէր աղաչեսցուք. ընկալ...

Քհնյ. Օրհնութիւն և փառք Հօր.

Երգ Գ.Կ.

Յարևելից մինչ ի մուտս, ի հիւսիսոյ և ի հարաւոյ, ամենայն ազգք և ազինք, յօրհնութիւն նոր օրհնեցէք զԱրարիչն արարածոց, որ ծագեաց ըզլոյս արեգականն այսօր յաշխարհս։

Եկեղեցիք արդարոց, փառաբանիչք ամենասուրբ Երրորդութեանն, յառաւօտըն լուսոյ՝ զառաւօտ խաղաղութեան Քրիստոս գովեցէք ընդ Հօր և Հոգւոյն, որ ծագեաց ըզլոյս գիտութեանն իւրոյ ի մեզ։

Ժ—ղ—վ—ր—դ

*Յարևելից յարևմուտս, մանկունք Սիոնի, օրհնեցէք միշտ անդադար զծագողըն լուսոյ։*

*Եկեղեցիք արդարոց և փառաբանիչք, բարեբանեցէք որ ետ զիմաստըն լուսոյ։*

Ք—ա—ր—ո—զ

*Յարևելից մինչև ի մուտս արևու ընդ ամենայն տեղիս քրիստոնէութեան, ուր և կարդան զանուն Տեառն սրբութեամբ, Տէր աղօթիւք նոցա և բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի։ Ուխտիւք զԱստուած աղաչեսցուք զի նա փրկեսցէ զմեզ ի մեղաց և ի ցանկութենէ աշխարհի։ Ընկալցի զուխտըս և զխնդրուածըս սրտից մերոց, և արժանի արասցէ զմեզ հաւատոց և պատուիրանաց իւրոց ընդ ամենայն սուրբըս իւր։ Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կեցո և ողորմեա։*

Կեցո՛ Տէր:

*Զառաւօտըս լուսոյ և զառաջիկայ օրըս խաղաղութեամբ անցուցանել՝ հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք։*

Շնորհեա՛ Տէր:

*Ըզհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց, ի Տեառնէ խնդրեսցուք։*

Շնորհեա՛ Տէր:

*Ըզքաւութիւն և ըզթողութիւն յանցանաց մերոց, ի Տեառնէ խնդրեսցուք։*

Շնորհեա՛ Տէր:

*Ըզսրբոյ խաչին մեծ և կարող զօրութիւնըն յօգնութիւն անձանց մերոց, ի Տեառնէ խնդրեսցուք։*

Շնորհեա՛ Տէր:

*Եւ եւըս միաբան վասըն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ՝ ըզՏէր աղաչեսցուք։*

Տէր ողորմեա:

*Զանձինըս մեր և ըզմիմեանըս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։*

Քեզ Տեառնըդ յանձն եղիցուք:

*Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում. ասացուք ամենեքեան միաբանութեամբ:*

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Աղօթ.

*Յարեւելից մինչեւ ի մուտս.*

Սաղմոս ՂԹ.

*Աղաղակեցէք առ Տէր* (Տե՛ս էջ 71):

Երգ

*Ծնունդք Աստուծոյ, և ժառանգորդք երկնից արքայութեանն, որք փոխանակեալք զանցաւորս, առիք զանանցն բարութիւն.* բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ:

*Նահատակք պանծալիք, և օրհնեալք ի յերկնաւոր Հօրէն. որք մկրտեցայք ընդ Քրիստոսի արեամբ ձերով ի մահ խաչին.* բարեխօսեցէք.

*Մարտիրոսք ցանկալիք և օթեվանք Հոգւոյն ճշմարտութեան, որք յաղթե-*

ցիք հոգւով կարեաց և ցանկութեան· բարեխօսեցէք.

Գովելիք աշխարհի, և բաղձալիք վերնոցըն պետութեանց· որք երանութեան մասին հասիք քան զամենայն որդիս մարդկան· բարեխօսեցէք.

Կամաւոր պատարագք· մանկունք տիօք և կատարեալք իմաստութեամբ· որք փոխանակ կաթին արբիք զգինին զմայլեցուցիչ· բարեխօսեցէք.

Յորդորակ

Ճգնաւորըք ճշմարիտք, վըկայք Քրիստոսի· բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց։

Նահատակըք կենդանիք, սիրողք Քրիստոսի· որք չարչարեցայք մարմնով, վասն անուանըն Տեառն։

Մարտիրոսըք ցանկալիք, մարդկան ըղձալիք, հայցեցէք ի Սուրբ Հոգւոյն, տալ մեզ ըզբարիս։

Գովելիք վերնոց դասուց· պարծանք աշխարհի· խնդրեցէք զխաղաղութիւն տալ եկեղեցւոյ։

Կամաւոր սուրբ պատարագք, հասակաւ մանկունք. հայցեցէք լինել և մեզ՝ ձեզ պըսակակից։

Մանկունք

Աղաչեմք ողորմեաց, Տէր.

Քարոզ

Սուրբ ճգնաւորօքն աղաչեցուք զՏէր, որք ըզչարսըն պարտեցին, նեղութեանցըն համբերեցին, լուսեղէն և երկնային անթառամ պըսակացըն արժանի եղեն։ Աղօթիւք նոցա և բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ և ողորմեա։

Աղօթք

Սուրբ ես Տէր...։

է Սարկաւագ [illegible]

Դպ. Յիշեա՛, Տէր, ըզպաշտօնեայս քո. ըզծնողըն մեր, ըզվարդապետըս, զեղբարըս, զընկերըս, ըզկերակրիչըս, զուխտաւորըս, ըզճանապարհորդըս, ըս-

հանգուցիչըս, ըզվաստակաւորըս, ըզխոստովանողըս, զապաշխարողըս, ըզգերիս, ըզհիւանդըս, ըզնեղեալըս, զիշխանըս, ըզչարարարըս, ըզբարերարըս, ըզթշնամիս, զատելիս· և որք պատուիրեցին մեզ հաւատով։

Քհնյ. Յիշեա՛, Տէր և ողորմեա…

Սաղմոս ԿԲ-ԿԳ

Աստուած, Աստուած իմ, ես առ քեզ առաւօտ առնեմ· ծարաւեաց առ քեզ հոգի իմ, քանի՛ պատիկ եւս և մարմին իմ։

Որպէս երկիր անապատ և անջուր, ուր ո՛չ գոյ ի նըմա ճանապարհ։

Որպէս ի սուրբըս երեւեցայց քեզ, տեսանել ինձ ըզզօրութիւն քո և ըզփառըս քո։

Վասն զի լաւ է ինձ ողորմութիւն քո քան ըզկեանըս իմ· և շրթունք իմ գովեսցեն ըզքեզ։ Եւ այլն։

## Երգ

Լո՜յս, արարիչ լուսոյ, առաջին լոյս, բնակեալդ ի լոյս յանմատոյց, Հայր երկնաւոր, ի դասուց լուսեղինացն օրհնեալ. ի ծագել լուսոյ առաւօտուս, ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:

Լո՜յս, ի լուսոյ ծագումն արեգակն արդար. անճառ ծնունդ Հօր Որդի, յառաջ քան զարեւ անուն քո գովեալ ընդ Հօր. ի ծագել.

Լո՜յս, ի Հօրէ բղխումն աղբիւր բարութեան, Հոգիդ Սուրբ Աստուծոյ, մանկունք Եկեղեցւոյ ընդ հրեշտակս ըզքեզ բարեբանեն. ի ծագել.

Լո՜յս, երրեակ և մի անբաժանելի Սուրբ Երրորդութիւն. զքեզ ընդ երկնայնոցն երկրածինքս միշտ փառաւորեմք. ի ծագել.

## Յորդորակ

Անեղանելիդ Աստուած, Հայր ամենակալ. ընկալ զաղաչանըս մեր, քոց պաշտօնէից։

*Ի Հօրէ ծագումն անճառ, արեգակն արդար, ծագեա ի յանձինս մեր զլոյսդ ողորմութեան։*

*Ի Հօրէ բղխեալ Հոգի, աղբիւր բարութեան, լուսով քով լցո զմեզ յայսմ առաւօտու։*

*Երեք անձինք և մի բնութիւն, մի աստուածութիւն, զքեզ խոստովանիմք յաւէտ Սուրբ Երրորդութիւն։*

Մաղթանք

*Լուսովդ քո Քրիստոս. . . ։*

Քարոզ

*Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։ Փառաբանեսցուք զամենակալն Աստուած, որ ծագեաց զլոյս առաւօտու յարարածս իւր, ծագեսցէ և այժմ զառատ ողորմութիւն իւր ի վերայ փառաբանչաց անուան իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ և ողորմեա։*

Աղօթք

Զառաւօտու աղօթս և....:

Սաղմ. ԻԲ ՃԽԲ. ԽԵ. ԿԹ. ՁԵ.

Տէր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ո՛չ պակասեսցի:

Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս. և առ ջուրս հանգստեան սնոյց զիս:

Դարձոյց զանձն իմ առ իս, առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ:

Թէպէտ և գնացից ես ի մէջ ըստուերաց մահու, ո՛չ երկեայց ի չարէ. զի դու, Տէր, ընդ իս ես: Եւ այլն:

Երգ

Ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք Քրիստոս. առաջնորդեա հօտւոց մերոց, յերկրէ ելանել յերկինս:

Դուռն կենաց մըտից Յիսուս, մոյծ և ըզմեզ առ Հայր քո և Հոգի, երգել միշտ ըզփառս:

Յորդորակ

Ճանապարհ բարի Քրիստոս և ճշմարտութիւն, առաջնորդ հոգւոց մերոց յերկրէ ի յերկինս։

Դուռըն կենաց մըտից Յիսուս, Աստուած ճշմարիտ, մոյծ և զմեզ առ Հայրդ քո, Հոգւովդ Սրբով։

Մաղթանք

Տէր, ուղղեա՛ զգնացս մեր.

Քարոզ

Աղաչեսցուք զամենակալն Աստուած՝ զի յաջողել ուղղեսցէ ըղձանապարհըս ծառայից իւրոց ի բարի և ի խաղաղութիւն։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ և ողորմեա։

Աղօթք

Առաջնորդ կենաց և.

Կամ

Օրհնեալ ես, Տէր Աստուած.

Օրհնեալ Տէր մեր... Հայր մեր...

Օրհնեալ եղերուք...

## ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ.

### Մեծ Պահքի Երեկոները

*Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ամէն: Հայր մեր...*

Քհնյ. *Տէր Աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարդացի և ի գիշերի առաջի քո:*

Սրկ. *Մտցեն աղօթք իմ առաջի քո, Տէր, խոնարհեցո ունկըն քո ի խընդրուածըս իմ:*

*Փառք Հօր. Այժմ և միշտ:*

*Եւ ևըս խաղաղութեան ըզՏէր աղաչ:*

*Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ:*

Սաղմոս Դ.

*Ի կարդալ իմում լըւար ինձ, Աստուած, ըստ արդարութեան. ի նեղութենէ ինձ անդորր արարեր, ողորմեա ինձ և լուր աղօթից իմոյ:*

*Որդիք մարդկան մինչեւ յե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք ըզնանրութիւն, և խնդրէք ըզսըտութիւն:*

*Ծանիրուք զի ըսքանչելիս արար*

Տէր սրբոյ իւրում. և Տէր լուիցէ ինձ ի կարդալ իմում առ նա։

Բարկանայք և մի՛ մեղանչէք, զոր ինչ ասէք ի սիրտս ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք։

Մատուցէք պատարագս արդարութեան, և յուսացարուք ի Տէր։

Բազումք ասեն թէ ո՞ ցուցցէ մեզ ըզբարութիւն Տեառն. Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից մերոց։

Ի պտղոյ ցորենոյ՝ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր ըզնոսա։

Խաղաղութեամբ յայս և ի սմին ննջեսցուք և զարթիցուք. զի դու, Տէր, միայն առանձին յուսով քով բնակեցուցեր ըզմեզ։

Եւ

Շնորհեա մեզ Տէր, ի գիշերի զերկնային ըզխաղաղութիւն քո. և պահեա ըզմեզ ի պատրանաց թշնամւոյն՝ ամենայաղթ զօրութեամբ սուրբ խաչի քո։

*Տէր Աստուած փրկութեան իմոյ, ի տուէ կարդացի՝ և ի գիշերի առաջի քո։ Մտցեն աղօթք իմ առաջի քո Տէր, խոնարհեցո ունկըն քո ի խնդրուածս իմ։ Եկեսցէ առ մեզ Տէր, պահապան ի քէն և պահեսցէ զմեզ յամենայն ժամ։ Առաքեա ի մեզ Տէր, զզօրութիւն սրբոյ խաչին որ պահեսցէ զմեզ յամենայն ժամ։ Արժանի արա Տէր, զերեկըս զայս խաղաղութեամբ, և առանց փորձութեան անցո զմեօք։ Արժանաւորեա Տէր զգիշերըս զայս խաղաղութեամբ և առանց մեղաց պահելով զմեզ։ Ընդ մեզ Տէր Աստուած, գիտասջիք հեթանոսք և պարտեցարուք·* զի Աստուած ընդ մեզ է: *Եւ լուարուք զայն ի ծագաց մինչև ի ծագըս երկրի·* զի. *Եւ հզօրացեալքըդ պարտեցարուք·* զի. *Եւ զի թէպէտ և դարձեալ զօրանայք, դարձեալ ի պարտութիւն մատնեսջիք·* զի. *Եւ զխորհուրդըն զոր խորհիք՝ խափանէ Տէր·* զի. *Եւ զբանըն զոր խօսիք՝ մի՛ մնասցէ առ ձեզ·* զի. *Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք*

ո՛չ երկիցուք, և ո՛չ խռովիցուք· զի
Եւ ըղՏէր Աստուած մեր փառաւոր ա-
րասցուք, և նա եղիցի մեզ յերկիւղ· զի.
Եւ յուսացեալ եղիցուք մեք ի նա, և նա
եղիցի մեզ ի սրբութիւն. զի. Եւ յու-
սացեալ եղիցուք մեք ի նա, և նա ե-
ղիցի մեզ ի փրկութիւն. զի. Եւ ահա-
ւասիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ
Աստուած· զի. Եւ ժողովուրդ որ նստէր
ի խաւարի՝ ետես ըղլոյս մեծ· զի. Եւ
որ բնակեալդ էք ի խաւարի և ի ստուե-
րըս մահու, լոյս ծագեսցի առ ձեզ· զի.
Եւ քանզի մանուկ ծընաւ, որդի և
տըւաւ մեզ. զի. Եւ որոյ իշխանութիւն
իւր ի վերայ ուսոց իւրոց· զի. Եւ որ
կոչի անուն նորա մեծի խորհրդոյ Հրեշ-
տակ· զի. Եւ ըսքանչելի խորհրդակից·
զի. Եւ Աստուած հըզօր իշխան· զի. Եւ
իշխան խաղաղութեան Հայր հանդերձե-
լոյ յաւիտենին. Տէր Աստուած ընդ մեզ
է։ Եւ փա՛ռք Հօր և Որդւոյ և Հոգւոյն
Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից· ամէն։

### Մաղթանք

### Ի մերձենալ երեկոյին։

### Քարոզ

Եւ եւս խաղաղութեան ըզՏէր աղա։

Գոհացարուք ըզՏեառնէ, որ իւրով ողորմութեամբըն առաջնորդեաց մեզ ի գործըս տուընջեան, և շնորհեաց մեզ միաբան գալ հասանիլ ի հանգիստ գիշերիս։ Եւ մեք յամենայն ժամ աղաչեսցուք ըզմարդասէրն Աստուած, լինել պահապան անձանց մերոց, և նա իւրով ողորմութեամբըն պահեսցէ ըզմեզ, և առաջնորդեալ հասուսցէ յիւր բարութեան հանգիստն, զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս։ Տէրն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի։

Ըզհանգիստ գիշերիս խաղաղութեամբ անցուցանել հաւատով՝ ի Տեառնէ խընդրեսցուք։

Ըզհրեշտակն։ Ըզքաւութիւն։ Ըզարքայ։

Եւ եւս։ Զանձինս։ Ողորմեաց (Տես էջ 118)։

### Աղօթք

Տէր բարերար, որ մեծաւ.

Սաղմոս ԻԶ.

*Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց։*

*Ի մերձենալ առ իս չարաց ուտել ըզմարմին իմ, նեղիչք իմ և թշնամիք իմ նոքա տկարացան և անկան։*

**Երգ Ներսիսի Շնորհալւոյն**

*Նայեաց սիրով Հայր գթած*
*Ի քո ստեղծեալ գործըս ձեռաց.*
*Եւ ըզբանակըս հրեշտակաց*
*Տուր պահապան մեզ տկարացս.*
*Փրկեա՛ զանձինս ի փորձանաց*
*Ի խաւարի չըրջող դիւաց.*
Զի ի տուրնջեան եւ գիշերի
Տացուք քեզ փառս անլըռելի։

*Էին անեղ անըսկըզբան*
*Ծընունդ անճառ Որդի և Բան.*
*Որ արարեր ըզատիւ գործոյ՝*
*Եւ ըզգիշեր ի հանգիստ քնոյ.*
*Տուր ի ննջել աչաց մարմնոյ՝*
*Արթուն լինել մեզ ըստ հոգւոյ.*
Զի.

Բարուն հօգւոց բանաւորաց
Աղբիւր լուսոյ բղխող շնորհաց
Ի փակել դրանց բնութեանց մարմնոց
Լոյս տուր աչաց սրտից մերոց,
Ի գիշերոյս առ քեզ կանխել
Ընդ հրեղինացն օրհնաբանել.
Զի.

Սուրբք սրբոց Երրորդութիւն,
Ըզմեզ մաքրեա քեզ բնակութիւն.
Շնորհեա ՚նդ մանկանցն առաջատար
Հանգչել ընդ քեզ ի յանկողնի.
Տուր բղխայցուած պարեկամբին
Ըզփախ երից նշկանակին.
Զի.

Երեւելի լոյս ըստեղծեր,
Զօր եւ զգիշեր բաժանեցեր.
Ծագեա մեզ, Տէր, ի գիշերի
Ըզճառագայթս իմանալի.
Տուր յամենայն ժամանակի
Զպահպանող աջ քո հովանի.
Զի.

Սիրոյ քո հուր արկեալ յերկիր
Բորբոքեսցի ի հոգիս մեր,
Զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ
Զլոյս գիտութեան քո փայլեսցէ.
Ի քնոյ մահու զմեզ զարթուսցէ.
Զմիտըս բոցով քով վառեսցէ.
Զի.

Ի քեզ նայիմք լոյսդ անմատոյց
Ի զգայական ծածկեալ լուսոյ.
Որ վասըն մեր եդար ի գըբի
Եւ ննջեցեր ի տապանի.
Առ մեզ նոյնչա արթուն բնութիւն,
Հերքեա զչարին ներգործութիւն.
Զի.

Էիդ լուսոյ անըստուերի
Պայծառնօք կամք առաջի.
Որ փակեալ զդրամբք յերեկոյին
Երեւեցար Մետասանին.
Ընդ Թովմայի առ քեզ գոչեմք
Տէր և Աստուած զքեզ դաւանեմք.
Էջ և առ մեզ յերեկոյիս
Եւ տուր զողջոյն քո ի հոգիս։

Րամեալքս ըզքեզ Տէր աղաչեմք
Մեզ յօգնութիւն նոյնա հայցե՛մք·
Պահապանդ Իսրայէլի·
Անձանց մերոց լեր հովանի·
Օթեա առ մեզ խաղաղարար·
Եւ ննջեսցուք անխռովաբար·
Զի ընդ առաւօտըս կանխեսցուք
Օրհնել ըզքեզ ընդ Հօր հոգւով։

Գոչմամբ փողոյն Գաբրիէլի
Որ ի վերջնումըն գիշերի·
Լսել արա զմեզ արժանի
Եւ աջակողմն օթեաց դասի·
Անշէջ վառեալ լոյս լապտերաց
Ըստ իմաստուն հինգ կուսանաց·
Զի ընդ Փեսայիդ ի յառագաստ
Հարսունք հոգւով մացուք ի փառս։

Հովանեա ի մէնջ Տէ՛ր, նըշանաւ խաչի քո զընդդիմամարտ և զաներեւոյթ գազանն. Ե՛ւ մի՛ տար յապականութիւն զքո ժառանգութիւնս։

Բարեխօսեա՛ վասըն մեր աստուածածին Մարիամ, որ ծընար զՏէր Աստուած՝ որ հովուէրըն զիսրայէլ ամենազօր և սքանչելի փառօքն իւրովք։

Սարկ.

Տէր, մի՛ դարձուցաներ:

Քահ.

Աղաչեսցուք զամենակալն Աստուած, և խնդրեսցուք ի նմանէ, զի առաքես-ցէ ըզհրեշտակ խաղաղութեան, որ եկեալ պահեսցէ ըզմեզ յերկիւղական գիշերիս ի դիւական խռովութենէ, ամբողջ պա-հելով ըզհոգի և ըզմարմին մեր մինչև ի կատարումն ժամանակի ամաց մե-րոց: Ամենակալ Տէր Աստուած մեր՝ կե-ցուսցէ և ողորմեսցի:

Աղօթ.

Շնորհատու բարեաց:

Սաղմոս ՃԺԸ. 1–56

(Կէսն է կէս բաժն ամէն օր մէկը)

Երանեալ են ամբիծք ի ճանապարհի. և ոյք գնան յօրէնս Տեառն:

Երանի ոյք քննեն ըզվկայութիւն նորա, բոլորով սրտիւ խնդրեսցեն խըն-դրեսցեն ըզնա:

Սաղմոս ՃԺԸ. 57-120

*Բաժին իմ ես դու, Տէր, ասացի պահել ինձ զօրէնս քո։*

*Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով, ողորմեա ինձ ըստ բանի քում։*

Սաղմոս ՃԺԸ. 121-176

*Արարի իրաւունս և արդարութիւն, մի՛ մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց։*

*Ընկալ ըզծառայս քո ի բարի. զի մի՛ ամբարտաւանք զըզուեսցեն զիս։*

Շարական

*Ի քէն հայցե՛մք Հայր գթութեանց և Աստուած մխիթարութեանց. ի տըխրական գիշերային մերձեալ ժամուս. մխիթարեա ըզմեզ ի տրտմութեանց մեղաց, և շնորհեա զուրախութիւն զարծովք արդարութեան.* աղաչանօք Սուրբ Աստուածածնին եւ ամենայն արդարոց:

*Ըստ քաղցրագո՛յն աստուածային քո հրամանի կոչման Որդի Աստուծոյ, եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխա-*

տեալք և ծանրաբեռնեալք. Թեթեւացո ի ծանրութեանց մեղաց զանձինս, և զօրացո բառնալ կամաւ ըզքաղցր լուծ քոց պատուիրանաց. աղաչ.

Պաղատի՛մք առ քեզ հոգւով ի հանգըստեան հասեալ ժամուս մարդասէր Հոգի Աստուծոյ, յորժամ նորոգես զերեսըս երկրի, և վերստին ստանաս զոգիս մարդկան. նորափետուր զարդարեա ըզննջեցեալսըն մեր ըզծընեալսն ի քէն սուրբ աւազանէն. աղաչ.

Զկենդանագի՛ր անարատ ծընողի քո արկանեմք առաջի անոխակալ տէրութեանըդ քո. յորժամ գաս փառօք Հօր դատել ըզթշնամին խաչի քո, ներեա յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր քո և Կուսի. աղաչեմք ըզքեզ Տէր, պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ.

Հաղորդս արա՛ և ըզմեզ Տէր, ընդ սրբոց քոց առաքելոցն. որք արժանի եղեն տեսանել ըզքեզ ի յարութեան քո, արժանաւորեա Տէր տեսանել ըզքեզ ի

միւսանգամ քո գալստեանն. օրհնութիւն առաքողին ի բարձունս։

Ի նստիլ քո յատենի դատաւոր ահեղ. աղաչանօք Սուրբ Աստուածածնին, յիշեա զնընջեցեալսն մեր, յորժամ գայցես անճառ փառօք. քանզի քո են փա՛ռք յաւիտեանս, ամէն։

ՄԱՂԹԱՆՔ

Հոգւոցն հանգուցելոց։

ՔԱՐՈԶ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա։

Վասն հանգուցեալ հոգւոցն աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս՝ զի զննջեալս ընդ արդարսն դասեսցէ. և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո և ողորմեա։

ԱՂՕԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողոր. Տէր ողոր.

Քրիստոս Որդի Աստուծոյ.

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն։ Հայր մեր որ յերկինս։

Օրհնեալ եղիցի...

## ՀԱՆԴԻՍՏԵԱՆ ԺԱՄԱՐԴՈՒԹԻՒՆ

կամ

## ՆԿԵՍՑԷ

## ՄԱՂԹԱՆՔ ՆԱՐԵԿԱՑԻՈՅՆ

ԲԱՆ ՂԲ.

Ի խորոց սրտէ խօսք ընդ Աստուծոյ

Ընկալ քաղցրութեամբ, Տէր Աստուած հզօր, զդառնացեալս զաղաչանս. մատի՛ր գըթութեամբ, առ պատկառեալըս դիմօք. փարատեա՛, ամենապարգեւ, զամօթական տխրութիւնս. բա՛րձ յինէն, ողորմած, զանըներելի ծանրութիւնս. անջրպետեա՛, հնարաւոր, ըզմահացու կրթութիւնս. օտարեա՛ մինչ յաղթող, ըզխաբողին հաճութիւնս. բացատըրեա՛, վերնային, ըզմոլեկոյն մառախուղ. կնքեա՛, կեցուցիչ, ըզկորուսչին ընթացմունս. ցըրուեա՛, ծածկատես, զըմբռնողին չար գտմունս. խորտակեա՛, անքըննին, ըզմարտողին դիմեցմունս: Տեառնագըրեա՛ քո անուամբդ ըզլուսանցոյց երդ յարկիս. պարփակեա՛

քո ձեռամբդ զաւատաղ տաճարիս· գըծագըրեա՛ քո արեամբդ ըզմուտ սենեակիս. կերպացս՛, զքո նըշանդ ի հետ եկից մաղթացիս· ամրացս՛ քո աջովդ ըզհանգստեանըս խշտի. մաքրեացե՛ս ի հողբից ըզծածկարան անկողնոյս. պահեացե՛ս քո կամօք ըզտառապեալ անձն ազւոյս. անխարդա՛խ արարցես ըզքո շնորհեալ շունչ մարմնոյս· կացուցե՛ս շրջափակ ըզպար զօրուդ երկնայնոյ· կարգեսցե՛ս ի դիմի ընդդէմ դիւացըն զասուն։ / Տո՛ւր հանգիստ բերկրութեան մահահանգոյնըս նիրհման ի խորութեան գիշերիս, բարեխօսութեամբ հայցուածոց Սրբուհւոյ Աստուածածնիդ և ամենայն ընտրելոց։ Ամփոփեալ պարուրեա՝ ըզպատուհան տեսութեանց զգայարանացս իմաստից, անզարհուրելի զետեղմամբ ի ծըփական խռովութեանց, կենցաղական ըզբաղմանց, անըրջական երազոց, խօլականաց ցընորից, յիշատակաւ քո յուսոյդ անվնասելի պաշտպանեալ։ / Եւ ըսթափեալ վե-

բըստին ի ննջմանէ ծանրութեան՝ ամենազգաստ արթնութեամբ՝ հոգեւորագզուարթութեամբ, ի քեզ արձանացիալ, զայս ձայն մաղթանաց, բուրմամբ հաւատոց քեզ ամէնօրհնեալ Թագաւոր փառաց անճառից, փառաբանուաց երկնազուարթ խմբից երգակցել՝ յերկինս առաքել: Զի դու, փառաւորեալ ես յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտենից· ամէն:

Կամ

Բան ԽԱ.

Ի խորոց սրտէ խօսք ընդ Աստուծոյ

Որդի Աստուծոյ կենդանւոյ, օրհնեալ յամենայնի, Հօրդ անհասի անքննին ծնունդ, որ ընկերանայ առ ի քէն և ոչ ինչ: Որ ի ծագել անըստուեր նշուլից ողորմութեան քո փառաց, հալին մեղք, հալածին դեւք, ջնջին յանցանք, խըզին կապանք, խորտակին շղթայք, կենդանածնին մահացեալք, բըժշկին հա-

բուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարըն, մեկնի մէգըն, մերժի մառախուղըն, փարատի մըռայլըն, ըսպառի ողջամուղջըն, վերանայ մութըն, գընայ գիշերըն, տարագրի տագնապըն, չքանան չարիքըն, հալածին յուսահատութիւնքըն, և թագաւորէ ձեռըն քո ամենակալ, քաւի՛չդ ամենայնի։ Որ ոչ եկիր կորուսանել ըզմարդկան ոգիս, այլ կեցուցանել, թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբըդ· զի դո՛ւ միայն ես յերկնի անճառ և յերկրի անզընին, ի տարըր գոյի և յեզըրս ծագաց աշխարհի· ըսկիզըբըն ամենայնի և յամենայնի, ամենայն լըմամբ օրհնեալ ի բարձունս. և քեզ ընդ Հօր և Հոգւոյդ Սրբոյ, փա՛ռք յաւիտեանս· ամէն։

## ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

Ասիկա առանձնական աղօթք մըն է, զոր յօրինած է Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետը (1166-1173), և կ'արժէ որ իւրաքանչիւր հայ քրիստոնեայ գոց գիտնայ:

*Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ, Հայր և Որդի և Սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց. և ողորմեա՛ քո արարածոց և ինձ բազմամեղիս:*

*Հաւատով խոստովանիմ և երկիրպագանեմ քեզ, անբաժանելի լոյս, միասնական Սուրբ Երրորդութիւն և մի աստուածութիւն, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի, հալածեա՛ ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան, և լուսաւորեա՛ զմիտս իմ ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս, և ընդունել ի քէն զխնդրուածս իմ. և ողորմեա.*

*Հա՛յր երկնաւոր, Աստուած ճշմարիտ, որ առաքեցեր զորդին քո սիրելի՝ ի*

խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յեր-կինս և առաջի քո, ընկա՛լ զիս որպէս զանառակ որդին, և ըզգեցո՛ ինձ ըզ-պատմուճանըն զառաջին, զոր մերկա-ցայ մեղօք. և ողորմեա՛.

Որդի՛ Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ, և առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիա-մայ. վասն մերոյ փրկութեան խաչե-ցար, թաղեցար և յարեար ի մեռելոց, և համբարձար փառօք առ Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, յիշեա՛ զիս որ-պէս զաւազակըն յորժամ գաս արքա-յութեամբ քով. և ողորմեա՛.

Հոգի՛ Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան և ի վերնատու-նըն, և լուսաւո՛րեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեղայ յերկինս և առաջի քո, մաքրեա՛ զիս վերստին աս-տուածային հըրով քով, որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալըն. և ողոր.

Անե՛ղ բնութիւն, մեղայ քեզ մըտօք իմովք, հոգւով և մարմնով իմով, մի՛

յիշեր ըզմեղս իմ զառաջինըս՝ վասն անուան քում սրբոյ. և ողորմեա՛.

Տեսո՛ղ ամենայնի, մեղայ քեզ խորհըրդով, բանիւ և գործով, ջնջեա՛ ըզձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ ի դպրութեան կենաց. և ողորմեա՛.

Քննո՛ղ գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, թողութի՛ւն շնորհեա մեղաւորիս, զի ի ծնընդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ քո ըզգայարանօք իմովք, և ամենայն անդամօք մարմնոյս. և ողորմեա՛.

Ամենախնա՛մ Տէր, դի՛ր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ո՛չ ևս հայիլ յայլոտս, և ականջաց իմոց՝ ո՛չ ախորժել լըսել ըզբանըս չարութեան, և բերանոյ իմոյ՝ ո՛չ խօսել ըզստութիւն, և սրտի իմոյ՝ ո՛չ խորհել ըզչարութիւն, և ձեռաց իմոց՝ ո՛չ գործել զանիրաւութիւն և ոտից իմոց՝ ո՛չ գնալ ի ճանա-

պարհս անօրէնութեան, այլ ուղղեա՛ ըզշարժումըն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ողորմեա՛.

Հո՛ւր կենդանի Քրիստոս, ըզհուր սիրոյ քո, զոր արկեր յերկիր, բորբոքեա՛ յանձն իմ, զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ ըզխիղճ մըտաց իմոց, և մաքրեսցէ ըզմեղըս մարմնոյ իմոյ, և վառեսցէ ըզլոյս գիտութեան քո ի սըրտի իմում. և ողորմեա՛.

Իմաստութիւն Հօր, Յիսուս, տո՛ւր ինձ իմաստութիւն ըզբարիս խորհել և խօսել և գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից և ի գործոց փրկեա՛ զիս. և ողորմեա՛.

Կամեցող բարեաց, Տէ՛ր կամարար, մի՛ թողուր զիս ի կամըս անձին իմոյ գընալ, այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողոր.

Արքա՛յ երկնաւոր, տո՛ւր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց քոց, և զօրացո՛ ըզսիրտ իմ ատել

ըզմեղըս և սիրել ըզՔեզ միայն և առնել ըզկամըս քո· և ողորմեա՛.

Խնամո՛ղ արարածոց, պահեա՛ ընշանաւ խաչի քո ըզհոգի և ըզմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւաց և ի մարդկանց անիրաւաց և յամենայն վըտանգից հոգւոյ և մարմնոյ· և ողորմեա՛.

Պահապա՛ն ամենայնի, Քրիստոս, աջ քո հովանի՛ լիցի ի վերայ իմ ի տուէ և ի գիշերի, ի նստել ի տան, ի գընալ ի ճանապարհ, ի ննջել և ի յառնել, զի մի՛ երբեք սասանեցայց· և ողորմեա՛.

Աստուա՛ծ իմ, որ բանաս ըզձեռըն քո և լընուս զամենայն արարածըս ողորմութեամբ քով, քե՛զ յանձն առնեմ զանձն իմ, դո՛ւ հոգա և պատրաստեա ըզպէտըս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչեւ յաւիտեան· և ողորմեա՛.

Դարձուցի՛չ մոլորելոց, դարձո՛ զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն, և բեւեռեա ի հոգի իմ ըզահաւոր օր մահուն և զերկիւղ գեհենոյն

և ըզուէր արքայութեանըն, զի զղջացայց ի մեղաց և գործեցից զարդարութիւն. և ողորմեա՛.

Աղբի՛ւր անմահութեան, աղբերացո՛ ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին, զի լուացից ըզմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և ողորմեա՛.

Պարգեւի՛չ ողորմութեան, պարգեւեա՛ ինձ ուղղափառ հաւատով և բարի գործով և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. և ողոր.

Բարերա՛ր Տէր, հրեշտակի բարւո՛յ յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել ըզհոգի իմ և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցըն, որ են ի ներքոյ երկնից. և ողորմեա՛.

Լո՛յս ճշմարիտ, Քրիստո՛ս, արժանաւորեա՛ զհոգի իմ ուրախութեամբ տեսանել ըզլոյս փառաց քոց ի կոչման աւուրըն, և հանգչել յուսով բարեաց յոթեւանըս արդարոց մինչեւ յօր մեծի գալստեան քո. և ողորմեա՛.

Դատաւո՛ր արդար, յորժամ գաս փառօք Հօր դատել ըզկենդանիս և ըզմեռեալըս, մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում, այլ փրկեա՛ զիս ի յաւիտենական հրոյն և լսել՛ տուր ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. և ողորմեա՛.

Ամենողո՛րմ Տէր, ողորմեա՛ ամենայն հաւատացելոց ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա՛ և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն՝ որ առ յիս յանցանացըն, և դարձո՛ զնոսա ի չարեացըն զոր ունին վասն իմ, զի ողորմութեանդ քում արժանի եղիցին, և ողորմեա՛.

Փառաւորեա՛լ Տէր, ընկա՛լ զաղաչանըս ծառայիս քո և կատարեա՛ ի բարի ըզխնդրուածըս իմ, բարեխօսութեամբ Սրբուհւոյ Աստուածածնին և Յովհաննու Մկրտչին, և սրբոյն ըՍտեփանոսի Նախավըկային և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին և սրբոց առաքելոց, մար-

գարէից, վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց միանձանց և ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց, և քեզ փա՛ռք և երկրպագութիւն անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ. յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ

Շրկն ԲԿ.

*Որ յանէից ստեղծող գոյից արարչակից Հօր բանդ Աստուած, թողութիւն շնորհեա ննջեցելոց քոց ծառայից. յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր։*

*Որ ի Հօրէ առաքեցար և մարմնացար ի Սուրբ Կուսէն, թողութիւն շնորհեա...։*

*Որ ի խաչին անշընչացար, զմահու լուծեր զիշխանութիւն, թողութիւն...։*

*Փառք Հօր. Այժմ և միշտ.*

*Որ պըսակիչդ ես քոց սըրբոց, և անվախճան բարեաց բաշխող, թողութիւն...։*

Ալէլուիա, ալէլուիա։

— Ի խորոց կարդացի առ քեզ, Տէր, Տէր, լուր ձայնի իմում։

— Եղիցին ականջք քո ի լսել ըզ-ձայն աղօթից իմոց։

Կամ

Շարական Գ·Ձ.

Գըթա Տէր ի հոգիս մեր ննջեցելոցն և յիշեա ողորմութեամբ. քանզի գինք սուրբ արեան քո են. ի յորժամ հրաշալի ձայնիւ փողոյն յառնեն մեռեալքն և կան առաջի ահաւոր քո բեմին։

Զընկըղմեալքըս յանհագին մեղաց ծովուս ապրեցո ի գեհեննոյն ըզդաւանողըս Սուրբ Երրորդութեանդ. ի յորժամ.

Փառք Հօր. Այժմ և միշտ.

Զլուսաւորեալքըս ծընընդեամբ սուրբ աւազանին մի՛ բարկութեամբ խրատեր, և մի՛ սրտմըտութեամբըդ քո յանդիմաներ. ի յորժամ հրաշալի։

Ալէլուիա, ալէլուիա։

— Մերձեսցին խնդըրուածք իմ ա-

ռաջի քո, Տէր, ըստ բանի քում իմաստուն արա զիս։

— Մտցեն աղօթք իմ առաջի քո, Տէր, և բանիւ քով փրկեա զիս։

Աւետարան ի Յովհաննէ և այլն

Սրբ Ներսէսի Շնորհալւոյն

Ժողովեալքս ի հրաւիրումն ձայնի քո յաշխարհէ. հայցեմք ի քէն արտասուելով և պաղատիմք զայս ասելով. ճանապարհ ընդ քեզ ելից նընջեցելոյս լեր ուղեկից. ի յօթեւանս հօր քո յուսոյ ըզնընջեցեալըս մեր հանգո։

Յամ

Քահանայք և ժողովուրդք հայցեմք ի քէն Տէր բարերարութ. ընդ նընջեցեալսըն հաւատով ընկալ ըզմեզ նովին յուսով. յերուսաղէմ քաղաք վերին յորում արդարքըն ժողովին. փա՛ռս վերերգել միշտ ընդ նոսին Երրորդութեանդ երրեակ անձին։

Ա.դ.

Ի վերին Երուսաղէմ ի բնակարանըս հրեշտակաց. ուր Ենովք և Եղիաս կան ծերացեալ աղաւնակերպ, ի դրախտին եդեմական պայծառացեալ արժանապէս. ողորմա՛ծ Տէր, ողորմեա հոգւոցըն մեր ննջեցելոց։

Կ.մ.

Անեղ խորհուրդ քահանային բազկատարած կայ ի բեմին. առաջի սուրբ սեղանոյն հուր չիջանի խաւար մերժի. ըղձամեալ հոգիքըն ուրախանան զի թողութիւն մեղաց լինի. ողորմա՛ծ.

## ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Դ.Զ.

*Թագաւոր գալով քո յաշխարհն մըտեր ի քաղաքն Երուսաղէմ. Նստեալ ի վերայ հողեղէն նոր յաւանակի, կոչել զհեթանոսս յերկրպագութիւն։*

*Ծերքն ոստովք ձիթենեօք և տղայքն ոստովք արմաւենեօք, և երամ երամ դասուքն աղաղակէին, ովսաննա օրհնեալ եկեալ ի յանունըն Տեառն։*

*Ցընծացաւ սուրբ Սիոն. բերկրեցան սուրբ եկեղեցիք, և խնդութեամբ բազմաւ ելին ընդ առաջ, օրհնէին զգալուստ քո, Փրկիչ, յաշխարհն։*

*Յորժամ եկըն Յիսուս յԵրուսաղէմ ի քաղաքն, ընդ առաջ ելին ծերքն ոստովք ձիթենեօք, և զԱստուածորդին փառաւորէին։*

*Ի լեռնէն ձիթենեաց տարածանէին մանկունքն զհանդերձս իւրեանց, և ոստս ի ծառոց բերեալ մատուցանէին Աստուածորդւոյն սուրբ Թագաւորին։*

*Ոստովք և տերևեալ ձիթենիօք Երբայեցւոց մանկունքն օրհնէին․ ուրախ լեր Երուսաղէմ քաղաք և ցնծա՛ Սիոն մայր եկեղեցի։*

*Զգալուստ քո Քրիստոս այսօր յԵրուսաղէմ նոր եկեղեցի սուրբ, յաղթական երգով բարեբանեմք․ օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։*

*Որ վասըն մերոյ փրկութեան յաւանակի նստիլ յանձն առեր ընդ մանկունսըն բարեբանեմք․ օրհնեալ։*

*Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանըդ քում պահեա՛ ի խաղաղութեան։*

*Ի յարութեան յաւուր գալըստեան Փրկչին, տարածանէին մանկունքն ըզհանդերձս, և անդադար ձայնիւ օրհնէին․ օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։*

*Ոստս ի ծառոց բերեալ մատուցանէին Աստուածորդւոյն առ ճանապարհաւն․ և անդադար․․․։*

*Ի ծերոց բըխեալ օրհնութիւն, և ի տղայոց փառաբանութիւն, և անդադար ձայնիւ օրհնէին․․․։*

ԱՁ.

*Որ վերօրհնի...* (Տե՛ս էջ 77)։

*Այսօր զանըսկիզբըն բանն որ յաթոռ փառաց ընդ Հօր յերկրի երեւեալ տեսաք․ քրովբէական ձայնիւն օրհնեսցուք․ օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։*

*Այսօր յաւանակ քերովբէ և տըղայքն եբրայեցւոց բարեբանեն․ օրհնութիւն որդւոյ Դաւթի, օրհնեալ...։*

*Այսօր զաւարճացան ափեղերք գալըստեամբ Աստուածորդւոյն յերուսաղէմ և զաշէին հնչմամբ երգով, օրհնեալ եկեալ...։*

## ԴՌՆԲԱՑԷՔԻ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

ԲՁ.

*Շնորհեա մեզ Տէր արթնութիւն ընդ իմաստուն կուսանացն, և զնոգւոց մերոց լապտերըս պայծառացո՛։*

*Երկնչիմք ի քէն Տէր զարհուրեալք ի պատասխանւոյն, զամէնն ասելով եթէ ոչ գիտեմ ըզձեզ։*

Յորժամ գաս փառօք Հօր դատել զաշխարհս ամենայն, շնորհեա և մեզ Տէր կալ ի յաջմէ քումմէ։

Բացցի մեզ դուռն ողորմութեան երկնաւոր փեսային, և մտցուք ի յառագաստ ընդ իմաստուն կուսանսն։

Ժամանեսցուք ընդ առաջ փեսային և մըտցուք ի յառագաստ նորա, զի մի՛ մնասցուք արտաքս որպէս զյիմար կուսանսն։

Պայծառասցին լապտերք հոգւոց մերոց և բազմեցուսցես զմեզ ընդ հրաւիրեալսն ի կոչումն արքայութեանն երկնից։

ԲԿ.

Իմաստուն կուսանքն պատրաստեալ իւղ լապտերաց, ելին ընդ առաջ երկնաւոր փեսային վառեալ լապտերօք։

Իսկ յիմարաց կուսիցն ունայնացեալք ի յիւղոյ, անպատրաստ գըտան գալըստեան փեսային շիջեալ լապտերօք։

Վասն որոյ և մեք պատրաստեսցուք իւղ հոգեւոր, զի մըտցուք ի յառագաստ անմահ փեսային վառեալ լապտերօք։

*
* *

Յոյս իմ ես դու, Տէր, քաւիչ յանցանաց իմոց․ մի՛ անտես առներ զըղջումն արտասուաց իմոց․ ողորմեա՛ ինձ Աստուած։

Առ քեզ ապաւինեցայ որպէս զանառակ որդին․ Հայր մեղայ յերկինս և առաջի քո․ ողորմեա՛․

Փրկեա՛ զիս Աստուած ի բազում մեղաց իմոց, արա՛ արժանի քոյին սուրբ արքայութեանդ․ ողորմեա՛․

*
* *

Մեղք իմ բազում են յոյժ, ծանր են քան զաւազ ծովու․ քանզի քեզ միայնոյ մեղայ, ողորմեա՛ ինձ Աստուած։

Բա՛ց Տէր զդուռն ողորմութեան, որ զղջալով կարդամ առ քեզ, քանզի քեզ միայնոյ մեղայ, ողորմեա՛․

Հե՛ղ յիս զգթութիւնդ քո բազմողորմ և մարդասէր, քանզի քեզ միայնոյ մեղայ, ողորմեա՛․

ԿԶ.

*Թագաւոր փառաց քեզ պատուեսցուք պատարագանօք օրհնութեամբ. ՚զատաջել որ զօր ի զասել վերինն:*

*Անապատ վանեալ լապտերըք հաւատոյ ընդ զօտի իմաստուն կուսանացն. մըտանել ի յատաշատ ընդ երկնաւոր փեսային:*

*Փութասցուք կանխել յառաջ քան ըզձայն աստուածային բարբառոյն. զի մի՛ մնասցուք արտաքս ընդ չիջման հինգ կուսանացն:*

ԿԷ.

*Զարթմութեան քո զկուսն բա՛ց մեզ Տէր. և արժանի արա՛ ըզմեզ լուսեղէն յարկաց քոց ընդ սուրբըս քո:*

*Ի պատարագել քո յօթնվամնըս սըրբոց քոց ընկա՛լ և ըզմեզ Փըրկիչ յորդեգրութիւն ի զըգրութեան կենաց:*

*Ի նըստել քո յաթոռ դատաւոր ահեղ խնայեա՛ յարարածըս քո բարեխօսութեամբ և աղօթիւք սուրբ ծընաւորացն:*



## ՈՏՆԼՈՒԱՑԻ ԵՐԳԵՐ

Սաղմոս Ծ. ողբային

— Ցօղեա՛ յիս մշտկու և սուրբ եղէց, լուա՛ և քան ըզձիւն ըսպիտակ եղէց։

— Ողորմեա՛ ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէնութիւնս իմ։

Առաւել լուա՛ զիս յանօրէնութենէ իմմէ. և ի մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ Տէր, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս ի բանըս քո· և յաղթող ի դատել քեզ։

Անօրէնութեամբ յղացայ, և ի մեղըս ծընաւ զիս մայր իմ։

Դու Տէր ըզճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և ըզծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա՛ զիս մշտակաւ և սուրբ եղէց, լըւա՛ և քա՛ն ըզձիւն սպիտակ եղէց։

Լըսելի՛ արա ինձ Տէր ըզցընծութիւն և զուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսըս քո ի մեղաց իմոց· զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն։

Սիրտ սո՛ւրբ հաստատեա յիս Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա՛ ի փորի իմում։

Մի՛ ընկեներ զիս Տէր յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան քո, և հոգւով պետութեան քոյ հաստատեա՛ զիս։

Ուսուցից անօրինաց ըզճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա՛ զիս յարենէ Աստուած, Աստուած փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։

Տէր եթէ ըզշըրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ո՛չ հաճեցար։

Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ, ըզսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ո՛չ արհամարհէ։

Բարի՛ արա Տէր կամօք քովք Սիոնի, և շինեսցին պարիսպքն Երուսաղէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան. յորժամ ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս։

Փառք Հօր և Որդւոյ. Այժմ և միշտ։

Համբարձէ Ա.Ն.

Այսօր կանգնեցաւ աւազան մըկըր-

տութեան ի թողութիւն մեղաց մերոց։

Այսօր Տէրըն մեր լըւանայր զոտս աշակերտացն և պատուիրէր զայս առնել։

Մի ոմն ի ձէնջ եղբարք մատնելոց է զիս ի մահ և որոշի յաշակերտացդ։

Զայն լըւեալ Պետրոսի ակնարկէր առ Յովհաննէս՝ հարցանել թէ ո՞վ իցէ։

Բանըն զոր ասաց Յիսուս՝ տըրտմեցոյց զիւր զաշակերտսն և խռովեցան ամենեքեան։

Քարոզ Եղանակաւ

Աստուած մեծ և սքանչելագործ զօրութիւն. անեղանելի՝ բնութիւն, որ ողորմութեամբ հաճեցար առնել զարարածս ամենայն յոչընչէ. աղաչեմք։

Լո՛ւր Տէր եւ ողորմեա՛:

Զըգեցեր զվերնայարկս երկնից որպէս խորան ի վերայ ջուրց. մածուցեալ հաստատութեամբ ի բնակութիւն անպարագրելի աստուածութեանդ քոյ. և զամենայն հրաշակերտս ի գովեստ անուանդ քում սրբոյ. աղաչեմք։ Լո՛ւր Տէր.

*Եղեր լրումն օրինաց և մարգարէից. և եկիր կամաւ ի վերնատունն խորհրդոյ. լըւացեր զոտս աշակերտաց քոց անճառելի խոնարհութեամբ. աղաչեմք:* Լո՛ւր Տէր:

*Եւ ետ առնել զյորդորումն սիրոյ և ըզգործըս բարեաց պարգևել մեզ խնդրեմք:* Տո՛ւր մեզ Տէր Աստուած:

*Զանձինըս մեր և ըզմիմեանըս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:* Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

*Ողորմեաց մեզ, Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:*

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, լո՛ւր Տէր եւ ողորմեա:

Գ–նձ

*Այս խորհուրդ լըցաւ. անդ գուշակեցաւ. աստ կատարեցաւ:*

*Աստուած մարդացաւ. ՚նդ օրինօք մըտաւ. քահանայացաւ:*

*Նոր խորհուրդ բացաւ. որ ի ծունկս անկաւ զենջակ ըմփածաւ:*

*
* *

*Տէր քոյին շնորհաւ. լըւա զմեզ բաղկաւ. տուր՛ բաժակաւ։*

*
* *

Ահա ազատեա՛ ըզմեզ ի մեղաց. Քաւիչ յանցանաց. աղաչեմք:

Լո՛ւր Տէր եւ ողորմեա՛:

*
* *

*Սիրտ իմ տատանի. սարսափ զիս ունի. վասըն Յուդայի։*

*Նա ո՛չ ամաչէ. եւ ո՛չ զարհուրի. սիրողն արծաթի։*

*Նոր սեղան դընի, եւ հաց բաղարջի. ՝անապակ գինի։*

*
* *

*Տէր իմ արժանի արա՛ զմեզ հացի, քո սուրբ սեղանի։* Ահա ազատեա՛...

*
* *

*Որք որ փափաքին ուտել զայն մարմին որով սըրբեսցին։*

*Խոնարհիլ պարտին իւր յանցաւորին ՝ստ օրինաց Փրկչին։*

*Թողուլ կամովին զյանցանս ի սըրտին զեօթանասնեկին։*

*
* *

Իսկ աստուածային բնաւ ոչ սահմանին մեր բազմողորմին։ Ահա ազատեա՛...

*
* *

Աստուածն ամենի, Միածին Որդի, կամաւ Հօր Հոգւոյն ճշմարտի, յերկիր խոնարհի։

Ցընծասցուք հոգւով, զնոյն ճաշակելով. փառք Հօրըն տացուք, և Հոգւոյն. Միածնի մարմնով։

Շարական Գ.Ձ.

Վերաձգողն երկնից մըշտնջենաւոր Հօր Որդին ներգործեալ իմալս ի վեր քան ըզհրաշս, ծառայի առեալ ըզկերպ անկողոպտելի աստուածութեամբն։

Բանին զմաքրեցելոցն Ջրով զոտըս լըւանայ. զի զխոնարհութիւն ի նոսա ապաւորեսցէ, Երրորդութեանըն զոլ օթեւան։

Բաշխէ զմարմին իւր և զարիւն, նոր ուխտ անուանեալ. և յիշատակ կամաւոր մահուանն, մերձեցելոցս ի ան սըրբութեամբ։

## ԽԱՒԱՐՄԱՆ ԳԻՇԵՐ

### Երգ Ներսէսէ Շնորհալւոյն

Այսօր անճառ լուսոյն ծագումն ի փրկութեան մեր կատարումըն. խոնարհի ի վերնատունն ի ստուերական տօնից լըրումն. Նախ քան զընթրիսըն խորհրդոյ սփածու զենջակ արկօղն լուսոյ. և ջուր առեալ ծառայաբար զոտս լուանայր աշակերտացն։

Բանին Հօր փառաց լուսոյ Պետրոս մերձիլ յոտս ոչ ներէր. այնըմ ձեռաց որոյ են գործք երկնից երկինք և երկրաւորք. որով կուրաց աչըք բացան խուլք և համերք արձակեցան. որ վերածեաց զինքն ի ծովէն սաստեաց ալեացն և լըռեցին։

Գըլխոյն ընտրեալ հօտին փոքու սաստէր զխորհուրդն ոչ գիտելոյ. որով լուանայր և հնազանդէր զոտս և ըզգլուխս մաքրէր մաղթէր. գըլխոյս ասէ չէ՝ ինչ պիտոյ լուացումըն ջրոյ զի լուացեալ է. ոտիցըդ պէտք են մաքրու-

թեան յօդիլ ի գլուխըս սըրբութեամբ։

Դասուց իւրոց աշակերտաց զոր նախ բանիւ վարդապետեաց. այսօր գործով ըղձայրագոյն եցոյց յինքեան զխոնարհութիւն. սպասաւորեալ հողեղինաց այն որ անտեսն է հրեղինաց. առեալ պաշտօն իւր ծառայիցն այն որ պաշտին ի սրովբէից։

Եթէ Տէրս ասէ էից և վարդապետըս բոլորից. զաշակերտացդ և զծառայից զոտըս լուացի ի հնոյ աղտից. միմեանց և դուք համաբնութեամբ ցուցէ՛ք ըզնոյն խոնարհութիւն. բարձրացելոյն ի կործանումն և անկելոյ բնութեանդ կանգնումն։

Զոր մաքրեցեր յաւազանին մաքուր ձեռօք զոտըս նոցին. և ուսուցեր խոնարհութեամբ յաղթող լինել չար հըպարտին. և զիս լըւա՛ զտիղմըն մեղաց աղաչանօք սըրբոյ գընդին, և ըղձընացս ուղղեա՛ զոտին խոնարհութեամբ ելիւք յերկինս։

* * *

Ելից զօրէնսըն Մովսէսի զոր խօսե-
ցաւ ի Սինայի. եկեր ըզգառն օրինա-
կին և ըզբաղարջն ընդ եղեգին. ըզհինն
ի նորըս փոխելով զըստուերըն ի լոյս
ճշմարտելով. փոխան զատկին ինքըն
զոլով զատն Աստուծոյ նըւիրելով։

Ընդ բաղարջին հաց անխըմոր եւ
ըզմարմինն իւր զերկնաւոր. ըզկուսա-
ծինն անսերմնաւոր զանապականն և
զհոգեւոր. ընդ ոչխարին արեանն ուխ-
տին եւ մեզ զարիւնն իւր ուխտ կրկին.
և եղեգան դառնագունին փոխան ըզ-
վարս աստուածային։

Թագաւորն արարածոց զհացըն կենաց
եւ քաղցելոց. և ըզբաժակն ուրախա-
րար որք յԱդամայ տըրտմեցելոց. այս
նոր ուխտ է իմոյ արեան փոխան հընոյ
ուխտին արեանց. զոր յիշատակ իմ առ-
նիցէք մինչեւ եկից ես միւսանգամ։

Ժողովեալքս ի քէն հայցեմք ընդ ժո-
ղովեալ մեծատանին, որ զկենարարըդ
քո մարմին բաշխեալ ետուր ընդ բա-

ժակին. շնորհեա՛ և մեզ Տէր ընդ նոսին հաղորդ լինել քում սեղանին. կենաց հացին յոր փոփոխեմք և ըմպելւոյդ ում ծարաւիմք։

Ի յընթրեաց աշակերտացն Յեսուս մեկնեալ ի սուրբ գաւառոյն. զբարձող մեղաց զգառն Աստուծոյ՝ մատնէր ի մահ ընդ արծաթոյ. ի յընթրիսն հոգևոր մերձի ժպիրհն և նենգաւորն. ուտելով ընդ վարդապետն յաճախէ զխաբէութիւն։

Լոյսն խօսէր աղերսալի խաւարելոյն վասն գործի. մի ոմն ի ձէնջ ասէ եղբարք զիս մատնելոց է առ ի մահ. Պետրոս լռեալ գոյն զարհուրէր և ակնարկէր առ Յովհաննէս. հարցանել թէ ո՞վ իցէ դաւաճանող վարդապետին։

*
* *

Խնամով սիրոյն յիւր սիրելեացն ըզտրտմութիւնն փարատեաց. թացեալ պատառ առոյ Յեսուսի ներշնչեալ զգօղըն մատնիչ. զոր առեալ և մերկացաւ յաստուածային հոգւոյն շնորհաց.

մատնեցաւ նախաչարին ընդ մատնութեան վարդապետին։

Ծայրագոյն լուսոյն զըրկեալ խաւարասէրն արտաքս ելեալ. Տէրըն յայտնէր լոյս եղելոցն ըզգայթակղելոցն ի գիշերի. Պետրոս խօսէր խրախուսելի և կըշտամբիչ հաւախօսի. զիւրն յաշխարհէ զփախիլն ասէր և ըզգալուստ հոգւոյն պատմէր։

Կեդրոնեան յայնկոյս ձորոյ ի վերնատունն եւ խորհըրդոյ. եմուտ պարտէզ ընդ պարտիզի եմոյծ զԱդամ յադին դըրախտին. մուծցես և զմեզ Տէր ընդ նըմին ուստի հաներ նախ զառաջինն. զի ժառանգել ըզհայրենին արժանաւցուք մեք վերըստին։

Հոգայր ըզկրիցըն տըրտմաբար երիւքն եղեալ առանձնաբար. փըրկել զաշխարհս հոգիս յօժար բայց է բնութիւն մարմնոյս տըկար. ո՛չ ոմն ուժեղ և զօրաւոր և ոմն անզօր վըտանգաւոր. այլ մի և նոյն գոլ միաւոր կըրէր ըզկիրսըն կամաւոր։

Ձայնիւ մաղթէր աղօթական վասն իմ առ Հայր իւր էական. Ծունր դնէր խոնարհական որում կրկնի ծունր ամենայն. եթէ փրկել մարդկան հնար է առանց մահու իմ որ գրեալ է. բաժակ մահուս յինէն անցցէ՝ ո՛չ իմ կամաւ այլ քոյդ եղիցի։

Դողեալ յերկիւղ քերովբեանց համան ոլոռնաձեւ կոյլակ վիժման. ի զօրանալ հրեշտակ մերձեալ զօրինական գիրըն լըցեալ. զի կատարեալ էառ զընութիւն Աստուածըն բան ըզմարդկութեան. պարտ էր զերկիւղ եւ զտըկարութիւն յիւրումըն կրել անօրէնութիւն։

*
* *

Ճառագայթ փառաց էին որ ըստ բնութեանըս մարդկային. առաջնորդեցար ի գիշերին աղօթեցեր առ Հայր յերկինս. ծագեա՛ ի մեզ զլոյս երկնային եւ փարատեա՛ զերկիւղ չարին. մատունք հագուոց մեր եւ մարմին յերկիւղ քո ոսկերք բնակեսցին։

Մերձեալ Յուդաս որ մատնելոց հան-դերձ դասուն Փարիսեցւոց. անկան նը-ման սարսափելեացն որք յուխտն չեն կանգնելոց. Յուդաս նենգաւ համբուրե-լով առիթ մահու նշան տալով. փոխան սիրոյ զնա մատնելով չար ընդ բարւոյ վըճարելով:

Յայնժամ առ գութ սիրոյն Պետրոս ըղձաւայրին անուն Մաղքոս. հատ սու-սերբ զականջն աջոյ որ ո՛չ լըսաւ Տեառ-ըն խօսոյ. բայց Տէրըն մեր արագապէս ականջըն մերձեալ բըժըշկապէս. առող-ջացոյց աստուածապէս զոր ո՛չ տեսին կուրացն հանդէս:

Նոր հոտին փաքու ըղրուեալ քանզի զհովիւըն քաջ հարեալ. Պետրոս միայն ըղձեա երթեալ ի յաղջկանէ վիմին չար-ժեալ. Նըշանակեալ հաւըն խօսէր առ ի Պետրոս Տէրն ակնարկէր. զլացըն յի-ջէր դառն արտասուէր ի գլարմանէն զարձեալ կանգնէր:

Ծնորհեալ վիմին եկեղեցւոյ զոր պա-հեցեր ի հասելոյ. և կանգնեցեր ի գլո-

բեկոյ վասըն սըրտին արտասուելոյ. կանգնեա՛ և զիս Տէր ընդ նըմին ի գլորմանէ սայթաքողին. տալով աչացս յորդ արտասուս և ջուր նըման ծովու գըլխոյս։

Ով կամաւ զանկապելին կապեալ ըղձեաս արձակողին. ի յապարանսըն անէին Կայիափայ և Աննային. ծառայն զերեսն այն ապտակէր յորմէ սրովբէն թեւաքօղէր. Թուք արձակեալ պիղծ բերանովն յայն որ կուրին լոյս ծագեաց թքովն։

* * *

Զոր կապանաց մարդկան լուծիչ որ կապեցար ընդ կապելոյն. զիս արձակեա՛ յինքնակապէս մեղաց կապից դըժոխայնոյն. որ ընդ մեղօք պարտաւորին կացեր անմեղդ ի յատեանի. յորժամ փառօք գաս հայրենի մի՛ դատեսցես զիս ընդ նոսին։

Պատկառանօք հինն Ադամայ որ ձաղեցար վասըն նորա. Ջընջեա՛ զամօթ մեղաց լըրբին որով զերեսս իմ ծածկե-

ցին· որ ներկեցեր չոր ծառոյն աճել ձեռօք քեզ ապտակին· հա՛ր ուժգնակի զդէմըս չորին որպէս և զիս եհար ուժգին։

Ջահըն լուսոյ յաստուածին ի յՄերբա-թաւն հընոյ զատկին· կայր առաջի դա-տաւորին ծառայն նըստէր ի յատենին· ի հարցանել Պիղատոսի Տէրն ո՛չ տանէր պատասխանի· զի կանխասաց գիրըն Լեցցի եղէ ես մարդ որ ո՛չ լսոյի։

Ռամկական զօրք զինուորացն արկին հանդերձ նախատանաց· այնմ որոյ զգեստն է լոյս փառաց իբրև զօթոց զինքեամբ արկած· ի ձեռն իջեալ կա-տակէին զգլուխն եղեգամբ հարկանէին· պըսակ ի փշոց բոլորէին ըզփուշ մե-ղացըն բարձողին։

Սոսկալին քերովբէից բառնայր ին-քեամբ ըզփայտ խաչին· մինչ ի տեղի Գողգոթային յորում եղեալ մարդն ա-ռաջին· ետուն ըմպել գինի զմըռսեալ, և կերակուր լեղեաւ խառնեալ· որով զպըտղոյն դառըն ճաշակ փոխեաց. մեզ քաղցր և ախորժակ։

Վերնականքըն գարնուրեալ տեսին ըզՏէրըն մերկացեալ. և ըզհանդերձըն բաժանեալ պատմուճանին վիճակ արկեալ. ըզձեռսն և զոտըն ծակեցին ըստ յայտնապէս դաւթեան ձայնին. ընդ փայտ խաչին բեւեռեցին զմատունսն որ գրեաց ի տախտակին։

⁂

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց ոտք ընդ ոտից ընթանալեաց. փայտ ընդ փայտի զաւըն պըտղոյ կեանք ընդ մահու փոխարկելով. ի մէջ երկուց անօրինաց կայր մերկացեալ տուողն օրինաց. զոր ո՛չ տեսին ազգըն կուրաց բայց ի միոյն յաւազակաց։

Րոպէից արեգականն ըզտիւն արար գիշերանման. զըստուերըն քօղ արկ մերկութեան զի մի՛ տեսցէ ակն անարժան. ի միջօրեայն նըսեմացաւ յորժամ Ադամ մեղօք մեռաւ. ի յիններորդն ի լոյս դարձաւ յորժամ մահուամբ մահըն լուծաւ։

Ցօղէր արտօսր ցաւագին մայր Տեառն որ կայր մերձ առ խաչին. յորժամ լսէր ըղձարաւին բարբառելոյ իւր Միածնին. ետուն քացախ խառնեալ լեղի այնմ որ բղխեաց զկեա՛ յաւիտենից. և ի վիմէն վըտակ բարի արբոյց տոհմին դառնացողի։

Խիւծեալ յերրորդ ժամու օձին զմիտըս նախնւոյ մօրն Եւայի. ի վեցն անկեալ մարդն առաջին հաւանական բանիւ նորին. ի սոյն ժամու Տէրն ի խաչին զի քաւեսցէ զմեղըս նոցին. և յորժամ ել Ադամըն հին եդ զաւազակն ի մէջ դրախտին։

Փարելի բարբառ ընդ իմ էլի էլի առ Հայր գոչէր. զհոգին կամաւ Հօրն աւանդէր զհոգիս մարդկան նոյն ընծայէր. երկիր հիմամբք սասանեցաւ և վարագոյրն ընդ մէջ հերձաւ. վէմք ի յինքեանց պատառեցան և գերեզմանք մահու բացան։

Քարոզի ի սքանչելեացս Աստուած մարմնով վասն իմ խաչեալ. մերով

բնութեամբքս մնասնի Աստուած անմահ խոստովանի. կրկնամբատկ կոչին ող-բերրք եկեղեցի իւր հաստատի. ջրովըն մաքրի զարիւնն ըմպէ զՈրդի ընդ Հօր փառաւորէ։

*
* *

ԻԿ. ԴԿ.

Նորոգող տիեզերաց որ զգեցուցեր մեզ լոյս փառաց. արկեր ըզքեւ ի զի-նուորաց քղամիդ կարմիր նախատանաց. մերկեա՛ յինէն ըզքուրձ մեղաց ըզտըրտ-մութիւն արհամար նեբկած. և ըզգեցո՛ զուրախութիւն ըզպատմուճանն իմ զա-ռաջին։

Երկնաւոր թագաւորիդ ի ծունր ի-ջեալ խաղ առնէին. ծածկեալ ըզգլուխըդ կըռփէին և եղեգամբ հարկանէին. և զիմ ընկեալ մինչ ի գետին ի հնազան-դել կամաց չարին. մի՛ թողուցուս խա-ղալ ամին այլ կանգնեսցես զիս վերըս-տին։

Բամեալ բեւեռըդ քո մարմին յետ վըճըռոյ դատաւորին. սատակ էառ

զհարուած գանին վասըն գանից նա-խատակըծին. զիս որ յոտից մինչեւ ցը-գլուխ ցաւօք նեղիմ անհընարին. ո-ղջացո՛ դարձեալ կըրկին որպէս շնոր-հօք յաւազանին։

Սըրբափայլ պըճնեալ զարդուն, զոր զգեցուցեր Ահարոնին. փոխան պըսակ ի փշոց եդին մըշակք այգւոյն իսրայե-լին. ըզփուշ մեղաց հանցես յինէն զոր յիս եհար իմ թըշնամին. և ողջացո՛ զխայթուած վիրին զի ապիք մեղացըն ջընջեսցին։

* * *

ԲՁ. ԴՁ.

Ետուն ըմպել քեզ ըզլեղին և ըզքա-ցախն ի ծարաւելն. արբեր կամաւ զի քաղցրասցին ճաշակք պըտղոյն դառնա-գունին. ըզդառնութիւն թիւնաւորին զոր ի մասունս հոգւոյս արկին. հեր-քեա՛ ի բաց հանգերձ ամլին և քաղ-ցրասցի սէր քո ի սմին։

Սպեղնեալ ծառոյ մահաբերին այնմ որ բուսաւ ի մէջ դրախտին. փոխան

բարձեր ըղփայտ խաչին ի Գողգոթա հաներ տեղին. զիմ առ ի մեղս անկեալ զոգի և ծանրագոյն բարձող բեռին. բա՛րձ ի յուսոյդ ըստ ոչխարին հա՛ն ի յերկինս յուխտեալ տեղին։

Ի յՈւրբաթու ժամ երրորդին բևեռեցար Տէր ի խաչին. լուծեր զկապանս նախաստեղծին և կապեցեր զթշնամին. զիս ամրացո՛ ընդ հովանեաւ կենդանարար քո նշանին. և ի ծագելն յարևելից լուսաւորեա՛ լուսով նորին։

Երանեալ աւազակին բացեր զդրուռն դրախտին. ըստ հաւատոյ սրտի նորին կատարեցեր զխնդրելին. տո՛ւր և ինձ Տէր ընդ նմին լսել զնոյն պատասխանին. այսօր ընդ իս իցես յադին ի հայրենիս քո առաջին։

*
* *

Ա.Կ. Գ.Կ.

Բարբառելով զէյլի էլին հիմունք երկրի տատանէին. և վարագոյր հին օրինին վերուստ ի վայր պատառէին. արդ ընդ վիմացն որ շարժէին շարժեա՛ զան-

չարժ սիրտս ի բարին. ընդ պատառել վարագուրին զիմ պատառեա՛ ըզգիր պարտին։

Արեգական լոյս քօղ արկեալ խաւարանայր միջօրէին. և գերեզմանըք բանային մարմինք սրբոցըն յառնէին. ընդ խաւարել լուսաւորացն, մաքրեա՛ յինէն զգործ խաւարին. ընդ մեռելոցն որք յառնէին կանգնեա՛ զմեզօք մեռեալ հոգիս։

Նոր սիրոյ պատուիրանին գործով լըցող եղեր բանին. աղօթելով առ Հայր յերկինս թողուլ ըզմեղս որ ի խաչին. ինձ որ հոգւովս հատուցեալ երկըրպագեմ քեզ Միածին, թո՛ղ ըզլուծումըն հրամանին մի՛ յիշեսցին մեղքն առաջին։

Սարսեցին սանդարամետք ի յաւանդել առ Հայր զհոգին. որ ի դժոխս իջեր ներքին ի բանտ մահու և խաւարին. կապեալ զիշխանըն մահածին, հաներ զհոգիսն որ ի բանտին. և զիս հանցես Տէր ընդ նոսին բանտէ մեղաց աղջամըղջին։

*
* *

ԱՁ. ԳՁ.

Աղբերացն անապական որ յետ մահուն անմահարար, բըխեալ ի քէն վըտակ կըրկին ի նորոգումըն կողածնին. բա՛ց ըզբերան իմ յարբուցումըն քո արեան կենարարին. լըւա՛ դարձեալ յաւազանին թէ ո՛չ շնորհօք այլ արտասուօք:

Յանմահից մեռանելոյ զմեռեալ հոգիս կենդանացո՛. թաղմամբ ի նոր գերեզմանի զթաղեալս ի մեղըս վերածե՛. ի գբի ներքնումն իջանելով ի գբոյն մեղաց վերաբերեա՛. ի ստուեր մահու քո բնակելով լուսաւորեա՛ և զիս հոգւով:

Սիրտ իմ առ քեզ աղաղակէ բանդ որ ընդ Հօր ի սկըզբանէ. որ կամաւոր վասըն մարդկան կրեցեր մարմնով զայս ամենայն. ինձ լըսելի արա՛ ըզձայն յարքայութեանըդ քո կոչման. ընդ ժողովոյն անդ անդրանկացն օրհնել ըզքեզ մինչ յաւիտեան:

Երգ

*Զարհուրեցան զօրք երկնային,*
*Յորժամ տեսին զՏէրն ի խաչին,*
*Արեգական լոյս քող արկեալ,*
*Եւ լոյս լուսնին նուաղեցաւ.*
*Յանեղ փառաց Աստուածորդւոյդ*
*Խաւար եղեւ ընդ տիեզերս.* ողորմած...

## ԿԱՐԳ ՋՐՕՐՀՆԵԱՑ

Շարական ԴՁ.

*Լոյս ի լուսոյ...* (Տե՛ս էջ 76)

Գիրք և Աւետարան

Քարոզ

*Վասն ի վերուստ խաղաղութեան՝ և փրկութեան անձանց մերոց, ըզՏէր աղաչեսցուք։*

*Վասըն խաղաղութեան ամենայն աշխարհի՝ և հաստատութեան սրբոյ Եկեղեցւոյ, ըզՏէր աղաչեսցուք։*

*Վասն առաջիկայ ջրոյս՝ և որ հանդերձեալ են հաւատով ընդունել զօրհնութիւն ի սմանէ, ըզՏէր աղաչեսցուք։*

*Վասն ընդունելոյ սմա զօրհնութիւնն Ցորդանանու շնորհօք Միածնին՝ որ լուսաւորեաց ըզմեզ, ըզՏէր աղաչեսցուք։*

*Վասն իջանելոյ Հոգւոյն Սրբոյ ի ջուրըս յայս՝ և վերածնելոյ որք մըկրտին և լինին որդիք լուսոյ և ճշմարտութեան, ըզՏէր աղաչեսցուք։*

վասըն լինելոյ սըմա ի բըժշկութիւն հոգւոց և մարմնոց, ըզՏէր աղաչեսցուք։

Յիշելով զԱստուածածին սուրբ կոյսըն Մարիամ և ըզմկրտիչըն Յովհաննէս՝ և զամենայն սուրբըս, և նոքօք, ըզՏէր աղաչեսցուք։

Եւ եւըս միարան...
Զանձինըս մեր...
Ողորմեա՛ց մեզ... } Տե՛ս էջ 125

Օրհնութիւն ջրոյ սրբոյն Բարսղի Կեսարացւոյ

Բարսղ Յովհաննէս Պօղոս Վարդապետին Մարծարեցւոյ

Յամենա՞յն ժա՛մ օրհնե՛մք զօրհնեալ Փրկի՛չդ էմմանուէ՛լ. ծընար ի՛ կուսէն և վերստին ծննդեամբ մկրտեցա՛ր այսօր ի Յորդանա՛ն ի Յո՛վհա՞ննէ. նո՞րի՛ն բարեխօ՛սութեամբ ընկալ զաղաչա՛նս քոց պաշտօնէի՛ց. աղաչեմք։

Լուր Տէր եւ ողորմեա:

Որ սրբե՞ցե՛ր ըզջուրսն Յորդանանու՝ սը՛րբիչդ աշխարհի՛. տալով ըզկնիք նո՛րոգման որդւո՛ց Սի՛ո՞վնի. տուր մաքրո՞ւթի՛ւն սուրբ Եկե՛ղեցւոյ, և ազատութիւն

քո՛ւմ ժողովրդեա՜ն. աղաչեմք։

Լուր Տէր եւ ողորմեա։

Հեղցի՞ս Տէ՛ր, ի մեզ ըզշնո՛րհս Հա-գւոյդ՝ զոր ընկալա՛ր առօրէնութեամբ ի Յորդանա՜ն, զհոգի իմա՛ստութեան, գիտութեան և զօ՛րութեան. զհոգի հան-ճարո՛յ և խորհրդոյ աստուա՛ծպա՜շ-տո՞ւթեան. լը՞ցո՛ ըզմեզ հոգւո՛վ երկիւղի քո՛յ. աղաչեմք։

Լուր Տէր եւ ողորմեա։

Ի հա՞ղբի՛ց թշնամւոյն պարսպեա՛լ ամրացո սո՛ւրբ զեկեղեցի՛, և յանուն քո ժողո՛վելոցս շնորհեա զքաւութիւն և ըզ-թո՛ղութիւն, միածին Որդի՛ Ա՜ստո՞ւծոյ. յի՞շեա՛ զհոգիս ննջեցելո՛ց մերոց և այ-սրա՛ ի քում գալստեա՜նդ. աղաչեմք։

Յիշեա Տէր եւ ողորմեա։

Եւ եւս առա՞ւե՛լ՝ զյորդորո՛ւմըն սի-րոյ և ըզգործըս բարեաց պարգե՛ւել մեզ խնդրե՜մք։

Տուր մեզ Տէր Աստուած։

Բամեա ըզցը՞րուեա՜լսն ի մի միաբա-նութի՛ւն յուսոյ հա՛ւատոյ և սիրո՜յ, ի

հնազա՛նդութիւն քոյոց աստուածայնոց պատուի՛րա՟նաց. ի վայե՟լո՛ւմն երկնայնոց հայրականաց քոյո՛ց օթեւանա՛ց. աղաչեմք։

Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Գաչմամբ Տիրո՟ւհւո՛յ ինկապէս մօր քոյ և՛ կուսի Մարիամո՛ւ Աստուածածնի՛ն. և հուպ եղելոյ քեզ՝ հողանիւթ հրե՛շտակին՝ ի Յորդանան այսօր ըզքեզ ձեռնադրողի՛ն. կրկին բացողի՛ն զերկինս՝ սրբոյն Ստեփանոսի Նախավըկայի՛ն, և հօրը՛ն մերոյ՝ սրբոյն Գրիգորի՛ Լուսաւորչի՛ն. և ամե՟նա՛յն սրբոց քոց, Տէր, որք յաւի՛տենից քե՛զ հաճոյացա՛ն. աղաչեմք։

Տեր ողորմեա, Տեր ողորմեա՛, լուր Տեր եւ ողորմեա:

Ցորդորակ՝ է Գրիգորի Կաթողիկոսի

Ով զարմանալի, խորհուրդ այս մեծ յայտնեալ. արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ։

Կամէր մըկըրտիլ ի ծառայէն իւրմէ,

*չառնոյր կարապետն, ըզմըկըրտելն ի յանձն:*

*Յորդանան լըռեալ, փոխըստական դառնայր. վըտակ առ վըտակ, պատգամաւոր լինէր:*

*Գետ մի՛ զարհուրիր, քո արարիչն եմ ես. եկեալ մըկըրտիմ, և լըւանամ ըզմեղս:*

*Այսօր ձայնըն հայրական յերկնից իջեալ հաճոյական սիրեցելոյ Որդւոյ վըկայն. ա՛յ յորդորէ, գետ յորդորէ գետ Յորդանան. յորդորական ձայնիւ երգէր՝ մեծ կարապետըն Յովհաննէս:*

Այդ տնէցեն է ձայն շեան մէ մեան
· Ի տղերըն եղանակեն

ԱմէՆ. ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա:

ԹճՆյ. *Օրհնեսցի և սրբեսցի ջուրս...:*

(Նրէցա կրկնեա՛):

Նա ադա հանեալ վեան է ձայն երգեն չարական

*Առաքելոյ աղաւնոյ...* (Տե՛ս էջ 78):

Սրկ. *Ս. խաչիւս...* (Տե՛ս էջ 64):

ԹճՆյ. *Պահպանեա... Հայր մեր...*

## ՇԱՐԱԿԱՆՔ Ս. ԶԱՏԿԻ

Նայեա ի մեզ և ողորմեա մեզ Քրիստոս, որ ունիս բազում գթութիւն։ Որ հայրդ ես որբոց, և դատաւոր այրեաց Քրիստոս, որ ունիս․։ Որ պսակիչդ ես սրբոց, լուր և մեզ աղօթիւք սոցա Քրիստոս, որ ունիս․։

Մայր և կոյս աղախին Քրիստոսի որ բարեխօսդ ես միշտ աշխարհի․ քեզ երանեն ամենայն ազինք։ Մաքուր աղաւնի և հարսն երկնից Մարիամ, տաճար և աթոռ Աստուծոյ բանին․ քեզ․։ Քեւ հաճեցան իմանալիքն ընդ հողեղէնքս, և քեւ մերձեցաք ի փայտըն կենաց․ քեզ․։

Յաղթող և զնոր օրհ․․․ (Տե՛ս էջ 95):

* * *

Ուրախ լեր սուրբ եկեղեցի, քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց ըզքեզ խաչիւն իւրով․ և զարդարեաց զամուրըն քո սքանչելի փառօքն

խուրավք։ Խընդա յոյժ դուստըր Սիոնի· քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերըստին քո նորոգմամբ, և Թագաւորն երկնաւոր հաճեցաւ բնակիլ ի քեզ։ Ընդ դասս երկնաւոր զօրացըն վեր առեալ տօնեմք քեզ այսօր զանդադար փառաւորութիւնս. ուրախ լեր հարսն անարատ անքընին քո խորհըրդով։

Փառք Հօր:

Դասք հրեշտակացըն վայր իջեալ յերկնից երգեն ասելով, հրաշալի ձայնիւն եղանակելով երգեն զերգս օրհնութեան երրեակ սըրբասաց ձայնիւ։

Այժմ եւ:

Ուրախ լեր բերկրեա հարսնացեալ սուրբ եկեղեցի, պայծառացո զմանկունըս քո յօրհնաբանութիւն ծագողին ըղշող լուսոյ ի քեզ մայր եկեղեցի։

*
* *

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ մարմնացար վասըն մեր ողորմեա մեզ (Երիցս)։

* * *

Ալէլուիա, ալէլուիա։ Կացցէ դըշխոյ ընդ աջմէ քումմէ․ ի հանդերձըս ոսկեհուռըս զարդարեալ և պաճուճեալ։

* * *

Թագ պարծանաց արշակունեաց կազմեալ․ առաքելական վարուք տէր Գրիգորիոս․ յօրինեցար բազմագոյն ակամբք հանդիսից նահատակութեան, վայելուչ պըսակ հիւսեալ, սուրբ եկեղեցւոյ։

* * *

Ով երանելիդ ամենեցուն տիեզերական իշխանութեամբ ընկալար ի Քրիստոսէ ըզթագ պարծանաց, ո՛վ Աբգար մեծ թագաւոր, վասըն մեր բարեխօսեա առ թագաւորն երկնաւոր։ Որ քոյին սուրբ աղօթիւքըդ վանեցեր ըզթըշնամին կոխելով ըզսատանայ ընդ երկնայինսըն դասեցար․ ո՛վ Տրդատ մեծ թագաւոր․։

Փառք Հօր: Այժմ եւ:

*Ուստի և մեք հաւատացեալքս տօնեմք զձեր յիշատակս, օրհնութիւն առաքելով ըզձեզ պըսակողին. ո՛վ Տրդատ մեծ թագաւոր և Աշխէն մեծ թագուհի, վասըն մեր բարեխօսեցէք առ Թագաւորն երկնաւոր։*

* * *

*Այսօր մարտիրոսաց դասքըն ցընծացեալ բերկրին ընդ առաջ Տեառն Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ։ Զայն ի յերկնից վըկայեալ ասէ. եկայք օրհնեալըք Հօր իմոյ, ժառանգորդք երկնից խորանացն։ Լըցէք ըզտեղի անկելոցն ապըստամբողական թըշնամւոյն, որ ի յերկնից վայր անկեալ։*

*Մայր և կոյս աղախին* (Տե՛ս էջ 199)։

*Յաղթող և զնոր օրհ...* (Տե՛ս էջ 95)։

Փառք Հօր: Այժմ եւ:

*Անթառամ պըսակըն ձեզ աւանդեալ մընայ քան զականըս պատուականըս գերագոյն հրաշիւք. որք վանեալ ըզթըշնամին խորտակեցիք։*

# ՑԱՆԿ
## ԳԼԽԱՒՈՐ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒ


| | Էջ |
|---|---|
| Կարգ Շաբաթ երեկոյեան | 6 |
| Կարգ Կիրակի առաւօտեան | 17 |
| Կարգ Իւղաբերից | 40 |
| Անդաստան | 63 |
| Ս. Պատարագ | 68 |
| Մեղեդիք | 73 |
| Թափօրի շարականք | 75 |
| Ժամամուտք | 87 |
| Ճաշու շարականք | 89 |
| Սրբասացութիւնք | 103 |
| Արեւագալի ժամ | 122 |
| Խաղաղական ժամերգութիւն | 134 |
| Եկեսցէ | 147 |
| Հոգեհանգստեան շարականք | 158 |
| Ծաղկազարդի շարականք | 162 |
| Դռնբացէքի շարականք | 164 |
| Ոտնլուայի երգեր | 168 |
| Խաւարման Գիշերի երգեր | 175 |
| Ջրօրհնեաց երգեր | 192 |
| Ս. Պսակի շարականք | 197 |

# ԱՅԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ


| | Էջ |
|---|---|
| Յառաջաբան | Բ |
| Յորդոր | Գ |
| Ալէլուք յարութեան | 35 |
| Անեղ խորհուրդ | 161 |
| Աղաղակեցէք | 71 |
| Աղբերացն անապական | 190 |
| Այսօր անճառ | 175 |
| Այսօր զանսկիզբն բանն որ | 164 |
| Այսօր ժողովեալ սրբոցն | 79 |
| Այսօր կանգնեցաւ | 170 |
| Այսօր մարտիրոսաց դասքն | 199 |
| Այսօր յարեաւ ի մեռելոց | 77 |
| Անդաստան | 63 |
| Աշխարհ ամենայն | 25 |
| Ապրեցո զիս Տէր | 8 |
| Առաւօտ լուսոյ | 19 |
| Առաքեցար ի Հօրէ | 83 |
| Առաքելոյ աղաւնոյ | 78 |
| Ասասցուք | 53 |
| Արդ՝ եկայք ամենեքեան | 70 |

Արեւագալ 122
Արի, Տէր, օգնեա մեզ 42
Բազմութիւնք հրեշտակաց 103
Բարբառելով զէրի էլին 188
Բարեխօսութեամբ մօր քո եւ կուսի 82
Գըթա՛ Տէր 159
Դաս արա՛ ինձ, Աստուած 72
Եղիցի (Իւղաբերից երգ) 41
Եղիցի (Նորաստեղծեալ-էն առաջ) 60
Ետուն ըմպել 187
Երգք Իւղաբերից 42
Երգք *Փառք ի բարձունս*-էն ետք 49
Զանապական կոյսն Մարիամ 82
Զարհուրեցան զօրք երկնային 191
Զգալուստ քո Քրիստոս 163
Զողորմութեան քո զդուռն բա՛ց մեզ 167
Զուարճացեալքս 45
Էլից զօրէնսն Մովսիսի 177
Ընդ յուսափայլ միաշաբաթին 83
Ընկա՛լ քաղցրութեամբ 147
Ընտրեալդ յԱստուծոյ 73
Թագաւոր գոլով քո յաշխարհ 162
Թագաւոր փառաց քեզ սպասեսցուք 167

Թագ պարծանաց 198
Ժամամուտ Զատկի 88
Ժամամուտ Ծննդեան եւ Աստուածածնի 87
Ժամամուտ յարութեան Կիրակիներուն 87
Ժողովեալքս ի հրաժարումն 160
Ի գերեզմանն յարուցելոյն 74
Ի գերեզմանն քո կանխեցին 84
Ի խաչանիշ փայտէն 85
Իմաստուն կուսանքն 165
Ի յարութեան յաւուր գալստեան փրկչին 163
Ի վերին Երուսաղէմ 161
Ի քէն հայցեմք բազումողորմ 15
Լոյս զուարթ 12
Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար 76
Խաղաղական ժամերգութիւն 134
Խաղաղութեամբ յայս եւ
ի սոյն ննջեսցուք եւ զարթիցուք 135
Խնամով սիրոյն 178
Խնդրեսցուք հաւատով 67
Խոնարհեցո՛ 6
Խորհուրդ մեծ 75
Կարգ Ջրօրհնեաց 192
Համբարձաւ Տէրն մեր յերկինս 78

| | |
|---|---|
| Հաւատամք | 99 |
| Հաւատով խոստովանիմ | 151 |
| Հրաշակերտ եւ զօրեղ | 81 |
| Հրեշտակային | 104 |
| Ճաշու շարական Զատկի | 89 |
| Ճաշու շարական Խաչի | 95 |
| Ճաշու շարական Ծննդեան | 93 |
| Ճաշու շարական Հոգեգալստեան | 93 |
| Ճաշու շարականք Յարութեան | 89 |
| Ճաշու շարական Վարդավառի | 94 |
| Ճաշու շարական Վերափոխման | 95 |
| Ճառագայթ փառաց էին | 180 |
| Մայր եւ կոյս աղախին | 197 |
| Մայր Սուրբ | 57 |
| Մարմնացեալդ | 76 |
| Մեղք իմ բազում են յոյժ | 166 |
| Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ | 72 |
| Յամենայն ժամ օրհնեմք | 193 |
| Յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն | 86 |
| Յիշեա՛, Տէր, զպաշտօնեայս քո | 128 |
| Յիշեսցուք ի գիշերի զանուն քո Տէր | 17 |
| Յոյս իմ ես դու, Տէր | 166 |
| Յորժամ եկն Յիսուս | 162 |

Նայեա՛ ի մեզ եւ ողորմեա մեզ 197
Նշանաւ ամենայաղթ 81
Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց 135
Նորաստեղծեալ 65
Նորոգող տիեզերաց 186
Շնորհեա՛ մեզ Տէր արթնութիւն 164
Ողորմեա՛ ինձ Աստուած 168
Ողորմեսցի քեզ Աստուած հզօրն 70
Ով երանելիդ ամենեցուն 199
Ով զարմանալի 195
Ո՛վ է որպէս 103
Որդի Աստուծոյ կենդանւոյ 149
Որ զանարատ բազուկս քո 80
Որ ի լերինն այլակերպեալ 79
Որ յանէից ստեղծող գոյից 158
Որ վերօրհնիս 77
Որք որ փափաքին 173
Ուրախ լեր Ս. Եկեղեցի 197
Ձար կապանաց 182
Պատարագ 68
Սաղմոս Մեծ Պահոց Կիրակիներուն 97
Սաղմոս Յինանց Կիրակիներուն 98
Սիրտ իմ սասանի 173

Սուրբ Աստուած 59
Սուրբ եկեղեցեաւս 71
Սուրբ ես Տէր զօրութեանց 13
Սուրբ զԱստուածածինն 69
Սուրբ նզնաւորօքն աղաչեսցուք զՏէր 128
Վասն հանգուցեալ հոգւոցն աղաչես. 146
Վարանիմք ի մեղաց 75
Վերաձգողն երկնից 174
Տարածեալ 184
Տեսիլ փայլակնաձեւ 85
Տէրունական աղօթք 5
Ցոյց մեզ, Տէր, զողորմութիւնս քո 61
Ցօղեա՛ յիս մշտկաւ 168
Փառաբանակից Հօր Որդի 86
Փառք ի բարձունս 46
Քահանայք եւ ժողովուրդք 160
Քարոզք Գիշերային ժամու 30
Քարոզ Իւղաբերից 40
Քրիստոս յարեաւ... Ընդ արշալոյսն 84


ՎԵՐՋ